




Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Մույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Գրողապետներ բոլոր լեզուների, միացե՛ք!

ՆԱԴԻՐ ՄԱՄԵՂԼԻ

БИБЛИОТЕКА
УНИВЕРСИТЕТА
ВЫСШЕГО ОБРАЗОВАНИЯ
Академии Наук
СССР

ՄԱԼՅԱՐԻԱՆ ԱԴՐԲԵԶԱՆՈՒՄ

— ՅԵՎ —

ՆՐԱ ԴԵՄ ՄՂՎԵԼԻՔ

ՊԱՅՔԱՐԸ ՅԵՐԿՐՈՐԴ ՀՆԳԱՄՅԱԿՈՒՄ

Ա. ԶԵՐՆԵՇԻ—1933

616.936

Մ-22

30 JUL 2010

Գրականությունը բոլոր յերկրների, միացեր:

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ОБОЗНАЧЕНИЯ
Академии Наук
СССР

ՆԱԴԻՐ ՄԱՄԵԴԼԻ

ՄԱԼՅԱՐԻԱՆ ԱԴՐԲԵԶԱՆՈՒՄ

ՅԵՎ

ՆՐԱ ԴԵՄ ՄՂՎԵԼԻՔ
ՊԱՅԲԱՐԸ ՅԵՐԿՐՈՐԴ ՀՆԳԱՍՅԱԿՈՒՄ

(Զեռնարկ մայրաքաղաքի դեմ
պայքարող ակտիվի համար)

ԱԶԵՐՆԵՇԻ—1932

Խմբագիր — 1. Դանիելյան
2. Ամիրխանյան
Թարգմանիչ — 3. Ամիրխանյան
Տեխ. խմբագիր — 4. Թադևոսյան

ԱՌԱՋԱԲԱՆ

Մալյարիայի և նրա դեմ պայքարի կազմակերպման խնդիրների ուսումնասիրությունը ԱՍՍՀ-ում առաջին անգամ լայն մասշտաբով սկսվել է Նորհրդային իշխանության որոշ: Ցարական ռեժիմի ժամանակ վոչ մի փորձ չի արված մալյարիայի դեմ լուրջ աշխատանք սկսելու:

Մուսավաթական կառավարությունը նույնպես վոչինչ չի արել և չի ել մտածել անելու:

Ցարական ռեժիմի և մուսավաթական իշխանության ամբողջ գոյության ընթացքում մինչև անգամ փորձ չի արված կազմակերպել վորեն գիտական հիմնարկություն՝ մալյարիայի ուսումնասիրության և նրա դեմ պայքարի կետեր ստեղծելու համար:

Նորհրդային իշխանությունն իր գոյության հենց առաջին թակ որեցից լուրջ ուշադրություն դարձրեց մալյարիայի դեմ պայքարելու հարցերին:

Նորհրդային իշխանության պատրաստած գիտական ուժերը և գիտական աշխատողները, Մանրեյաբական և Գիգիյենայի Համալսարանն ու Խնստիտուտը, հսկայական կլինիկական ուսումնասիրությունների հիման վրա և բազմաթիվ գիտա-հետախուզական երապեղիցիաների միջոցով՝ մանրակրկիտ կերպով ուսումնասիրեցին մալյարիան ԱՍՍՀ-ում և այսպիսով մտցրին գիտության մեջ խոշոր գանձ՝ մալյարիայի մասին: Սրա հետևանքով, ներկայումս գոյություն ունի ԱՍՍՀ-ի առանձին ուսումնական մալյարիայի վարակի և նրա դեմ ծավալուն պայքար վարելու մեթոդների պարզ պատկերը:

Բուժա-պրոֆիլակտիկ ցանցի աճումը, մի ամբողջ շարք տրոպիքական կայանների բացումը, անհամեմատ ավելի վարակված մի քանի կետերում մալյարիայի դիսպանսերների և կետերի կազմակերպումը, յուրաքանչյուր տարում դրամական հատկացումների աճումը (մինչև 688,000 ռ. 31 թ. և 2,592,000 ռուբլի 32 թ.), մի շարք հիգիո-տեխնիքական և պրոֆիլակտիկ ձեռնարկություններ, խինինի մատակարարման ուժեղացումը, սանիտարա-լուսավորչական աշխատանքի ծավալումը խոշորագույն դեր խաղացին մի շարք ուսումնական առողջացման, հարյուր հազարավոր մալյարիայով հիվանդների բժշկման և հիվանդությունների աստիճանաբար պակասեցման ընդավառում:

Ցերկրորդ հնգամյակում, սոցիալիստական շինարարության խնդիրները պայմանավորվում են հակամալյարական խոշորա-



60236-67

գույն ձեռնարկումներ և մալյարիայի լիակատար վոչնչացումը ՍՍՆՀ-ում: Ադր. ԿԿ(Բ) ԿԿ-ի բյուրոն իր 19/IV 32 Թ. վորոշմամբ, և Ժողկոմխորհը իր 17/IV 32 Թ. վորոշմամբ առաջադրում են բոլոր կուսակցական, տնտեսական, խորհրդային և արհեստակցական կազմակերպություններին՝ ՍՍՆՀ-ում մալյարիայի լիկվիդացիայի ասպարեղում վճռական միջոցառումների կոնկրետ ծրագրեր:

Այս վորոշումների հիման վրա մշակված և կանխագծված և յերկրորդ հնգամյակում ՍՍՆՀ-ում մալյարիայի դեմ պայքարի և նրա վերացման գլխավոր պլանը:

Այս պլանի կենսագործումը առաջադրում և վորոշակի շրջադարձ կատարել մալյարիայի դեմ պայքարող բոլոր կազմակերպությունների (ինչպես կենտրոնական, նույնպես և ռայոնական) աշխատանքները մեջ, պահանջում և զբաղվել այս պայքարի մեջ ամբողջ խորհրդային հասարակականությունը:

ՊԱՅՔԱՐԸ ՄԱԼՅԱՐԻԱՅԻ ԴԵՄ—ՍՈՑԻԱԼԻՍ-ՏԱԿԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՊՐՈԲԼԵՄՆ Ե

Համաշխարհային պրոլետարիատի հաստատուն, պողպատյա հարվածային բրիգադայի կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ ՍՍՀՄ-ի բանվոր դասակարգը հաջողությամբ հաղթանակելով կապիտալիստական տարերի դիմադրությունը, հաղթականորեն կենսագործում և սոցիալիստական շինարարությունը:

Համկոմկուսի(Բ) և նրա գլխավոր շտաբ կենտրոնական Կոմիտեի գլխավոր գծի անշեղ կիրառման հիման վրա՝ ամբակուռ լինելուց, համահիսարհային պրոլետարիատի առաջնորդ ընկ. Ստալինի ղեկավարությամբ կուսակցությունը և բանվոր դասակարգը ավարտելով առաջին հնգամյակը՝ ձեռք բերեցին հսկայական նվաճումներ խորհրդային յերկրի ինդուստրիալիզացիայի՝ ծանր արդյունաբերության վերելքի, արտադրության միջոցների արտադրության ասպարեղում, վորի հետևանքով ստեղծված և վողջ Ժողովրդական տնտեսության տեխնիքական վերակառուցման սեփական բաղա: Հետամնաց, բաժան-բաժան յեղած մանր գյուղատնտեսությունը մեքենայացած տեխնիկայի հիման վրա վերածվեց խոշոր սոցիալիստական տնտեսության:

1932/33 Թ. ավարտվում և զյուղատնտեսության համառարած կոլեկտիվացումը և դրա հիման վրա կուլակություն՝ վորպես դասակարգի՝ լիկվիդացիան:

Առաջին հնգամյակի համար, աջ և «ձախ» ուղորտունիզմի, հակահեղափոխական տրոցկիզմի, հաշտվողականության, փթած լիբերալիզմի դեմ անխնա պայքար մղելու պայմաններում, ջախջախելով նեպմանական տարրերի, կուլակության և նրանց հետ իր բախտը կապած բուրժուական ինտելիգենցիայի դիմադրությունը, կուսակցությունը և բանվոր դասակարգը սոցիալիստական շինարարության բոլոր բնագավառներում համաշխարհային պատմական հաղթանակներ տարան: Այս բանը չեն կարող ժելուել մինչև իսկ ամենից չարանենդ Թշնամիները՝ միջազգային իմպերիալիզմի և նրա սոցիալ-ֆաշիստական ագենտուրայի լազերից:

Հիմնվելով ձեռք բերած նվաճումների վրա՝ առաջին հնգամյակում կենսագործելով հարվածային բողքերիկյան տեմպեր, գլխավորելով բանվոր, կոլսոզնիկ, միջակ ու չքավոր մասսաների աճող ստեղծագործող ակտիվությունը, վորպես յերկրորդ հնգամյակի հիմնական քաղաքական խնդիր, կուսակցությունը առաջադրում և՛

«կայսալիսական ելեմենտների վերջնական վերացումն, դասակարգելի, դասակարգային արբերությունների յեվ շահագործումն սեղծող բոլոր պատճառների լիակատար վոլնյացումը, կայսալիզմի մնացորդների վերացումը եկոնոմիկայի յեվ մարդկանց գիտակցության միջից յեվ վաղ աշխատավոր բնակչության վերափոխումը —անդասակարգ սոցիալիսական հասարակարգի գիտակից յեվ ակտիվ շինարարները»:

Տեմպերի, բովանդակության և ծավալի տեսակետից ժողովրդական տնտեսության բոլոր ասպարեղներում ծավալող սոցիալիստական շինարարությունը՝ պահանջում է ԽՍՀՄ-ում սոցիալիզմ կառուցելու ընդհանուր նպատակի հիման վրա, վճռականորեն սոցիալիստական վերակառուցման յինթարկել առողջապահության գործը:

Յերկրորդ հնգամյակում, անդասակարգ սոցիալիստական հասարակարգի կառուցելու խոշորագույն ծրագրերը՝ առողջապահական մարմինների առաջ խնդիր է դնում —կենսագործել յերկրի կենդանի արտադրական ուժերի պաշտպանության, աճման, աշխատանքի արտադրականության բարձրացման, ուժերի ճիշտ բաշխման, աշխատանքային պրոցեսների բարձրացի-այի, աշխատանքային պայմանների և աշխատավորության կենսալի բարելավման մարքսիստ ձեռնարկումները: Առաջադրվում է առավելագույն չափերով լիցենզի հիվանդութունների և մահացման դեպքերը և լիակատար կերպով լիկվիդացիայի յինթարկել մի շարք պրոֆեսիոնալ, սոցիալական հիվանդութուններ և այլն:

Սոցիալիստական առողջապահության առաջ դրված այս խնդիրը պահանջում է վճռական, անխնա պայքար մղել մալյա-րիայի դեմ, նրա լիկվիդացիայի համար, վերոմիտե այս հիվանդութունն իր համաճարակ ընդլայնում և ծավալում, մահացումների քանակի և մարդկային որդանիքի վրա ազդելու տեսակետից հանդիսանում է սոցիալիստական-շինարարության խոշորագույն արգելակը:

ՄԱԼՅԱՐԻԱՆ ՎՈՐՊԵՍ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՉԱՐԻՔ

Մալյարիա հիվանդությունը հայտնի յե դեռևս նախնական ժամանակներից:

Յեղիպտական փաստաթղթերում 3-4 հազար տարի առաջ, հնագույն պատմական հուշարձաններում, պատահում ենք մալյարիայի մասին մի շարք արձանագրություններ:

Հոմերոսը «Իլիադա»-ում 2,800 տարի սրանից առաջ պատմում է Տրոյան պաշարող հունացիների մալյարիայով հիվանդանալու մասին: Մալյարիայի մասին արձանագրությունների մենք պատահում ենք նաև Հերոդոտի մոտ, ինչպես նաև Պլատոնի մոտ: Իսկ «մեդիցինայի հայր» Հիպոկրատը 2,350 տարի սրանից առաջ, սիստեմատիկացիայի և յինթարկում մալյարիա հիվանդության մասին բոլոր տվյալները, ապա նա առաջին անգամ մալյարիան անվանում է ճահճային տենդ և ընդգծում է այն փաստը, վոր ճահճոտ տեղերում ապրողները հաճախակի ունենում են մեծ և պինդ փայցախ (селезенка): Դիոդոր Սիցիլիացին մեր դրերից 2000 տարի առաջ հայտնաբերեց ճահճային հողում մալյարիան առաջացնող պատճառները:

Բայց չնայած նրան, վոր մալյարիան դեռևս հին ժամանակներից արդեն հայտնի է մարդկությանը՝ վորպես զարնուրելի ընաճնջող հիվանդություն, չնայած նրան, վոր մարդկությունը մերթ ընդ մերթ մոտեցել է մալյարիան ծնող պատճառների ճիշտ հասկանալուն, այնուամենայնիվ այդ հիվանդության գիտական հիմնավորումը տրվեց XIX դարի վերջին, Ալֆրեդ ֆրանսիական զինվորական բժիշկ Լավերանի կողմից, վորը գտավ մալյարիա ծնող միջատը —(պլազմոդի): Շարունակելով Լավերանի աշխատանքը, մի շարք գիտնականներ աստիճանաբար հայտնաբերեցին մալյարիայի գաղտնիքը: Այսպես, Գուլֆին տարբերեց 4-որյա մալյարիայի պլազմոդիան —3 որյա պլազմոդիայից, Մարկիսֆալան և Չելլին 1889 թվին գտան տրոպիքական մալյարիան առաջացնող մոծակը, Ռոսսը-ը 1898 թվին վերջնականապես ապացուցեց, վոր մարդու մալյարիայով վարակվելը հետևանք է մալյարիայի մոծակի կծկում: Այս բոլորի հիման վրա ստեղծվեց հակա-մալյարիական ճիշտ պայքար կազմակերպելու հնարագործությունը:

Դեռևս 1640 թվին Յեվրոպայում հայտնաբերվեց մալյարիայի դեմ պայքարելու համար նպատակային, հրաշագործ միջոց՝

Ամերիկայից բերված խինինի ծառի կեղեվը: Մակայն մալյարի-
այից բժշկվելու ճիշտ միջոցները մարդկությանը հաջողվեց
հայտնաբերել միմյան վերջին 35 տարվա ընթացքում:

Մալյարիան սոցիալական հսկայական նշանակություն ունե-
ցող, սոսկալի, բնաշնչող հիվանդություն է: Նա ծնունդ է առ-
նում յերկրագնդի այն մասերում, վորոնք վարակված են մալյա-
րիայի բացիլներով: Հսկայական քանակությամբ մարդիկ հի-
վանդանում և մահանում են այս հիվանդությամբ: Մրան գու-
մարվում և զգալի չափով մարդկանց աշխատունակության տևո-
ղական և մասնակի կորուստը, ինչպես նաև պետություն այն խո-
շոր ծախսերը, վորոնք կատարվում են մալյարիայից բուժելու և
նրա դեմ պայքարելու քնազավառում:

Մալյարիայով անհամեմատ վարակված շող և խոնավ կլիմա-
յով տրոպիքական և սուդ-տրոպիքական յերկրները հանդիսա-
նում են մալյարիայի հայրենիքը, բայց մալյարիան չի սահմա-
նափակվում այդ յերկրներում, այլ տարածվում է մինչև հեռա-
վոր Հյուսիս:

Մալյարիան իշխում է միջին Ասիայում, ամբողջ կենտրոնա-
կան Ասիայում, Հնդկաստանում, Միամում, Հարավային Չինաս-
տանում մինչև Հեռավոր Արևելքը, Հյուսիսային Ամերիկայի
Միացյալ Նահանգների մեծ մասում, Մեքսիկայում, արևելյան և
հարավային ծովամիջյա վայրերում, ինչպես նաև Հարավային
Ամերիկայի գետերի ավազաններում Աֆրիկայի մեծ մասում, Ավ-
ստրալիայի հյուսիս. ամերիկում, Յեվրոպայում, Իտալիայի մեծ
մասում, Իսպանիայում, Հունաստանում, Բուլղարիայում, Բելգիայի
մի շարք շրջաններում, Հոլլանդիայում, Հունգարիայում, Լեհաս-
տանում, Հարավ-Մլավիայում և ԽՍՀՄ-ի մի շարք շրջաններում:

Մալյարիայով անհամեմատ թույլ են վարակված Փրանսիան,
Գերմանիան և Անգլիան, հատկապես վերջինը, սակայն այս
դրությունը չխանգարեց վորպեսզի իմպերիալիստական պատե-
րազմի տարիներում այս յերկրներում ծայր առնեն նոր ուժեղ
հիվանդություններ:

Հնդկաստանում, հատկապես խոշոր գետերի ավազաններում,
մալյարիայի շատ ուժեղ եպիդեմիաներ են լինում: Այսպես, Հնդ-
կաստանի Պենջաբի գավառում 1908 թվին մալյարիայի տենդի
հետևանքով տեղի ունեցավ 3 միլիոնից ավելի մահացման դեպք:
Բրիտանական Հնդկաստանում, յուրաքանչյուր տարում մալյարի-
այից մեռնում են 1 միլիոնից ավելի մարդ, ՀԱՄՆահանգնե-
րում 1908 թվին մալյարիայով հիվանդների թիվը հասնում էր
մինչև 3 միլիոնի. Յեյունում 22/26 թթ. յուրաքանչյուր տարի
մալյարիայից բժշկվում էր մոտ 1 միլիոն հիվանդ: Պանամյան
ջրանցքը փորելու ընթացքում առաջին 8 տարում տարեկան մա-
լյարիայից մեռնում էին բանվորների $\frac{1}{3}$ մասը (1887 թվին մա-
հացան 17,995 հոգի, վորոնցից 15,726 հոգի նեղրեր): սրա հա-
մար ել անհրաժեշտ յեղավ ընդհատել աշխատանքները և վեց
տարի շարունակ մալյարիայի դեմ ծրագրված պայքար մղել:

1913 թվին Ֆիլիպյան կղզիներում մալյարիայով հիվանդա-
ցան 100,000 և մեռան 25000 հոգի:

Համաշխարհային պատերազմի ժամանակ, զինվորական մա-
սերում շտեմնված չափերով ուժեղացավ մալյարիան: Այսպես
որինակ՝—բալկանյան ֆրոնտում առանձին տարիներում մալյա-
րիայով հիվանդանալու դեպքերը հասնում էին մինչև 23,2%-ի,
իսկ տաճկական ֆրոնտում՝ մինչև 65%-ի:

Յեթե ընդունենք, վոր կապիտալիստական յերկրներում, հատ-
կապես մալյարիայով վարակված դաղութներում բուժական
հիմնարկությունների ցանցը վերին աստիճանի նեղ է, բնակչու-
թյան խոշոր մասը չի ստանում բժշկական ոգնություն, ինչպես
նաև այն փաստը, վոր վոչ բոլոր հիվանդներն են դիմում բժշ-
կական ոգնության, ապա բոլոր այն պաշտոնական թվերը, վո-
րոնք բերված են այստեղ, անհրաժեշտ է մի քանի անգամ մե-
ծացնել:

«Քաղաքակրթված» կապիտալիստների համար բնորոշ է պա-
նամայան ջրանցքի կտրվածքն անվանել «սպիտակների գերեզ-
մանոց», այդ այն ժամանակ, յերբ սպիտակների համեմատու-
թյամբ նեգրերի մահացման դեպքերը 7 անգամ ավելի է. սրանց
հաշվետուման համար նեղություն չեն քաշել և դրոբել են դիակ-
ներն ընդհանուր գերեզմանները:

ՄԱԼՅԱՐԻԱՆ ԽՍՀՄ-ՈՒՄ

Նախքան համաշխարհային պատերազմը ԽՍՀՄ-ի սահմաններում մալյարիայով անհամեմատ վարակված վայրերն էին՝ Կովկասը, հատկապես Կուրանի-Սեփ-ծովյան ափերը, Արաքս և Քուռ գետերի հովիտները, Թուրքեստան, Վոլգա գետի շրջակայքը, Վոլգայի ընթացքի ներքին և միջին մասերը և աննշան սահմանափակ վայրերը—կենտրոնական և հարավային նահանգներից Ուկրաինան և Ղրիմը:

Ճշտությունից հետո պաշտոնական վիճակագրության համաձայն միմիայն Կովկասում 1896—1913 թվին ավել կամ պակաս, աննշան տատանումներով տարեկան արձանագրվել է 3,633,656 հիվանդացման դեպքեր: Պատերազմից հետո ԽՍՀՄ-ում շնորհիվ տնտեսական քայքայվածության, քաղաքացիական կռիվների, մասսայական տեղաշարժերի մալյարիան սկսեց տարերայնորեն աճել. և 21 թվին 238,659 հիվանդության դեպքերի դիմաց 23 թվի տվեց 5,962,557 դեպք, սրա հետ միասին նա ամենուրեք ուներ ավելի սուր վարակիչ ընդլայնված, բազմաթիվ մահացման դեպքեր: Մինչև այդ մալյարիայից առողջ նորանոր ռայոններ ընդգրկելով, նա զրավեց ամբողջ յերկիրը, ներառյալ հյուսիսային շրջանները: Մալյարիայի այս տարրերնակ արշավի ժամանակ, Արևմտահայկ նահանգում հիվանդությունների դեպքերը նախապատերազմյանի համեմատությամբ՝ աճեցին 17 անգամով, իսկ 1922 թվին 26 անգամ ավելի: Կոտլասի շրջանում 1921 թվին հիվանդությունն ընդգրկեց բնակչության 72,5%-ը, զերմանական հանրապետության մեջ, Վոլգայի ընթացքով ամբողջ բնակչության 25%-ը: Ամբողջ ԽՍՀՄ-ում հիվանդացման մալյարիայով 14 միլիոն հոգի: 1923 թվին ԽՍՀՄ-ի ազգաբնակչությունը մալյարիայի հետևանքով կորցրեց 75—112 միլիոն աշխատանքային, բանվորական ու, իսկ ժողովրդական տնտեսության մի քանի բնադավառներն ունեցան հսկայական կորուստներ: Այսպես որինակ՝ տորֆի արտադրության մեջ հիվանդացավ բանվորների 31,2%-ը, Դադաստանի ձկնորսարաններում՝ բանվորների 65%-ը, գետերի հունով փայտ տեղափոխող բանվորների միջև 72,5%-ը (Լ. Դորբեյցերի տվյալներով):

Հետևյալ տարիներում, մալյարիան սկսեց նվազել՝ աստիճանաբար մոտենալով մինչև պատերազմյան շրջանի թվերին:

Պարմիր բանակում մալյարիայով հիվանդանալու դեպքերը 1921 թվին հասնում էր ամբողջ կազմի մինչև 3,3%-ի, 1922 թ.

10,6%-ի, 23 թվին—14,2%, վորից հետո %%-ներն արագ կերպով իջնում են, հասնելով 1929 թվին մինչև 2,8%-ի:

Մալյարիայի այս արշավի վերելքի գլխավոր պատճառներն էին՝ մարդկանց խոշոր մասսաների միասնական տեղաշարժեր և այսպիսով վարակի տեղափոխումն առողջ ռայոնները, շրաբաշխման սխտեմի քայքայված և անխնամ վիճակը, վորի հետևանքով հսկայական տարածություններ ծածկվեցին ճահիճներով, խինիսի բացակայությունը, բուժակայանների ցանցի աննշան լինելը և այլն:

Այս փաստն ակնբախ ապացուցում է, վոր մալյարիան չի սահմանափակում իր ծավալը հատուկ տեղերում միայն, այլ պայմանների համապատասխան փոփոխություններով, նա տարածվում է ամենուրեք: Այս տարի անհամեմատ մալյարիայով վարակված շրջանը, պայմանների բարելավման հետևանքով, հետագա տարում կարող է լավանալ և ընդհակառակը, միանգամայն առողջ շրջանը պայմանների վատանալու հետևանքով՝ կարող է զուռնալ մալյարիայի վայր:

Ժողովրդական տնտեսությանը մալյարիայի հասցրած խոշորագույն վնասների մասին կարող է վկայել ապահովագրվածների հիվանդանալու մասին յեղած տվյալները: Այսպես որինակ՝ 1925 թվին յերկաթուղային տրանսպորտի ապահովագրվածների մեջ հիվանդության դեպքերը հավասար են 7,8%-ի՝ 61,2 որ միջին տեղություններ, գյուղատնտեսության մեջ աշխատող ապահովագրվածներ 8,8%-ը—70,4 որ միջին տեղություններ, փայտամշակման ասպարիզում 9,9%—94,7-որ, նավթարդյունաբերության ասպարիզում 23,8%—220,9 որ միջին տեղություններ, իննական քիմիական արդյունաբերության ասպարիզում 12,8%—141,1 որ, նավթամշակման ասպարիզում՝ 30,9%—287,7 որ միջին տեղություններ:

1925 թվին մալյարիայով հիվանդանալու միջին տեղությունը կազմում էր մոտավորապես 10 որ:

Յեթե ամբողջ Միության մեջ մալյարիայի հետեվանքով տարեկան հաշվենք 160 միլիոն բանվորական ուղվա կորուստ, նշանակում է պետությունը մի տարվա ընթացքում կորցնում է 300000 մարդու արտադրական աշխատանք, նրանց աշխատավարձի վճարման համար մոտ կես միլիարդ ուրբի, չհաշվելով դեռևս այն ծախսերը, վորոնք կատարվում են բուժական ցանցի պահպանության և բժշկելու վրա:

ՄԱՆՅԱՐԻԱՆ ԱՊՐԵԶԱՆՈՒՄ

Մալյարիայի տեսակետից Ադրբեջանը հանդիսանում է կլամիդիայի, շին և միջին դարերում Ադրբեջանի բնակչության հաստատուն մի շարք ազգութայիններ և ցեղեր կորել և անհետացել են մալյարիայից:

Պետրոս Լ-ի գործերը գրավելով Մախաչ-Կալան 18-րդ դարի սկիզբներում, պատմական տվյալների համաձայն, ուժեղ կերպով տուժելով մալյարիայից, խոշոր քանակությամբ վոչնչացան: Ցարական զորքերի առանձին դարձրածներ, վորոնք բնակեցված էին Ադրբեջանի տարբեր ռայոններում, կորցրին իրենց կազմը մինչև 100%-ով:

Իդուր չեր վոր ուն բժիշկների ընկերությունը, վորը կազմակերպվեց 1904 թվին, ի հավերժացում Պիբոգովի անվան, հանձնա իր մալյարիայի հանձնաժողովի, նույն թվերին ուղարկեց իր երասպեղիցիան ուսումնասիրելու մալյարիան Ադրբեջանում՝ Յեվլախ կայարանի ռայոնում: Բժիշկ Տ. Յե. Խարազովը, վորը մասնակցում էր այս երասպեղիցիային, իր զեկուցման մեջ ընդգծում է, վոր այս յերկաթուղային կայարանի 371 ծառայողներից՝ 78,2%-ը հիվանդ է մալյարիայով, վորն խոշոր չափով ազդում է բանվորական ուժի հոսունություն վրա: Երա զեկուցումից մենք տեղեկանում ենք, վոր հարևան կայարաններում 1902 թվին հուլիս, ոգոստոս և սեպտեմբեր ամիսներին, յերկաթուղայինների մալյարիայով հիվանդանալու զեպքերը հասել են՝ Չաղալի՝ 82,9%-ի, Դալ-Մամեդի՝ 80,4%, Կյուրյակ-Չայ՝ 100%, Դերան՝ 54,7% Մինգեչաուր՝ 74% Յեվլախ՝ 100%, Մալայի՝ 66,7, Լյակի՝ 87,3%, Ալիքենդ՝ 53,3%, Ուջարի՝ 100%, Բարգուշեա՝ 49,2%: Այս կայարաններում ընդհանրապես 1080 յերկաթուղայիններից հիվանդացել են 1051 հոգի, կամ 97,1%-ը: Խոշոր չափով մեքենայական պրոֆիլակտիկայի շնորհիվ երասպեղիցիային հաջողվեց Յեվլախ կայարանում մալյարիան կրճատել կիսաչափ:

Բժիշկ Ա. Ի. Շինգարյովան, 1912 թվին ուսումնասիրելով Մուղանուլ ուն զաղթականներից 2910 հոգու, արձանագրում է մալյարիայով հիվանդների քանակը՝ 2365 հոգի կամ 81,3%, վորոնցից առողջների մեծամասնությունը առաջներում հիվանդացել են մալյարիայով:

Ադրբեջանի պետական համալսարանի պրոֆեսոր Պ. Պ. Ջերոդովսկին, վոր Ադրբեջանի մալյարիայի մասին տվել է մի շարք խոշոր աշխատություններ, իր բազմաթիվ գիտական երասպեղիցիանների հիման վրա տալիս է մի շարք ռայոնների—21-22 թվին վարակի և փայցախների (փայցախային ինդեքս) վիճակի հետևյալ պատկերը.—

1. Հյուսիսային Մուղան—հիմնական ազգաբնակչություն 79,6% —ռուսներ—79,6%.
2. Հարավային Մուղան—հիմնակ. ազգաբնակչություն 71,1% —ռուսներ—56,3%.
3. Սալյանի շրջան—հիմնական ազգաբնակչություն 64,9%.
4. Լենքորանի հյուսիսային մասում—հիմնական ազգաբնակչություն 80,9—ռուսներ—64,5%.
5. Հարավային Լենքորան—հիմնական ազգաբնակչություն 67,1% —ռուսներ 50,0:

Նա բերում է Յելիզավետպոլի նահանգի 1901 մինչև 1910 թ. տվյալները, վորի համաձայն՝ վիճակագրվածներից այս ժամանակաշրջանում 1,068,285 հիվանդներից 298,183 հոգի մալյարիայով հիվանդներ են: Անկասկած, այս տոկոսն աննշան բուժակայանների ցանցի պայմայններում՝ պակասելով է:

«Ադրբեջանի մալյարիայի բնույթի մասին, 1920 թվին բանակում տեղի ունեցած եպիդեմիայի տվյալներով» աշխատության մեջ Պ. Փ. Ջերոդովսկին բերում է հետաքրքիր տվյալներ: Այսպես որինակ 5 ըր բուժական հիմնարկության ամբողջ կամանդան, ընդհանուր կազմով՝ 450 հոգի աշխատելով ամառային սեզոնում Յեվլախում և հարևան ռայոններում, հիվանդացել է մալյարիայով համարյա 100%-ով: Բազմի զինվորական հիվանդանոցներում, այս շրջանում վիճակագրված էին 21,920 հոգի: Բանակում մալյարիայով հիվանդանալու սկիզբը համարվում է մայիսի յերկրորդ կեսը. բայց հիվանդությունն եպիդեմիական բնույթ է ընդունում, սկսած հունիսից:

Հետագայում, աստիճանաբար հիվանդություններն աճելով սեպտեմբերին և հոկտեմբերին հասնում են մաքսիմումի. իսկ նոյեմբերին արդեն նվազում են կիսով չափ. զեկտեմբերին մնում է նոյեմբերյան կորագծի աստիճանը: Բազմի զինվորական հիվանդանոցներում վիճակագրվածներից մեռել են 646 հոգի կամ 2,9%-ը. մահացումները սեպտեմբերին հասնում են մաքսիմումի՝ 4,6%-ի: Յեվլախ—Աղդաշ ռայոնների մալյարիկների մահացումները՝ հասնում են 7,6%-ի:

Սոցիալական Գիդիյենայի Ինստիտուտի տվյալներով, վորոնք կազմված են ամբուլատորիաներին և մալյարիայի կետերին արված առաջին դիմումների վիճակագրության հիման վրա, 1921 թվին ԱՍՆՀ-ում մալյարիայով հիվանդների քանակը ներկայացնում էր հետևյալ պատկերը.—

1921 թ. 40,542
1922 թ. 96,799
1923 թ. 143,596
1924 թ. 200,490
1925 թ. 240,546
1926 թ. 255,212

1927 թ. 272,698
1928 թ. 289,517
1929 թ. 397,080
1930 թ. 285,041
1931 թ. 299,093

(10,000 ազգաբնակչությանը հինգ 1157):

Այդ իսկ տվյալներով, վերոնշյալ ընդգրկում են հիվանդությունները նույնպես Բագու քաղաքում—Բագվում հիվանդությունների վիճակագրության պատկերը հետևյալն է.—

1921 թ. 21,698
1922 թ. 21,722
1923 թ. 32,491
1924 թ. 22,455
1925 թ. 46,068
1926 թ. 40,276

1927 թ. 25,592
1928 թ. 28,870
1929 թ. 29,390
1930 թ. 31,250
1931 թ. 34,841

Այս վիճակագրական տվյալներն անշուշտ պայմանական են և չեն կարող բնութագրել Ադրբեջանի ազգաբնակչության վաղակազմությունը:

Այդ տվյալներն ընդգրկում են միմիայն այն կետերի տեղեկությունները, վերոնշյալ իր ժամանակին տվել են տեղեկությունները: Այդ տեղեկությունների մեջ չեն մտնում այն հիվանդությունների դեպքերը, վերոնշյալ ժամանակ ազգաբնակչությանը չի դիմել բուժական մարմինների ոգնությունը: Իսկ 29 թվի և 31 թվի 8 ամսվա տեղեկությունները կազմակերպված են եպիդեմիական նախնական տեղեկությունների հիման վրա: Բագու քաղաքի տվյալների մեջ չի մտնում Բագվի յերկաթուղային հիվանդանոցի և ջրային տնտեսության ցանցի առողջապահական մարմինների տեղեկությունները: Վերջապես մալյարիայով հիվանդության դեպքերի աճումը պետք է բացատրել վոյ թե նրա ուժեղացմամբ, այլ այդ վիճակագրող ցանցի լայնությունը: Ադրբեջանի 49 ուսյուններից, մալյարիան տարածված է 41 ուսյուններում: Այս թվից 1 միլիոն ազգաբնակչությամբ 20 ուսյուններ ուժեղ կերպով վարակված են մալյարիայով: Մնացած ուսյունները մալյարիայով վարակված են թույլ և միջին չափերով:

Բազմաթիվ գիտական եքսպերիմենտների և տրոպիքական կայանների հետազոտությունների տվյալներով՝ 300,000 հիվանդների բուժմանը մալյարիային ինդեքսն ամբողջ Ադրբեջանում տատանվում է 54% մինչև 89%: Ադրբեջանի ազգաբնակչության մոտ 60%-ը կարելի չէ հաշվել մալյարիայով հիվանդացած: ԱՍԽՀ-ի մալյարիայի շրջանները գլխավորապես դասվում են հանրապետության տերիտորիայի ստորին մասերում՝ սկսած Վրաստանի սահմաններից՝ վերջացրած Կասպից ծովով, Բուռ և հարեվան գետերի հոսանքներով: Այս գետերը դարձան նախկին հեղեղների ժամանակ իրենց տեղմային ջրերով ստեղծում են հսկայական ճահճուտներ, վերոնշյալ դառնում են մալյարիայի մոծակի բազմացման համար նպաստավոր վայրեր:

Ներգրավելով Փոլիի յերկաթուղային կայարանից սկսած բոլոր բամբակային ուսյունները՝ մինչև Կասպից ծովը, ստեղծելով սուր ներգործող վարակ Մուղանում, ուժեղ մալյարիայի գոտին ձգվում է Ալշերոնյան թերակղզուց՝ նորից յերկաթագծի ուղղությամբ մինչև Դեբեդենտ:

Այդպիսի տերիտորիալ ծավալ ընդունելով մալյարիան առավել քան արգելք է հանդիսանում ժողովրդական տնտեսության կարևոր բնագավառների՝ սրահայրսի, բամբակային կուլտուրայի, ձկնորդյունաբերության ասպարեզում, ուժեղ կերպով ազդելով նրանց անման վրա:

Մյուս գումարվում է նույն հիվանդությունների համաճարակ բնույթը և անհամեմատ սուր վարակիչ ընթացքը, վերջին տեղի յե ունենում աշնանը՝ տնտեսական աշխատանքների ամենապատասխանատու շրջանում, դուրսագրվում է բամբակահավաքի կամպանիային, հացամթերմանը, աշնան ձկան վորսին, աշնանային-ձմեռային տեղափոխություններին և դպրոցական պարապմունքների սկսելուն:

Այս իսկ պատճառով մալյարիայի դեմ մղվող պայքարը պայքար է բամբակի, սրահայրսի, յերկի ինդուստրիայի համար, սոցիալիզմի կառուցման, կուսակցության գլխավոր գծի կենսագործման համար:

ՄԱԼՅԱՐԻԱՅԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԵԼՈՒ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Բոլորը գիտեն, վոր մալյարիան սարսափելի հիվանդություն է: Յուրաքանչյուրն իր շրջապատում կարող է տեսնել հսկայական քանակությամբ մալյարիայով հիվանդ մարդկանց: Դրա համար ել ինքնատիքյան աղանդ է այն քայքայիչ ազդեցությունը, վորը թողնում է մալյարիան մարդկային օրգանիզմի վրա: Բայց ինչ է մալյարիան, ինչպես են մարդիկ նրանից վարակվում, ինչպես կարելի չէ պաշտպանվել նրանից և ինչպես պայքարել նրա դեմ, շատ շատերը չգիտեն: Մինչդեռ քեզմոտե անդրեյու համար անհրաժեշտ է նրան լավ ճանաչել:

Շատ շատերը, դժբաղդաբար նաև մեր ափսիքը, վորը մալյարիայի դեմ պայքարելու ֆրոնտում պետք է լինի առաջին դիրքերում, կարծում են, վոր մալյարիան տարածվում է հում ջրի, կերակուրի, սեխի, մրգերի միջոցով, մալյարիայի արտաշնչածը շնչելու միջոցով և այլն:

Այսպես, խոշոր բամբակային ռայոնի գործկոմի նախագահի հետ զրույց ունենալու ժամանակ, — այն հարցին, հիվանդացել է արդյոք նա մալյարիայով թե վոչ՝ նախագահը համոզված հայտարարեց՝ «Ինչպես չես կարող եմ հիվանդանալ մալյարիայով, յերբ յերեք սեխ չեմ ուտում և ամեն օր մի բաժակ կոնյակ եմ խմում»:

Վոչ միայն շրջանային գործադիր կոմիտեների ստորին ողակների ղեկավարներին, այլ և յուրաքանչյուր կոլխոզիկին՝ կոլխոզուհուն, գյուղացիական, պիտներին, հոկտեմբերիկին անհրաժեշտ է իմանալ, վոր մալյարիայով վարակվելը տեղի է ունենում մի միայն մալյարիայի մոծակի՝ անոֆելեսի կծելուց, վորը կծելու հետ միասին մտցնում է մարդկանց օրգանիզմի մեջ մալյարիայի պարազիտներ (պլազմոդիա):

Կարելի չէ ապրել ճահճային տեղերում, խմել չեղացած ջուր՝ մինչև իսկ մալյարիայի մոծակի ձվերի և թուփուկների հետ միասին, ուզածի չափ ուտել սեխ և միրգ սակայն չհիվանդանալ մալյարիայով: Միայն անհրաժեշտ է զգուշանալ մալյարիայի մոծակի կծելուց:

Ընդհանրապես չի հանճարարվում հում ջուր խմել և միրգ ուտելը, վորովհետև դրանց հետ միասին մարդու ստամոքսը և աղիքային տրակտը մտնում են պարազիտներ, վորոնք առիթ են

դառնում տարբեր հիվանդությունների, իսկ կոնյակը և գինին չպաշտպանելով մալյարիայից՝ առիթ են դառնում ալկոհոլիզմի և քայքայում են մարդու օրգանիզմը: Մալյարիայի տարածման, սկզբնավորման աղբյուրը մի կողմից հանդիսանում է մալյարիայով հիվանդ մարդը և մյուս կողմից՝ մալյարիայի մոծակը:

Մալյարիայով հիվանդ մարդուն կծում է առողջ մոծակը, վորը արյան հետ միասին ծծում է և մալյարիայի պարազիտներ, առաջին հերթին վարակվում է ինքը, ապա կծելով առողջ մարդկանց՝ վարակում է նաև նրանց:

Այս իսկ պատճառով, հակա-մալյարիական պայքարում կարևոր տեղ պետք է զբաղի նաև առողջ մոծակի հիվանդ մարդուց վարակվելու հնարավորությունների վոչնչացումը: Վորտես բնորոշ որինակ, կարելի չէ բերել հետևյալ փաստը: Իոցենտ Իսմայիլ Սխունդովի կողմից Բազմում հայտնաբերված է «stegomya fasciata» ղեղին դողերոցը տարածող մոծակը, վորը հանդիսանում է Կենտրոնական և Հարավային Ամերիկայի և Արևմտյան Աֆրիկայի յերկրներում ապուղ մարդկանց զարհուրելի թշնամին: Այդ մոծակն Ադրբեջանում ներկայումս անհնա է, վորովհետև նա լիովին առողջ է: Բավական է ղեղին դողերոցով վարակված մարդուն կծելը, վորպեսզի նա դառնա մյուս մարդկանց վարակման աղբյուրը:

Բարեբախտաբար ԽՍՀՄ-ում մինչև այժմ չի հայտնաբերված ղեղին դողերոցով հիվանդանալու դեպքեր: Մի քանի գիտնականների ավյալներով, չնայած, մալյարիայի տեսակետից առաջին առողջ վայրերում մոծակ անոֆելեսի դոյուլթյանը, այնուամենայնիվ այդ վայրերում մալյարիա չկա, վորովհետև ազգաբնակչությունն առողջ է, մոծակները նրանցից չեն վարակվում:

Ամբողջ աշխարհում մինչ օրս դաստիարակված է մալյարիայի մոծակների 711 տեսակ: Ադրբեջանում մինչ այժմ գտնված են անոֆելեսի հինգ տեսակներ (anopheles maculipennis, an. pseudopictus, an. superpictus an. pulcherrimus, an. bifarcatus an. elutus և an. nigripes): Միմիայն եզ մոծակն է կծում և վարակվում արյունով. արու մոծակը կերակրվում է քաղցրավունքույների հյութերով և չի կարող իր չգարգացած խեթոցով հասնել մինչև կաշու խորքը. բեղմնավորումից հետո սովորաբար արու մոծակը մեռնում է, իսկ եզը կանգնած կամ դանդաղ հոսող ջրերում դնում է 50 մինչև 300 ձվիկ. մի ամսում ընթացքում՝ եզ մոծակից կլիմայական պայմանների համեմատ, ծնվում են 3-ից մինչև 6 սերունդ մոծակներ: Այսպես հյուսիսում ծնվում է 2 սերունդ, Տաճիկիստանում՝ մինչև 8 սերունդ, Ադրբեջանում՝ նույնպես 8 սերունդ: Լրիվ աճի համար մոծակը պահանջում է 4-5 շաբաթ, իսկ շոք վայրերում այս աճումը տեղի է ունենում ավելի արագ՝ 30-ի տաքությամբ պայմաններում. նրանք աճում են արդեն մի տասնորյակի ընթացքում: ԱՍԽՀ-ում, մոծակների զարգացման լրիվ ցիկլը տեղի է ունենում միջին հաշվով յերկու շաբաթվա ընթացքում:



Այսպիսով մոծակը շատ սերունդատու է և մի եզ մոծակից մի ամառվա ընթացքում, նպաստավոր պայմաններում, ծնվում են մի քանի միլիարդ մոծակներ: Մոծակը զարգանում է ջրի մեջ: Իբր զարգացումը՝ ձվիկից թռթռուի տիկնիկի՝—անց է կացնում ջրի մեջ: Մոծակի բեղմնավորման վայր կարող է ծառայել յուրաքանչյուր կանգնած կամ դանդաղ հոսող՝ վեջ արագ քան 0,20 մետր՝ մի վարկյանում ջուրը: Մոծակներն իրենց ձվերը կարող են դնել ճահիճներում, ցեխոտ տեղերում, փոսերում, ներքնահարկերում, տակառներում, կավի ամաններում, կոտրված ամանների կտորների մեջ, մինչև իսկ ձիու ամբակից առաջացած ջրով լեցուն փոսիկի մեջ: Մալյարիայի մոծակը նախ ընտրում է մաքուր ջուրը, իսկ հասարակ մոծակը այս տեսակետից պահանջկոտ է:

Մոծակի այս հատկությունների ուսումնասիրությունը՝ նրա դեմ պայքար կազմակերպելու և նրան վոչնչացնելու տեսակետից՝ շատ շատ կարևոր են: Նույնքան ավելի կարևոր է իմանալ մոծակի սովորություններն ու կեցությունը: Իր բեղմնավորությունը անդից մոծակը սովորաբար յերկու, յերեք ու կես կիլոմետրից հեռու է թռչում, բացառիկ պայմաններում միայն, ընկնելով գնացքի, շոգենավի մեջ, անասունների տեղավորություն հետ շարժվում և հեռու: Մոծակը չի սիրում քամի: Քամու ժամանակ սովորաբար նա թափվում է:

Մարդկանց և կենդանիների վրա մոծակը հարձակվում է արևածագին, յերեկոյան և գիշերը. իսկ ցերեկը, միայն մութ տեղերում, թիկերի մեջ, ներքին հարկերում և մասնաններում: Մոծակը 10-15 մետրից ավելի բարձր չի թռչում. ցրտերի սկսելու հետ միասին, արու մոծակները վոչնչանում են, իսկ եզերը ձմեռում են շենքերում, պաշտպանվելով քամիներից, ձյունից ու ցրտերից:

Մալյարիայի դեմ պայքարը հիմնված է յերկու կարևորագույն ձևերի վրա. —

1. Պայքար՝ մալյարիան տարածող մոծակ անոֆելեսի դեմ:
2. Պայքար՝ մալյարիայով հիվանդների արյան միջից մալյարիայի պարազիտների հայտնաբերման և հիվանդներին բժշկելու համար:

Մոծակների դեմ պայքարը տարվում է խոշոր և մանր հիդրոտիկանքազան ձևերի վրա, ինչպես նաև դանդաղ քիմիական և բիոլոգիական միջոցներով:

Խոշոր հիդրոտիկանքազան ախտահաններ, վուրպես մալյարիայի լիկվիդացիայի հիմնական միջոց:

Անոֆելեսի բեղմնավորման ու զարգացման նպաստավոր վայրեր հանդիսացող, ուայոններ շրջապատող ամենակատարի մալյարիայի աղբյուրներ՝ Յեվլախի, Արեշի, Աղջաքենդի, Լենքորանի, Սաջմաս-Սուդադի, Շարուրի և Նախիջևանի ճահիճների շրջանները՝ հանդիսանում է ԱՍՍՀ-ում մալյարիան լիկվիդացիայի յենթաբնական աշխատանքների հիմքը:

Յեվլախի, Արեշի, Աղջաքենդի ճահիճների շրջանումը մեքենայորեն կենսագործվում է Մինգեչաուրի պրոբլեմի լուծման հետ միասին:

Մինգեչաուրի մոտ, մի քանի տասնյակ կիլոմետր յերկարություն ունեցող 64 մետր բարձրությամբ ամբարտակի կառուցումը պետք է շղթայի Քուռ գետի հոսանքը, իր քարյա և բլրոտայա գրկում հավաքելով Մինգեչաուրի ավազանը՝ մի քանի միլիարդ խորանարդ մետր ջրի մասսիվ, ստեղծելով 40 քառակուսի կիլոմետր ջրային մակարդակ՝ հավասարակշիռ պետք է դարձնի ջրի հոսանքը:

Այսպիսով, 1936 թ. Մինգեչաուրի ամբարտակի կառուցումով վերջնականապես լիկվիդացիայի պետք է յենթաբնական յերեկոյան վարվել Քուռ գետի հեղեղների և պարբերական փլուզումների, ճահիճների, ճահճառների, տիղմային կեղտոտ հոսանքների հետ, վեջ միայն Յեվլախի և հարևան ուայոնների, այլև Մինգեչաուրի ամբարտակից շատ հեռու՝ Սաբիր Աբադի Ալի-Բայրամլուի և Սալյանի ուայոններում այս գետի ջրերի հետ:

Մինգեչաուրի պրոբլեմը դրական իմաստով լուծելով խոշոր քաղաքական նշանակություն ունեցող լրացուցիչ հարյուր հազարավոր հեկտար ջրովի բամբակացան տարածությունների խրնդիրը, լուծում է նաև մալյարիայի լիկվիդացիայի և ԱՍՍՀ բամբակացան շրջանի լիակատար առողջացման կենսական խրնդիրը:

Կապից ծովի ափերի և Սաջմաս-Իվիլի ուայոնի ձկնորսաբանների ճահճառները շրջապատում համար՝ յերկարթուղու գծի զուգահեռությամբ՝ պետք է կառուցվի լեռներից հոսող գետակների և դանդաղ հոսանքների ջրերը հավաքող ջրանցք, վորը հետագայում կուտակված ջրերը ոժանդակ ջրանցքներով պետք է թափի ծովը:

Այս մեթոդով ել ճահճառներում կուտակված ջրերը պետք է շրջապեն, վորպեսզի մյուս ուայոններում, վորոնք գտնվում են տեղափոխող ռեզերուարի (ծով, գետեր և այլն) մակերեսից վեր, կանխվի նոր ճահճառների ստեղծման հնարավորությունը:

Ճահճոտ տեղերի, — ռեզերուարից բարձր տեղավորված լինելու գեղքում, ինչպես որինակ Յեվլախի ուայոնը — շրջանումը կատարվում է ջրահանների միջոցով՝ ջուրը ռեզերուարի մեջ տեղափոխելով:

Յեվլախի ճահիճներից գետի Քուռ գետը ջուրը հանելու համար նախատեսված է կառուցել մի քանի ջրահան կայաններ, կառուցել խողովակային ջրանցք:

Հատուկ ուշադրություն պետք է դարձնել լեռնային գետակների սիստեմի (հեղեղատներ, նստվածքներ) կարգավորման վրա, վորոնք իրենց հետևից թողնում են տրոպիքական մալյարիայի *anopheles superpictus*-ի բազմացման համար նպաստավոր ծանձողություններ:

Հիդրոտեխնիքական, հակա-մալյարիական աշխատանքները ընթացքում ճահիճների չորացման համար պետք է լայնորեն կիրառել վաղ կամ բաց դրենաժների կառուցումը, ստորյերկրյա ջրերի, ֆուս, Արաքս և մյուս գետերի ափերի փլուզումների, ծանծաղուտների դեմ համապատասխան ջրհորների, ջրանցքային ցանցի ճարտարապետական ուղղորդող վերակառուցման միջոցով կոլլեկտորների և փոխադրող առուների շինարարությամբ, բրինձի կուլտուրայով զբաղվող վայրերում (Լենքորան) ընդհատվող ջրաբաշխ ցանցերի կառուցման միջոցով անհրաժեշտ է կանխել նոր ճահիճների առաջանալը: Պետք է կառուցել ռեգերուսները՝ բիտոնյա ծածկոցներ, վորոնք ծառայելու են վորակա ջրոգտագործման կետեր (ավազաններ, ծածկված հորեր, փոսեր և այլն):

Ջրի կուտակվելը կանխելու համար՝ բոլոր ջուր ծծող վայրերում անհրաժեշտ է կառուցել հատուկ շեղվածքներ: Ջրի նորմալ հոսանքն ապահովելու համար, խճուղային ճանապարհների և յերկաթուղու վողջ տարածություն վրա՝ կամուրջների, խողովակների, նավակների, անցքերի կառուցումը, բոլոր ջուր ծծող վայրերի չորացումը և հնացած դեն գցած ամանների (հին վեդրոններ, բանկաններ և ամանների կոտրվածքներ) հավաքելը՝ հանդիսանում է այս աշխատանքի բաղկացուցիչ մասը:

Այս բոլոր աշխատանքները կարող են կենսագործվել ինչպես խոշոր ճարտարապետա-տեխնիքական միջոցներով (խոշոր բոնիֆիկացիա) նույնպես և ձեռքի աշխատանքով (փոքր բոնիֆիկացիա), խորհրդատեսության, կոլտնտեսության, դպրոցի, պիոներ շոկատի, բրիգադայի և անհատ անձնավորության կողմից:

Այս ձևի փոքր բոնիֆիկացիոն աշխատանքների կիրառումը, վորին ընդունակ է յուրաքանչյուրը, շատ խոշոր նշանակություն կունենա մալյարիայի մոծակի թռթռուի դարգացման վոնչացման համար՝ հետևաբար և մալյարիայի տարածման դեմ՝ պայքարելու համար:

ՔԻՄԻԱԿԱՆ ՅԵՎ ԲԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՄԻՋՈՑ-ՆԵՐՈՎ ՄՈԾԱԿԻ ՎՈՉՆՉԱՑՈՒՄԸ

Անհամեմատ ավելի նշանակություն ունի ծանծաղուտներում մոծակի վոնչացումը թռթռուի ստադիայում—այսպես կոչված «լավրացիդի» միջոցներով (քիմիական մեթոդ) և ճահճուտներում ալդ թռթռուներով կերակրվող ձկան ճիճուների և բուսականությունների աճեցումով (բիոլոգիական մեթոդ), ծանծաղուտներում անոֆելեսի թռթռուների վոնչացման համեմատաբար գործնական հեման և ուղղիկ միջոցներից մեկն է—փարիզյան կանաչը:

Փոքր ջրային տարածությունների վրա այդ փոշու սրսկումը կատարվում է ձեռքով, իսկ խոշոր ջրային տարածությունների վրա—ոդանավերով:

Անհրաժեշտ փարիզյան կանաչի հաշիվը կատարվում է հետևյալ կերպ՝ 500-1000 գրամ փարիզային կանաչի տրվում է 1 հեկտար ջրային մակարդակ:

Փարիզյան կանաչը հատուկ տաշտում (կամ արկղում) խնամքով պետք է խառնել ճանապարհի չոր փոշու հետ, ապա 1:1 հարաբերությամբ և ստացված խառնուրդը շաղ տալ:

Մոծակի թռթռուը վորսում է ջրի յերեսին լողացող փարիզյան կանաչը և վոնչանում է: Culexu Aedes մալյարային մոծակի թռթռուի և անոֆելեսի տիկնիկի (Куконка) վրա փարիզյան կանաչը չի ներգործում: ալդպիսի դոդայով նա անվտանգ է նաև ձկների, մարդկանց և կենդանիների համար:

Փարիզյան կանաչով սրսկումը կատարվում է մալյարիայի ափրոջ սեղոնում, ալդրից մինչև հոկտեմբերը՝ 10 օրում մի անգամ: Այրոսրսկումը յուրաքանչյուր հեկտար ջրի մակերեսի համար նստում է 2 ու. 50 կոպեկ: Յերկրորդ հնգամյակի ընթացքում, ըստ տարիների, ոդանավերի և փարիզյան կանաչի պահանջը ներկայացնում է հետևյալ պատկերը:

	1932 թ.	1933 թ.	1934 թ.	1935 թ.	1936 թ.	1937 թ.	Ընդամենը հնգամյակում
1. Ոդանավեր	3	7	6	4	2	2	—
2. Փարիզյան կանաչ (տոններով)	2,0	8,5	13,6	17,0	18,0	19,0	76,1

Փարիզյան կանաչը մինչև հիմա ներմուծվում էր Գերմանիայից, ներկայումս ԽՍՀՄ-ում սկսվել է փարիզյան կանաչի արտադրությունը:

Մյուս զործնական և եծան մեջոցները հանդիսանում են—պերուլիդացիան և նավթաբուսկումը: Առաջին դեպքում, ծանծաղուալը լցնում են կերոսինով, իսկ յերկրորդ դեպքում՝ նավթով, վորի ժամանակ ջրի մակերեսի վրա ստեղծվում է կերոսինի կամ նավթի շերտ, վորը մի քանի ժամվա ընթացքում թուլափորում է խեղդում անոթիկների թոթուռներին ու տիկնիկներին, ինչպես նաև *Culex* u *Aedes*-ի տիկնիկներին ու թոթուռներին: Մեկ հեկտար ջրային մակալդակի համար վերցրվում 300-450 կիլո նավթ:

Ծանծաղուռները նավթամթերներով վերամշակելու համար, անհրաժեշտ է նավթամթերք (տոններով)—1933 թ.—754,0, 1934 թ.—946,0, 1935 թ.—1245,0 1936 թ.—1430,0 1937 թ.—1490,0 ընդամենը հնգամյակի բերացում 5586 տոն:

Նավթով կարելի է սրսկել հիդրոպուտի կամ ցնձուղի միջոցով. խիտ խոտերով ծածկված ճահիճներն անհրաժեշտ է նախորոք մաքրել կամ սրսկել փարիզյան կանաչով: Ձկների համար նավթաբուսկումը վնասակար է:

Մոծակի թոթուռը հաջողությամբ վոչնչացնում է Գամբուզիա կոչված ձկան հատուկ տեսակը, ինչպես նաև ուրիշ մի քանի տեսակի ձկները (կարպ, սլոտվա) հաջողությամբ վոչնչացնում են մոծակի թոթուռը: Մոծակի թոթուռներին վոչնչացնում են նաև բազերը, ջրային մկանները, բղնգները (*жуки*), պուզիրչաուկա (*Utricularia vulgaris*) կոչվող ջրային ձիճուներով անվող բույսը, բանվորական բարակներում, գորանոցներում, դպրոցներում, բնակիլի շենքերում և մատաններում ձմեռող հազարավոր եղթեակվոր մոծակների դեմ թուլթունի փոշու վառելուց (այս նպատակով գործածվում է նաև ծծումբ, կենդանու աղը, աթար, փշառերև) ծուխ տալու միջոցով, վորից մոծակը խլանում է, ապա հավաքում են նրանց և այրում: Մոծակները դեմ պայքարը տարվում է նաև նրանց վորսալու միջոցով:

Չնայած վերջին այս մեթոդը շատ աշխատանք է պահանջում, բայց յերբ նա ձեռնարկվում է մասսայական մասշտաբով՝ գլխի հետևանք է տալիս:

Այսպես որինակ գոցենտ Ն. Կ. Բոգոյավինսկին Մուզանում այս գործի մեջ ներգրավելով պիոներներին և զպրոցականներին, վորսաց 120,000 էլ ավելի մոծակ: Թեպտոր մոծակները վոչնչացվում են չղիկներից, թոչուռների և մորեխների խոշոր քանակությամբ վոչնչացվում է թեպավոր մոծակները: Հատկապես չղիկները հակայական քանակությամբ մոծակներ են վոչնչացնում: Մի շարք շրջաններում վիշկաների ձևով կառուցվում է չղիկների համար հատուկ բներ: Ինչպես հայտնում է պրոֆ. Գ. Ի. Մարցինովսիսկին, Ամերիկայում մի մեծ լճի ափին, վոր տեղ կուտակվել էյին խոշոր քանակությամբ մոծակներ, 500,000 չղիկների միջոցով վոչնչացվեցին և մոծակների հետ միասին վերացավ մալյարիան:

Մալյարիայի դեմ պայքարը տարվում է և պրոֆիլակտիկ ձեռնարկությունների միջոցով:—

1) Մեքենայական պրոֆիլակտիկա—մոծակի կցելուց պաշտպանվելով և,

2) Պրոֆիլակտիկ խինինացում—մալյարիայով հիվանդանալուց պաշտպանվելու համար:

Մեքենայական պրոֆիլակտիկան պահանջում է դուրերի, տամբուրների, բնակիլի սենյակների պատուհանների, ողանցքների, ծխնելուղների և բոլոր անցքերի (վորտեղից կարող են մուտք գործել մոծակները) ցանցավորումը:

Ցանցավորումը կատարվում է ինչպես մետաղյա հյուսված ցանցով, նույնպես և թանլիթով, տուլելով և կիսելով (թանլիֆի տեսակներ). ցանցի դիամետրը պետք է լինի վոչ ավելի քան 0,2 մանտիմ: Մալյարիայով վարակված շրջաններում, արտադրության բոլոր ձեռնարկություններում, կոլխոդներում, սովխոդներում և ժողովրդական հավաքի վայրերում (ակումբ, ճաշարան, կայարանների դահլիճներ) պետք է կիրառել պարտադիր ցանցավորումը:

Մալյարիայի մոծակի կծելուց պաշտպանելու համար գործադրվում է քնի ժամանակ հատուկ ծածկոց փաթաթվելու համար, (պալուպիդացիա), ինչպես նաև ցանցից շինված գլխի հատուկ ծածկոցներ և ձեռնոցներ:

Ազգաբնակությանն այսպիսի ծածկոցներով մատակարարելու գործը հանդիսանում է շատ խոշոր պրոֆիլակտիկ ձեռնարկություն: 1933 թվին նա պետք է ստանա ամենից ավելի տարածված բնույթ, այն հաշվով, վոր 1934 թվին վերջին մալյարիական վայրերի աղգաբնակությունը լիովին ապահովվի այսպիսի ծածկոցներով:

Մի մարդու համար անհրաժեշտ նորմայով կարելու է 25 քառ. մետր թանլիֆ, տուլիա կամ կիսյե, իսկ. բնակարանի համար 12 քառ. մետր ցինկապատ մետաղյա ցանց:

Ամբողջ հնգամյակի ընթացքում կպահանջվի 5,000,000 մետր ցինկապատ մետաղյա ցանց և 40,000,000 մետր թանլիֆ, տուլիա և կիսյե:

Նկատի ունենալով, վոր մոծակները դժվարությամբ են վերեթոչում, խորհուրդ է տրվում մեխանիքական պրոֆիլակտիկ նպատակներով ոգտագործել հատուկ կառուցվող վիշկաները և տների բարձր հարկերը՝ վորպես քնելու վայրեր, ինչպես նաև անհրաժեշտ է բնակիլի շենքերը հիմնադրել ճահճոտ տեղերից հեռու, վոչ պակաս, քան 2½—3 կիլոմետր:

Պրոֆիլակտիկ հակաուեցիլիվ խինիզացիան հետապնդում է մալյարիա հիվանդության վոչնչացում այն դեպքում, յերբ նա նոր է սկսում կամ տեղի ռ ունենում թագնված ձևով: Պրոֆիլակտիկ խինիզացիան պետք է սկսել մոծակների գարնանային մասսայական դարձի հետ միասին և վերջացնել նրանց դեպի ձմեռոցները թոչնելու հետ միասին:

Հատուկ ուշադրութիւն պետք է դարձնել շինարարութեան վայրեր տեղափոխվող բանվորների պրոֆիլակտիկ խնդրագրային վրա, վերոմէջստեղծ շինարարութեան փորձը՝ որինակ, Որջնային խնդրագրային հասցահատիկային սովորողի փորձը ցույց տվեց Յեկաթի վրայով անցած բանվորների մալարիայով հիվանդանալու բազմաթիվ դեպքեր այն ժամանակ, յերբ սովորողի վայրը մալարիայից ամբողջովին առողջ երբ:

Պրոֆիլակտիկ խնդրագրային կատարում են հատուկ խնդրագրողները, վերոնք հաշվվում են մալարիայի դիսպանսերների, մալարիայի կամ պրոֆիլակտիկ կայանների շտապում և վերոնք այդ մարմինների հանձնարարութեամբ, նրանց հսկողութեան ներքո՝ կատարում են ազդարանակցութեան խնդրագրային:

Սինինի նորման սահմանվում և վերոշվում է տվյալ ռայոնի մալարիայով վարակված լինելու առումով:

Միջին հաշվով մի հոգուն մի տարվա ընթացքում սահմանված է 40 գրամ մի սինին:

ՅԵՐԿՐՈՐԴ 5-ԱՄՅԱԿՈՒՄ ՄԱԼՅԱՐԻԱՅԻ ԴԵՍ ՄՂՎՈՂ ՊԱՅՔԱՐԻ ԳԼԽՎՈՐ ԾՐԱԳԻՐԸ

(5-ամյա սլանի առաջին վարիանտ)

Սոցիալիստական շինարարութեան, յերկրի ինդուստրացման, գյուղատնտեսութեան սոցիալիստական վերակառուցման հսկայական տեմպերը, գրագիտութեան աճումը և անգրագիտութեան վերացումը, բանվոր դասակարգի, քաղաքի և գյուղի աշխատավորութեան կուլտուր-կենցաղային պայմանների բարելավումն ամենակարևոր նախադրյալներն են հանդիսանում, — հակառակ կապիտալիստական յերկրների — հակամալարիական ձեռնարկումների հաջող ընթացքի համար:

Յեկնելով այս դրույթից և սոցիալիստական շինարարութեան յերկրորդ հնգամյակում ժողովրդական տնտեսութեան զարգացման պահանջներից, մալարիայի դեմ պայքարի գլխավոր ծրագրի առաջին վարիանտի նպատակային դրույթն է՝ յերկրորդ հնգամյակում լիովին լիկվիդացիայի յենթարկել մալարիան ներքև հիշված ռայոններում:

1. Արտադրւթյան գծով — ամբողջ Գյանջայի, Նուխու, Զագլիկի, Դաշքեսանի ռայոններում, ձկնորսական շրջաններում (Բանկովսկի, Սաչմասի, Դիվիչիի ձկնորսարանները) և ծխախոտագործական ռայոններում (Զաքաթալա):

2. Յերկարուղագծում. — Անդրկովկասյան յերկաթագծի ուղղութեամբ 5 կիլոմետր շառավիղով, սկսած Փոյլի կայարանից մինչև Յալամա կայարանը, Զուլֆայի ամբողջ գիծը, Բագվի յերկաթգիծը, Ալյաթ կայարանից մինչև Մինջկան, ընդգրկելով Նախ. ՍՍՀ յերկաթուղիներն ամբողջութեամբ, ինչպես նաև յերկաթուղային նոր ցանցը:

3. Մալարիայի ռայոններում գտնվող բոլոր կոլխոզներում:

4. Բոլոր բամբակացան ռայոններում, վորտեղ բամբակի կուլտուրան գյուղատնտեսութեան մեջ հանդիսանում է բացարձակ կամ գեղակոչող կուլտուրա:

5. Խնձորային ճանապարհների գծով. — Զանապարհների ամբողջ գծով՝ 5 կիլոմետր շառավիղով, Սուդաղ — Գուսարի, Սաչմաս — Դուբա, Գյուրդամիր — Շամախի, Յեկաթ — Աղզամ, Յեկաթ — Նուխի, Հաջ-Կարու — Ալյատի, Ուշարի — Գյոգչայ, Լյաքի — Աղդաշ — Գյոգչայ, Յերևան — Նախիջևան վայրերում:

6. Կուրորսներում.—Նավթալանում, Հաջու ջրերում և Զուլֆայի հանքային ջրերում (МЫШАКОВЫЕ СОТЫ):

7. Զրնան կայանների շրջաններում:

8. Ամբողջ սահմանամերձ գոտիում, 5 կիլոմետր շառավիղով և ԱՍՍՀ-ի մնացած բոլոր ուղիներում:

Մալյարիայի լիակատար լիկվիդացիայի նախատեսված պլանըն իրագործելու համար ընդունված են հետևյալ կարգն ու ժամկետները.

1933 թ.—Գյանջայի և Նուխու ուղիներում, ծխախոտագործության ուղիներում, բամբակագործական Մալլինի, Աղլիգրեկովի անվան սովխոզներում, Որջոնոկիձեյի անվան հացահատիկային սովխոզում, Զաքաթալայի ուղիների թևի և արդյունաբերության հյուսիսային սովխոզում, Գյանջայի № 1 և 2 խողարուծական սովխոզներում:

1934 թ.—1) Զանգլիում, 2) Կարաչալայի և Կախի ուղիներում սովխոզներում, Շամախու շրջանի «Զակաորտսեմտրեստի» և Փիր-յուզային կուլտուրաների սովխոզում, վոչխարաբուծական սովխոզում:

2. Աղջաբեդի ուղին «Մերձքաղաքային», «Կաթնատնտես» և խողողագործական և մետաքսի սովխոզներում, բնի. Բուռնյաթ-Չադեյի անվան Նախ. ՍՍՀ-ի սովխոզում, Աղզամի «Լեմբերանսկի» ձիաբուծական սովխոզում:

3. Աղջաբեդի, Բարդի, Աղզամի (վերջին յերկուսը Տերտեբեդի կապակցությամբ) և Բեկյասովարի բամբակային ուղիներում:

1935 թ.—1) Իաջբեսանում, ձկնարդյունաբերական բոլոր շրջաններում:

2) Նովյուրտրեստի «Նարիմանովի» անվան, Խաչմախի, Կուսարչայի, Մինգեչաուրի, Կասում-Իսմայիլովսկի ուղիների, Զաֆարաբադի «Դաշ-Յուզ» ձիաբուծական և Ղազախի ու Շամխորի Զակաորտսեմտրեստի խողողագործական սովխոզներում:

3) Ղազախի, Թովուզի, Շամխորի, Կասում-Իզմայլովի ուղիների բամբակային սովխոզներում:

1936 թ.—1) «Նովյուրտրեստ»-ի, «Պրիմորսկի», «Զերմոդիլի» սովխոզները Իսմայիլիսկի ուղիում, Մալլուրեստի, Մաբադինի և Շամախու ուղիներում, Նախ. ՍՍՀ-ի «Բոյուկ-Դուզ» սովխոզում, Խաչմախի վոչխարաբուծական «Կարմիր Սամուխ», «Շուլար», «Վերանորոգված հողը», «Օտվալնյա», «Ինգլար», «Սոյուզ Վոդնիկով» սովխոզներում, Ղուբայի պտղատու և Բյուրզամիրի թռչնաբուծական սովխոզներում:

2) Մաբիր-Աբադ, Կարադոնի, Ալի Բայրամլի, Մալյանի, Աղզադի, Գյոքչայի, Բյուրզամիրի, և Սամուխի բամբակային ուղիներում (Այս ուղիներում Մինգեչաուրի պրոբլեմի լուծման կապակցությամբ):

Տերկաթուղային տրանսպորտում, խճուղային ճանապարհների վրա, կուրորտներում, ջրհան կայանների շրջանում, սահմանամերձ գոտիում մալյարիայի լիակատար լիկվիդացիան կատարվում է նշանակված ժամկետներում:

Մալյարիայի դեմ պայքարի ֆինանսավորումը և կենսագործումը՝ մալյարիայի դեմ պայքարի գլխավոր պլանի համաձայն՝ պետք է հոգան իրենց ուժերով և միջոցներով պետական այն ձեռնարկությունները, վորոնց տերիտորիայի վրա կատարվելու է հակամալյարիական աշխատանքը: Իսկ աշխատանքների հսկողությունը, բժշկա-սանիտարական ցանցի, մեդիկամենտների մատակարարումը, սանուլավորչական կետերի և բժշկական կադրերի ապահովման հարցերը՝ մոտում են Առողջապահական Ժողկոմատի և նրա որդանների պարտականությունների մեջ:

Մալյարիայի դեմ պայքարի գլխավոր պլանն իր մեջ ամփոփելով ինչպես առաջադահական մարմինների գծով, նույնպես և արդյունաբերության, տրանսպորտի, ջրային տնտեսության, Հողօգտագործության, սովխոզների և կոլտոզների գծով ձեռնարկվելիք հակամալյարիական աշխատանքները՝ նախատեսում է 2-րդ հընդամյակի իր պլանում մտցնել ինչպես 5-ամյակի, նույնպես և տարեկան հակամալյարիական ձեռնարկման մանրամասնությունները, ճշտորեն ցույց տալով անհրաժեշտ ուժերի սարքավորումների և զրամական միջոցների քանակը: Մալյարիայի դեմ պայքարելու գործում շատ խոշոր դեր պետք է խաղա մալյարիայի մասին որենադրությունը, վորի նախագիծն արդեն կազմված է և հանձնված է Աղբոջկոմիտորին՝ հաստատելու համար:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՈՐԳԱՆՆԵՐԻ ՀԱԿԱՄԱԼՅԱՐԻԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՈՒՄՆԵՐԸ

1. Արդյունաբերության գծով

1. ԱՍՍՀ-ի Ժողկոմիտորին կից Մալյարիայի Կոմիտեի պլանի համաձայն, խոշոր հիդրոտեխնիքական ճանիճներ և ծանծաղուտների չորացման աշխատանքներին տրտադրական մարմիններին իրենց տերիտորիայի վրա մասնակից զարմնելու համար նախատեսված են հետևյալ միջոցառումները.

2. Արդյունաբերական ձեռնարկությունների ուժերով անցկացնել մանր բոնիֆիկացիոն աշխատանքներ, ճանճուտներ լըցնելը, չորացնելը, նավթով և փոշիով սրսկելը:

3. Արդյունաբերական ձեռնարկությունների, տեղամբների, ճաշարանների, բոլոր նոր շինվող անների դռների, պատուհանների ցանցավորումը:

4. Բանվորների, ծառայողների և աղմինխտրատիվ-տեխնիկական կազմի համար ձեռք բերել ծածկոցներ՝ մոծակների կծկուց պաշտպանելու համար:

5. 2000 ից ավելի բանվորներ ունեցող ձեռնարկության կից կառուցել դիսպանսեր, իսկ ավելի քիչ բանվորներ ունեցող ձեռնարկի համար ունենալ մալյարիայի կայանի համար շենքեր:

II. Յերկաթուղային տրանսպորտի գծով

1. Արտադրական հիմնարկը պետք է մասնակցի յերկաթուղուց 5 կիլոմետր շառավիղով տարածության վրա հակամալարիական և խոշոր հիդրոտեխնիքական աշխատանքներին:
2. Պետք է հայտնաբերվեն և հետազոտվեն յերկաթուղու գոտու ամբողջ տարածության վրա գտնվող կանգնած ջրերը, ապա պետք է կարգավորել ջրային այդ սխտեմն ախտես, վոր ապահովվի այդ ջրերի նորմալ հոսանքը:
3. Ջրերը՝ ուեգեոլառների մեջ հավաքելու համար անհրաժեշտ նավակների կառուցումը, նրանց խորացումն ախտես, ուր այդ անբավարար է:
4. Յերկաթուղու փողջ տարածության վրա գտնվող ճահիճներին մաքրելն ու չորացնելը:
5. Գծի վերանորոգության հետևանքով առաջացած փոսերի ծածկելը:
6. Այն վայրերում, փոսեր ջրի ուեյնքը արգելք է հանդիսանում նրա նորմալ հոսանքին, կլանող ջրհորների և ջրամբարների ստեղծելը և այն՝ հանդիսանում են վերոհիշյալ աշխատանքների անբաժանելի մասը:
7. Նույժեան կարելու է նաեւ ջուրը ուեգեոլառներից և նավակներից դրենաժները տեղափոխելու համար հատուկ ջրատար անցքերի կառուցումը:
8. Բոլոր հիմնարկությունների, ակումբների, բնակելի շենքերի, ճաշարանների, կալարանային դահլիճների, հանրակացարանների պահարանների և դռների ցանցավորումը, բանվորներին և աղմինիստրատիվ-տեխնիկական կազմի ծածկոցներով ապահովելը:
9. Բավարար քանակությամբ մալարիայի դիսպանսերների և կայանների կառուցումը:
10. Բոլոր յերկաթուղայինների և նրանց ընտանիքի անդամների 100/0-ային պրոֆիլակտիկ խինիդացիայի յենթարկելը, այն հաշվով, վոր հնգամյակի վերջում, մալարիայով հիվանդանալու հնարավորությունը լիվիդացիայի յենթարկվի:

III Աղբջրհեծուղայան գծով

1. ԱՍԽՀ ճահիճների, ճահճուտների մանրամասն քարտեզի կազմումը: Այս աշխատանքը կատարելուց բացի Աղբջրտեսուությունը բավականաչափ ժամանակ ունի կազմելու այն ուայոնների պլանները, ուր նախատեսնված է մալարիան լիվիդացիայի յենթարկելը հնգամյակի առաջին տարիներում:
2. Գուռ և Արաքս գետերի փուլզումները:
3. ԱՍԽՀ տեսեսական նշանակությունից զուրկ բոլոր ճահիճների, ծանծաղուտների հերթական չորացումը՝ մալարիայի գեմ պայքարելու՝ ըստ հնգամյա պլանի:
4. Կասպից ծովի ափի և Խաչմաս—Դիվիչի ձկնորսարաններում լիմանների չորացումը:
5. Լենքորանի խտելիայի (истекей) տեղափոխությունը լեռնային շրջանը և ջրամբարների կառուցումը:

6. Ճարտարապետական—շինարարական ցանցի վերասարքավորումը, կամուրջների, կոլեկտորների և տեղափոխող ջրանցքների կառուցումը:

7. ԱՍԽՀ-ում ճահճուտների ստեղծման հիմնական պատճառներից մեկը հանդիսացող տեղական ջրային ցանցի կարգավորումը:

8. Մանր լճային անտեսությունների ուացիոնալ զարգացման միջոցով անհրաժեշտ և կանխել նրանցում մոծակների բազմացման համար նպաստավոր վայրեր դառնալու վտանգը:

9. Ջրային ցանցի ճանապարհների կարգավորված վիճակում պահելը:

IV Սովխոգների գծով

1. Սովխոգների տերիտորիայում, 5 կիլոմետր շառավիղի վրա խոշոր հիդրոտեխնիքական հակամալարիական չորացնող աշխատանքների ձեռնարկումը (այերոսրսկում, փոշեսրսկում և նավթասրսկում):

2. Ճարտարապետական ջրային ցանցի, կոլեկտորների և ջրանցքների կարգավորումը: Ցանցի ավերումը կանխելու նպատակով՝ ամբողջ տարածության վրա, անցման տեղերում կամուրջների կառուցումը:

3. Սովխոգների տերիտորիայում գտնվող ճահճուտների լըցնելն ու չորացնելը. 1000 բանվոր ունեցող սովխոգներում 4 մալարիայի բոնիֆիկատորների պահելը:

4. Բոլոր բնակելի շենքերի, ճաշարանների, ակումբների, դռների և պատուհանների ցանցավորման, բանվորներին և աղմինիստրատիվ տեխնիկական կազմին մոծակի կծելուց պաշտպանվելու համար ծածկոցներով ապահովելը:

5. Մալարիայի դիսպանսերի և կայանների կառուցումը, այդ կայանների սարքավորումը և տրանսպորտով ապահովելը:

6. Սովխոգի բոլոր բանվորների պրոֆիլակտիկ խինիդացիան:

V Կոլխոգների գծով

1. Տեղական ջրաբաշխական ցանցի ուացիոնալ պահպանումը, ջրաոգտագործման կարգավորումը, ինչպես նաեւ ջրատար սխտեմի կառուցումը:

2. Կոլխոգներում փոքր ճահճուտների չորացնելը:

3. Ծանծաղուտների փոշեսրսկումը և նավթասրսկումը:

4. Տիպային բնակելի շենքերի կառուցումը, այն հաշվով, վոր նրանք պաշտպանված լինեն ինսուլիացիայից և մոծակների մուտքից:

5. Բոլոր բնակելի շենքերի ցանցավորումը և կոլխոգնիկներին ծածկոցներով ապահովելը:

6. Ծուխ տալու միջոցով՝ ձմեռող մոծակների վոնչացումը:

7. Բհնձի կուլտուրայով զբաղվող ուսյոններում ջրելու մեթոդի կիրառումը:

VI Կուլտուրայի սննդամթերքի ժողովում

1. Գյուղական վայրերում ջրմուղների կառուցումը, աղգարանակալությանը խմելու առողջ ջրով ապահովելը:

2. Քաղաքներում, սովխոզներում, կոլխոզներում նախապաշարանվելով խինինի ծառի կեղևի բեղունությամբ՝ բնակչի շնչերի կառուցման նախագծումը հարմարեցնելով նախ մոծակների մուտքից պաշտպանվելուն, ինչպես նաև Ադրբեջանի կլիմայական պայմաններին:

2. Բոլոր ջրմուղների մոլիներին վերանորոգությունը:

VII Խնդիրների գծով

Բոլոր պարտադիր ձեռնարկությունների կազմակերպումը, վորոնք նախատեսված են յերկաթուղու համար՝ բացառությամբ մալարիայի դեմ կայաններից:

VIII Կուլտուրայի յեղ մալարիայի կայանների գծով

Նույն ձեռնարկումները, վորոնք նախատեսված են արդյունաբերությունից գծով:

IX Հողմոլիմասի յեղ Կոլխոզներում գծով

Սովխոզների և կոլխոզների համար պարտադիր հակամալարիական ձեռնարկումների կազմակերպումն ու ղեկավարությունը՝ այդ աշխատանքների հսկողությունը, մատակարարման և ֆինանսավորման կարգավորումը:

Բոլոր կազմակերպությունների գծով այս ձեռնարկումները կենսագործելու համար, յերկրորդ հնգամյակի վերջում՝ ամբողջ ԱՍՍՀ-ում պլանով նախատեսված բոլոր ուսյոններում, ստեղծվում և մալարիայի մոծակի զարգացման հնարավորությունների վոնչացումը, հետևապես և մալարիա հիվանդությունից տարածման հնարավորությունների վոնչացումը:

Միլիոնավոր մալարիայով հիվանդների բժշկությունը, մահացումների դեպքերը մաքսիմալ չափով իջեցնելը, հնգամյակի վերջում մալարիայով հիվանդների թիվը առնվազն 4 անգամով կրճատելու խնդիրները՝ վերին աստիճանի պատասխանատու են դարձնում առողջապահության դերը:

ՄԱԼՅԱՐԻԱՅԻ ԲՈՒԺԱԿԱՅԱՆՆԵՐԻ ՑԱՆՑԸ

Ադրբեջանի Տրոպիկական Ինստիտուտը մալարիայի դեմ պայքարի ֆրոնտում հանդիսանում և վորպես կենտրոնական գիտական-գործնական հիմնարկություն, վորպես այդ պայքարի ղեկավարող շտաբ, մեթոդոլոգիական, ծրագրող, կազմակերպող ու կերպարով կենտրոն, հանդիսանում և պատասխանատու և գի-

տական ղեկավարն այն աշխատանքների վորակի համար, վորոնք տանում են մալարիայի հիմնարկությունները:

Փիտակալ կենտրոնական ինստիտուտը մերտ կապ պիտի պահի գաղաղական վայրերի հետ և ալալիսով մալարիայի դեմ մղվող պայքարի ընթացքում՝ գործնական աշխատանքը միաձուլի գիտականի հետ:

Տրոպիկական Ինստիտուտը Ադրբեջանում յերկրորդ հնգամյակում կդառնա ամենաօրինակելի գիտա-հետազոտական հիմնարկություն, ինչպես իր մեծությամբ, նույնպես և աշխատանքների ծավալի ու բովանդակության տեսակետից:

1933—1934 տարիների ընթացքում, ինստիտուտի համար շինվում և հատուկ շենք 50 ստացիոնար մահճակալներով, նորագույն սարքավորումով, ապարատուրատով և գրականությամբ:

Տրոպիկական ինստիտուտի կառուցման համար նախագծված և ծախսել 1,000,000 ռուբլի, իսկ սարքավորման վրա՝ 400,000 ռուբլի:

Ինստիտուտում աշխատող մասնագետ-մալարիոլոգների քանակը 32 թ.—10 հոգուց 37 թ. բարձրանալու և մինչև 37 հոգու:

Տեղերում Տրոպիկական Ինստիտուտի ընդհանուր ղեկավարություն տակ՝ գիտական և գործնական հիմնարկություններ են հանդիսանում տրոպիկական կայանները, վորոնք մալարիայի պայքարի բնագավառում տանում են ամբողջ ուկրաինով աշխատանքը:

Միջըջանային տրոպիկայաններ կազմակերպվում են մալարիայով առավել վարակված վայրերում՝ սպասարկելով հարևան 2-3 ուսյոնները 80-120 հազար հոգի աղգարանակալությամբ:

Տրոպիկայանների քանակը յերկրորդ հնգամյակում հասցրվելու և 30 միավորի, պլանով նախատեսվում և 27 նոր տրոպիկայանների շենքերի կառուցում:

Մնայուն, բուժական ցանցի անբավարար լինելու պատճառով —մի շարք ուսյոններում սուր մալարիայով հիվանդներին վորակալ բժշկական ոգնություն ցույց տալու համար, բոլոր աղագա կայաններին կից կազմակերպվելու են 30 մահճակալից բաղկացած ստացիոնար բաժիններ:

Յուրաքանչյուր տրոպիկայանի կառուցումը, ստացիոնար բաժինների հետ միասին, կնստի 240000 ռուբլի: Յուրաքանչյուր տրոպիկայանի շտատում նախատեսվում և 4 բժիշկ, 1 լաբորանտ, 3 բժշկի ոգնականներ 5 բոնիֆիկատոր և խինիդատոր:

Տրոպիկայանի հիմնական մալարիայի կայանների ֆիլիալներ տեղերում հանդիսանում են մալարիայի գիտալանները: Վերջիններ կազմակերպվում են այն արդյունաբերական ձեռնարկություններում, վորոնք ունին 2000 ավելի բանվորներ և 3000 մարդուց ավելի բնակիչներ ունեցող բնակելի վայրերում:

Մալարիայի գիտալանները, տրոպիկայանի պլանների և առաջադրությունների հիման վրա՝ հաշվետու և բուժման են

յենթարկում մալյարիայով հիվանդներին, կատարում են ազգաբնակչության պրոֆիլակտիկ խննդացիա և մեքենայական պրոֆիլակտիկա, իրենց շրջաններում հայտնաբերում են բոլոր ճահճուտները, կազմակերպում և հսկում են չորացման աշխատանքները, անց են կացնում լայն սան-լուսավորչական աշխատանք, հակամալյարիական ֆրոնտում կազմակերպում են աշխատավոր մասսաներին:

Մալյարիայի դիսպանսերներն իրենց ստացիոնարները չունեն, իսկ անհրաժեշտության դեպքում, հիվանդներին ուղարկում են պրոֆիլակտիկ ցանցի ընդհանուր բուժակայանները կամ տրոպիկայանները՝ ստացիոնար բժշկության:

Յերկրորդ հնգամյակում մալյարիայի դիսպանսերների թիվը նախատեսվում է հասցնել 120-ի և կառուցել 100 նոր մալյարիայի դիսպանսերների շենքեր:

Յուրաքանչյուր դիսպանսերի շինարարությունը կնստի 70000 ուրբլի, վրից 40000 ուրբլի դիսպանսերի շինարարության և 30000 սպասարկու կազմի համար բնակելի շենքերի շինարարության համար:

Մալյարիայի դիսպանսերներից հեռու ընկած և անհամեմատ վարակված շրջաններում՝ կազմակերպվում են մալյարիայի կայաններ, վերջինքս յենթարկում են մալյարիայի դիսպանսերներին և աշխատանքները տանում են նրանց ծրագրերով և հանձնարարությունով: Մալյարիայի կայանը սպասարկում է մինչև 20000 հոգուց բաղկացած ազգաբնակչության:

Յերկրորդ հնգամյակում մալյարիայի կետերի թիվը կհասնի 120-ի, վրից հետ միասին բոլոր կետերի համար շինվելու յեն հատուկ շենքեր և սպասարկու կազմի համար բնակարաններ: Այս նպատակով նախատեսվում է յուրաքանչյուր կետի վրա ծախսել 20000 ուրբլի և 15000 ուրբլի բնակելի շենքերի վրա:

Մալյարիայի կայանի շտատում մտնում են՝ 2 բժիշկ, 1 լաբորանտ, 2 բժշկի ոգնականներ և 5 բոնիֆիկատոր-խննդատորներ:

Սրանից բացի, մալյարիայով վարակված վայրերի առողջացման և ազգաբնակչության պրոֆիլակտիկ խննդացիայի համար, հատուկ տեխնիքական շենքերի կառուցումն կենսագործելու համար՝ կազմակերպվում է պրոֆիլակտիկ (բոնիֆիկատորների) կայաններ, վորոնց շտատում մտնում են 1 բոնիֆիկատոր ու 1 խննդատոր:

Այդպիսի կայաններ սլլանով նախատեսված է կառուցել 560:

Հակամալյարիական կառուցվածքներից բացի, անհամեմատ ավելի հեռավոր և չուսումնասիրված ուայոնների հետազոտման համար ստեղծվում են մալյարիայի դեմ պայքարող մշտական շարժական խմբեր, բաղկացած՝ 2 բժշկից, 2 բժշկի ոգնականից և 2 բոնիֆիկատորներից: Հնգամյակի առաջին յերեք տարիներում այդպիսի խմբերից պահանջվում է 60 (հետագայում նրանց պահանջը ընկնում է):

Այս հակամալյարիական խոշոր ցանցը, բաղկացած 30 տրոպիքական կայաններից՝ 9000 մահճակալով, 120 դիսպանսերից, 120 մալյարիական կայանից և մալյարիայի դեմ պայքարող 60 շարժական խմբերից, Ազրբեջանի տրոպիքական ինստիտուտի գիտական և ոպերատիվ ղեկավարությունը՝ նշանակվից չափով թեթևացնելու է հակամալյարիական կառուցվածքների ծանրաբեռնվածությունը և ուժեղացնելու է նրանց պրոֆիլակտիկ նշանակությունը: Այս ցանցը, ԱՍԽՀ-ի մալյարիայով հիվանդներին ընդգրկելու համար, հանդիսանում է միանգամայն բավարարաբաղա:

Մալյարիական կայանների շինարարությունը, ուս
հնգամյակի տարիների.

Անուններ	1932 թ. կա	1933 թ.	1934 թ.	1935 թ.	1936 թ.	1937 թ.	Ընդամենը հնգամյակ- ում.
Տրոպիկայաններ	3	10	8	6	3	—	27
Մալյարիայի դիսպանսեր- ներ	20	35	30	20	10	5	100
Մալյարիայի կայաններ.	—	50	30	20	10	10	120

Մալյարիական ցանցի աճումը, ուս
հնգամյակի տարիների

Անուններ	1932 թ. կա	1933 թ.	1934 թ.	1935 թ.	1936 թ.	1937 թ.	Ընդամենը հնգամյակ- ում.
Տրոպիկայան	10	20	25	28	30	30	20
(և մահճակալներ)	(160)	(600)	(750)	(840)	(900)	(900)	(750)
Մալյարիակ. դիսպ.	14	64	89	110	120	120	116
Մալյարիակ. կայաններ	30	70	90	100	120	120	90
Պրոֆիլակտիկ կայաններ	0	200	250	400	500	560	560
	54	354	454	638	770	830	776
	—	655%	807%	1180%	1426%	1537%	14 ան- գամով

Բոլոր հակամարտարիական կառուցվածքների աշխատանքների ռդտակար կոյեֆիցիենտի ուժեղացման անհրաժեշտությունը պահանջում է նրանց գործունեության և ազդեցության շրջանակի լայնացումը, ինչպես նաև լայն մասշտաբով փարիզյան կանաչի փոշեսրսկման, նավթասրսկման, մոծակների ձմեռանոցների ծուխ առկա կիրառումը և այլն: Պլանում նախատեսված է, ապահովել մալարիայի դեմ պայքարելու մարմինները 115 ավտոմեքենաներով, 334 մոտոցիկլետով և 420 ձիով:

Մալարիական ցանցը պետք է անհրաժեշտ չափով ամրացվի և լիովին ապահովվի սարքավորումով, ինչպես և մասնագիտական ապարատներով:

Պլանը նախատեսում է մալարիական ցանցի սպառարկման համար ձեռք բերել 280 մանրադիտակ, 50 բինոկուլյար մանրադիտակ, 30 միկրոտոմ, 100 եպիդոսկոպ, 150 լուսանկարչական ապարատ, 30 կինո կառուցվածք. բացի սրանից, 540 «Տիպ-Տոպ» ապարատ, 830 հիդրոպուլտ, 750 տակառ, 400 նասոս, 300 խոռոչի աման և 100 մետաղյա մաղ:

**Մալարիական ցանցի ֆինանսավորումը րսս
հնգամյակի սարինների
(Հազար ուրլիններով)**

	1933 թ	1934 թ	1935 թ	1936 թ	1937 թ	Ընդամ. հնգամյակում
1. Տրայիական ինստիտուտ						
Պահպանություն . . .	400,0	430,0	470,0	500,0	590,0	2,390,0
Կապիտալներդրում . . .	500,0	500,0	200,0	200,0	—	1,400,0
Ընդամենը . . .	900,0	930,0	670,0	700,0	590,0	3,740,0
2. Տրայկայաններ						
Պահպանություն . . .	2500,0	3225,0	3570,0	4000,0	4100,0	17,395,0
Կապիտալներդրում . . .	2550,0	1380,0	820,0	540,0	—	5,290,0
Ընդամենը . . .	5050,0	4605,0	4390,0	4540,0	4100,0	22,635,0
3. Մալարիայի դիսպանսերներ.						
Պահպանության . . .	3200,0	4895,0	6600,0	7300,0	740,0	22,735,0
Կապիտալներդրում . . .	2550,0	2125,0	1615,0	850,0	—	7,14,00
Ընդամենը . . .	5750,0	7020,0	8215,0	8150,0	740,0	29,875,0
4. Մալարիայի կայան						
Պահպանություն . . .	2100,0	2560,0	3400,0	4200,0	4320,0	16,580,0
Կապիտալներդրում . . .	2400,0	450,0	500,0	300,0	600,0	4,750,0
Ընդամենը . . .	4500,0	3010,0	3900,0	5000,0	4920,0	21,3300

5. Պրոֆիլակսիկ կետեր						
Պահպանություն . . .	2000,0	2200,0	4800,0	6000,0	7280,0	22,280,0
Կապիտալներդրում . . .	600,0	150,0	450,0	300,0	180,0	1,680,0
Ընդամենը . . .	2600,0	2350,0	5250,0	6300,0	7460,0	23,960,0
6. Մալարիական խմբեր						
Պահպանություն . . .	600,0	660,0	700,0	—	—	1,960,0
Կապիտալներդրում . . .	100,0	—	—	—	—	100,0
Ընդամենը . . .	700,0	660,0	700,0	—	—	2,060,0
Ընդհանուր գումար	18500,0	28575,0	23125,0	24690,0	17810,0	103700,0

ԽԻՆԻՆԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄԸ

Հազամալյարիական ձեռնարկումների ընդհանուր պլանի մեջ վերաբերում է մալյարիայի բժշկական խնդիրներին, նրա մատակարարումը հանդիսանում է ակտուալ խնդիրներից մեկը:

Մալյարիայի լիկվիդացիան ԱՄՆ-ի ժողովրդական տնտեսության կարևոր ճյուղերում պահանջում է խինինի մատակարարում այն քանակությամբ, վորը լիովին բավարարի հետևյալ խնդիրները կենսագործելու համար.

1. Մալյարիական հիմնարկներում, բոլոր մալյարիայով հիվանդներին խինինի միջոցով բուժելու լայն կիրառումը:
2. Բոլոր մալյարիայով վարակված բնակիչների բանվորների պրոֆիլակտիկ խինիզացիան, ինչպես նաև սովխոզներին, կոլխոզներին աշխատողներին խինինով սրահելուն:
3. Հանրապետության բոլոր բուժա-պրոֆիլակտիկ հիմնարկներին խինինի բավարար մատակարարումը:
4. Խինինի լայն, առձեռն վաճառքը և բաշխումը բոլոր ղեկավարներում:

Այս ձեռնարկումների անցկացումը, առանց խինինի խնայողաբար գործածության, կպահանջեր ամբողջ հնգամյակի ընթացքում 120000 կիլոգրամի խինին: Բայց խինինը, վալյուտայով ներմուծվող թանկագին ապրանք է: Այդ իսկ պատճառով, խինինը պետք է գործածել խնայողությամբ, այնպես, վոր այդ խնայողությունը բարձր եֆֆեկտ տա:

Խինինի քիմիական ճիշտ բաղադրությունը, գիտության կողմից մինչև որս ել չի բացատրված: Թերևս այդ բացատրությունը հնարավորության տար՝ խինինի արհեստական սինտեզի ստեղծման և ազատել մեզ արտասահմանից կախում ունենալուց:

Գիտության և գիտական աշխատողներին, մալյարիայի դեմ պայքարող կազմակերպությունների առաջ, վորպես սոցիալական պատվեր, խնդիր է դրվում՝ յերկրորդ հնգամյակում լայնորեն ծավալել այս հարցի ուսումնասիրությունը:

Թե ինչպես կապիտալիստ չարչիները խինինի ասպարեզում ուժեղացնում են իրենց մոնոպոլիան, այդ ցույց է տալիս, թեկուզ, այն փաստը, վոր նրանց տրեստները, մինչև իսկ խոշոր գումարներով, չեն ցանկանում բաց թողնել մեզ խինինի ծառի սերմացուն:

Վոչ մի տեսողությունից չվերադառնալով մոնոպոլիստական կապիտալի անասնական «մարդասիրություն» ցույց տվին անգլիացիները, դեռևս 1918 թ., նրանց Բաթումում յեղած ժամանակ (վրացական մենչեիկներին «անկախ» կառավարության որոք): Պրոֆեսոր Կրասնովի կուլտիֆիկացիայի յենթարկած և արդեն զգալիորին աճած խինինի ծառերը, մեկ հեկտար տարածության վրա, նրանք անխնայորեն կտրտեցին և վոչնչացրին:

Խինինի մատակարարման ընադավառում, կապիտալիստական շուկայից լիովին ազատվելու նպատակով, անհրաժեշտ է յերկրորդ հնգամյակի ընթացքում անցկացնել լայն հետազոտական աշխատանք՝ խինինի և հատկապես վրաստանի ՍՍՀ-ի Բաթումի ռայոնում՝ խինինի ծառը կուլտիֆիկացիայի յենթարկելու հարցում:

Անհրաժեշտ է նման հետախուզական աշխատանքները կատարել ամենաբազ տեմպերով ԱՄՆ-ի Լենքորանի ռայոնում, վորը իր կլիմայով նման է խինինի ծառի հայրենիքն հանդիսացող Հարավային Ամերիկային, Հնդկաստանին, Յեյլոն և Յավա կղզիների տրոպիկական յերկրներին:

Յեյլոնի խինինի խնայողաբար գործածելու անհրաժեշտությունից, ինչպես նաև դրան ձեռք բերելու դժվարությունից, խինինի պահանջի հակադրական աճումից, մալյարիայի պայքարի պլանը նախատեսում է՝ հնգամյակի առաջին իսկ տարվանից պրոֆիլակտիկ ձեռնարկումները և խինինի դերի ուժեղացումը՝ վորպես բուժման միջոց դարձնելով այն հազամալյարիական պայքարի ծանրության կենտրոնը:

Այս իսկ պատճառներով, սկսած հնգամյակի հենց առաջին տարին, նախատեսված է խինինի պահանջի աստիճանական աճումը:

Խինինի պահանջը ըստ հնգամյակի

(Կիլոգրամներով)

Ստացված է 1932 թ.	1933 թ.	1934 թ.	1935 թ.	1936 թ.	1937 թ.	Ընդամենը
30,80	15,000	18,000	20,000	23,000	23,000	99,000

ՄԱԼՅԱՐԻԱՅԻ ԴԵՍ ՊԱՅՔԱՐՈՂ ԿԱԴՐԵՐ ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ԽՆԴԻՐԸ

Հակամալյարիական պայքարի պլանով նախատեսված ձեռնարկումների կենսագործման հիմնական պայմաններից մեկը հանդիսանում է վորակապես կայուն, անհրաժեշտ քանակությամբ կադրերի պատրաստումը:

Կադրերի պատրաստման գործը՝ աճող պահանջից և քանակի և վորակի տեսակետից հետ և մուռմ: Այս դրուլթյունն անհանգուրժելի է և պետք է շտապ կերպով վերացվի:

Բավական է հիշել, վոր ներկայումս 10 տրոպկայանները շտապով պահանջվող 40 բժշկի փոխարեն, աշխատում են 10-ը. 15 մալյարիայի դիսպանսերներում, վորտեղ աշխատում են 15 բժիշկ, բաց և մուռ 13 բժշկի տեղ: Բժշկներ չունենալու պատճառով հնարավոր չի 30 մալյարիայի կայանների բացումը: Ամառով հանրապետության մեջ, բժշկական լրիվ կազմով ապահովված են միմիայն յերկու դիսպանսեր, իսկ մեկ դիսպանսեր ամբողջովին մնացել և առանց բժշկի:

Միանգամայն ակներև է, վոր տրոպկայանները և մալյարիայի դիսպանսերներն ապահովված չեն լինում 50%-ից ավելի պատկան կադրերով՝ չեն կարող արդարացնել իրենց կոչումը: Նրա հետևանքով նրանք վերածվում են սովորական բժշկական կայանների:

Բժշկական կադրերի բացակայությունը ավելանում են նաև բժշկական ինստիտուտի պրոդուկցիայի անբավարար վիճակը, ավարտած ուսանողների թույլ մեթոդությունների և հասարակական պատրաստակությանը, նրանց կլինիկայի անբավարար գիտելիք, մալյարիայի բժշկություն, պրոֆիլակտիկայի համարյա թե լիակատար անծանոթ լինելը, լաբորատորիական տեխնիկայի, սան-տեխնիքական և ճարտարապետական—տեխնիքական գիտելիքներից լիակատար անտեղյակությունը:

Բժշկական կադրերի պահանջը յերկրորդ հնգամյակի ընթացքում հետևյալ պատկերն է ներկայացնում.—

	1932թ.	1933թ.	1934թ.	1935թ.	1936թ.	1937թ.
1. Տրոպիական ինստիտուտ						
Բժիշկների թիվը	10	25	28	31	34	37
Միջին բուժ. պերսոնալի թիվը	10	20	25	28	30	32
2. Տրոպի. կայաններ						
Բժիշկների թիվը	14	80	100	112	120	120
Միջին բուժ. պերսոնալի թիվը	30	120	150	168	180	180
Բանիֆիկատորներ թիվը	51	220	275	308	330	330
3. Մալյարիական դիսպան.						
Բժիշկների թիվը	15	192	267	330	360	360
Միջին պերսոնալի թիվը	30	192	267	330	360	360
Բանիֆիկատորներ	68	192	712	880	960	960
4. Մալյարիակ. կայաններ						
Բժիշկների թիվը	30	140	160	200	240	240
Միջին պերսոնալի թիվը	30	140	160	200	240	240
Բանիֆիկատորներ	—	350	400	500	600	650
5. Պրոֆիլակտիկ. կետեր						
Բանիֆիկատորներ	—	400	500	800	1000	1120
6. Մալյարական խմբեր						
Բժիշկների թիվը	—	20	20	20	—	—
Միջին պերսոնալի թիվը	—	40	40	40	—	—
Բանիֆիկատորներ	—	40	40	40	—	—
Ընդամենը						
Բժիշկներ	69	457	575	693	754	757
Միջին պերսոնալ	100	512	642	765	810	812
Բանիֆիկատորներ	119	1202	1927	2528	2890	3010

Այսպիսով, յերկրորդ հնգամյակի ընթացքում՝ հակամալյարիական պայքարը կպահանջի 757 բժիշկ, 812 միջին սպասարկուկազմի աշխատողներ, նրանցից բացի Տրոպիական Ինստիտուտի համար պահանջվում է պատրաստել 3 ճարտարապետ-հիդրոտեխնիկ և 5 տեխնիկներ: Յուրաքանչյուր տրոպկայանի համար կը պահանջվի մեկ ճարտարապետ և 2 հիդրոտեխնիկ: Այսպիսով, տեղերում հակամալյարիական աշխատանքների ղեկավարման և հսկողության համար՝ պահանջվում է ընդամենը 33 բարձր և 65 միջին վորակի հիդրոտեխնիկներ:

Կադրերի պահանջի ամենբարձր աճումն ընկնում է հնգամ-
յակի առաջին յերեք տարիներում, իսկ վերջին յերեք տարի-
ներում, այդ աճումը աննշան է:

Այս դրույթունը միանգամայն անխուսափելի չէ, ինքն հաշվի
առնելու լինինք, վոր հնգամյա պլանով նախատեսված է առա-
ջին տարիներում ծանրութեան կենտրոն դարձնել՝ սոցիալիստա-
արդյունաբերութեան և գյուղատնտեսութեան բնագավառներում
բանվորական նոր ուժերի ներգրավումը: Սրա հետ միասին նա-
խատեսված է խոշոր բանվորական ուժեր ներգրավել նաև մալ-
յարիական վայրերի շինարարական աշխատանքի մեջ, քոչվորնե-
րին նստակյացութեան փոխադրելը, քաղաքի և գյուղի աշխա-
տավորութեան բուժական սպասարկման գործում վճռական բե-
կումն առաջացնելու անհրաժեշտութեանը՝ պահանջվում են ա-
պահովել մալյարիայի դեմ մղվող պայքարն ու պերտիվ դեկա-
վարութեամբ, հետևապես և զեկավար կադրերով:

Մալյարիայի դեմ պայքարող ցանցը բժշկական կադրերով
ապահովելու համար, Առողջուժատին անհրաժեշտ է կենսագոր-
ծել կառավարութեան վորոշումը՝ սկսած 1928 թվից բժշկական
ինստիտուտն աւարտած բժիշկներին մալյարիայով վարակված
ռայոնները աշխատանքի ուղարկելու մասին: Այդ աւարտածների
խոշոր մեծամասնութեանը խուսափելով ռայոնում աշխատելուց՝
նստել և Բազմում:

Խնինի մեթոդիկան, Ադրեշանում լայն տարածված մալյա-
րիայի և մյուս տրոպիքական հիվանդութեանների պրոֆիլակտիկ
բժշկութեանը լավ յուրացրած կադրեր պատրաստելու նպատա-
կով՝ 1933 թվի հունվարի 1-ից կազմակերպվում է, սույն
ՄՍՀՄ-ում առաջինը հանդիսացող տրոպիքական հիվանդութեան-
ների ֆակուլտետը:

Տրոպիքական բժշկի պրոֆիլով տրոպիքական ֆակուլտետի
ստեղծումը կապահովի ախտի մալյարիոզների պատրաստու-
մը, վորոնք իսկապես տեսականորեն և գործնականորեն ծանոթ
կլինեն մալյարիային. բավարար չափով կոփված լինելով՝ կհասկա-
նան լաբորատորիական տեխնիկան և ճարտարապետական-տեխ-
նիքական գիտելիքները: Նշագրված առաջին տարիներում, մա-
լյարիոզների հսկայական պահանջը ծածկելու համար, տրոպի-
քական ֆակուլտետն իր կազմակերպման ուղից, անմիջապես
պետք է կոմպլեկտացվի բոլոր կուրսերի և սեմեստրների լրիվ
կազմով: Այս պետք է կատարվի բժշկական ինստիտուտի մյուս
ֆակուլտետներից՝ համապատասխան սեմեստրներից ուսանողու-
թյանը տրոպիքական ֆակուլտետի համապատասխան կուրսը և
սեմեստրը տեղափոխելու ճանապարհով:

Միմիայն այդ ձևով հնարավոր կլինի 1933 թվին և հետևյալ
տարիներում տրոպիքական ֆակուլտետից բաց թողնել արդեն
ավարտած մասնագետներ:

Բացի սրանից, բժշկական ինստիտուտի բոլոր ֆակուլտետ-
ների ուսանողների մալյարիայի դիսցիպլինան դասավանդելու
նպատակով, կազմակերպվում է մալյարիայի հատուկ կաֆեդրա:

Մալյարիայի դեմ պայքարող բժշկական կադրերի պատրաստ-
ման վորջ սխեմայի մեջ կարևոր տեղ պետք է զբաղի նաև ար-
դեն աշխատող կադրերի մասնագիտական կատարելագործումն ու
վորակի բարձրացումը: Անհրաժեշտ է վերև հիշված ճանապար-
հով, վոր միայն տասնյակներով մալյարիոզ բժիշկներ պա-
տրաստել, այլ և հնարավորութեան ստեղծել, վորպեսզի մալյարի-
ական կայաններում աշխատող հարյուրավոր բժիշկներ կարողա-
նան բարձրացնել իրենց կվալիֆիկացիան: Սրա համար բավա-
կան է տրոպիքայաներին կից կազմակերպել բժիշկների կատարե-
լագործման ստացիոնար, կարճատև կուրսեր և այդ կուրսերին
կցել փորձված մասնագետներ: Շրջանային աշխատողների կվա-
լիֆիկացիան բարձրացնելու համար, պետք է լայնորեն կիրառել
հեռակա ուսուցումն և հեռակա կոնսուլտացիան:

Ղեկավար կազմակերպութեանները՝ դրա մասին ունեցած
վորոշումների կենսագործումը կապահովի մալյարիայի դեմ պայ-
քարող կադրերի պատրաստումը:

Մալյարիական ցանցի համար անհրաժեշտ միջին բուժպերսո-
նալի աշխատողներ պատրաստվում են բժշկական տեխնիկոմեն-
երի ցանցում՝ մալյարիայի տեսական դասավանդման և պրակտի-
կայի միջոցով:

Բժշկական ինստիտուտի և տեխնիկոմենների ուսանողութեանը
գործնական գիտելիքներ և ունակութեան տալու համար, յուրա-
քանչյուր տարի՝ մալյարիայի ռայոնների սովխոզներում և կոլ-
խոզներում պետք է կազմակերպվեն վերոհիշյալների համար
տեական արտագրական պրակտիկա:

Շատ խոշոր նշանակութեան ունի հիդրո-տեխնիքական ինս-
տիտուտների ու տեխնիկոմենների ուսանողութեանը մալյարիայի
հիմունքների և նրա դեմ ձեռնադիմող միջոցառումների հետ ծա-
նոթացնելը: Այս հարցում նրանց լիակատար անտեղյակ լինելը
հասցնում է նրան, վոր ավարտելով ուսումնական հիմնարկը, հի-
դրոտեխնիքական գործնական աշխատանք կատարելու ժամանակ,
այդ նորավարտ մասնագետներն իրենք են լայն պայմաններ
ստեղծում մալյարիայի տարածման համար: Վերև հիշված ու-
սումնական հիմնարկների ուսման ծրագրերում մտցրվում է մալ-
յարիայի հիմունքների և նրա դեմ պայքար մղելու մեթոդների
դասավանդումը:

Այդ առարկայի դասավանդումը մտցրվում է նաև բոլոր գյու-
ղատնտեսական դպրոցների ուսումնական ծրագրերում: Այս մի-
ջոցառումները զգալիորեն բարձրացնելու են ազգաբնակչութեան
մեջ սան-լուսավորական աշխատանքները:

Մալյարիայի դեմ լայն պայքարի կազմակերպման ու անց-
կացման գործում շատ խոշոր նշանակութեան է ստանում բոնի-
ֆիկատորների ինստիտուտը:

Ճահճուտների հայտնաբերման, հաշվառման, չորացնելու, լցնե-
լու, փոշեսրսկման և նավթալիման, ինչպես նաև ազգաբնակ-
չութեան պրոֆիլակտիկ խնիդացիայի աշխատանքները՝ պա-
հանջում են բավականաչափ զրազեա բոնիֆիկատորներ, այդ
գործը կատարելու համար պատրաստված և ընդունակ կադրեր:

3,010 հոգի բռնիֆիկատորները պատրաստման գործը դրվում է տրոպիկայանների վրա: Նրանք Առօրեկոմատից ստանում են բռնիֆիկատորներ պատրաստելու մասին հանձնարարականներ և կոնտրոլ թվեր, իսկ շրջագործկոմիտեներից, շրջկոլխոզմիտեթյուններից ակտիվ գյուղացիներին և համեմատաբար ակտիվ ու գրագետ կոլխոզնիկներին կադրեր՝ խինիզատորներ պատրաստելու համար:

Խինիզատորների կադրերի պատրաստումը պետք է նախատեսված լինի նաև բժշկական կրթության մասնաշաղկան սխեմով: Բժշկական քույրերի և «Կարմիր կիսալուսին» բնկերության կուրսերն ավարտածներին նույնպես կարելի չե ոգտագործել վորպես խինիզատորներ:

Հակամալյարիական ֆրոնտի աշխատանքը դժվար ու պատասխանատու է, վորովհետև նա անց է կացվում տրոպիքական պայմաններում, առանց ամառային և աշնանային արձակուրդների, պահանջում է պարբերական տեղափոխություններ և այլն: Սրա հետևանքով չեկած աշխատակիցների հոսունությունը վերացնելու համար և նրանց տեղերին ամրացնելու նպատակով, մալյարիայի ֆրոնտի աշխատակիցների համար սահմանվում է մի շարք արտոնություններ և նրանց նյութական վիճակի բարելավում:

Մալյարիական ուսյուններում աշխատող բոլոր աշխատակիցներին հասանելիք հերթական արձակուրդն, ըստ մալյարիական որենսդրության, ավելացվում է 6 բանվորական օրով: Բացի սրանից, աշխատած յուրաքանչյուր 3 տարվա համար, աշխատավարձի 20%-ի սահմաններում, տրվում է աշխատավարձի պարբերական հավելում, միմիայն այն պայմանով, վոր հավելման ընդհանուր քանակը չանցնի 100%-ից:

Բոլոր մալյարիոլոգ բժիշկները, բռնիֆիկատորները, խինիզատորները մատակարարման տեսակետից հավասարեցված են արդյունաբերական բանվորներին: Բռնիֆիկատորները և խինիզատորները մտցրվում են բժշկական աշխատողների կատեգորիայում: Սրանց տրվում է այն բոլոր իրավունքներն ու արտոնությունները, վորոնք սահմանված են գյուղական վայրերում աշխատող բուժ-պերսոնալի համար:

Համաձայն ԽՍՀՄ Կենտգործկոմի և Ժողկոմխորհի 1930 թվի ոգոստոսի 12-ի վորոշմանը՝ մալյարիայով սուր վարակված վայրերում աշխատելու 3 տարվա ստաժ ունեցող գիտական աշխատողներին և մասնագետներին, մյուսների համեմատությամբ, իրավունք է տրվում քաղաքում ուրիշ աշխատանքի տեղափոխվելու, գործուղվում են ասպիրանտուրաները և կատարելագործման կուրսերը: Նրանց տրվում է նաև գիտական գործուղումներ:

ՄԱԼՅԱՐԻԱՅԻ ԴԵՍ ՊԱՅՔԱՐՈՂ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

ԱՍՍՀ պայմաններում մալյարիայի դեմ պայքարելու արտակարգ կուլտուր-քաղաքական և տնտեսական նշանակությունը կատարում են նաև, հակամալյարիական միջոցառումները, վորպես՝ արտակարգ կարևորություն ունեցող սոցիալիստական պրոբլեմ, առանձնացված են մյուս առողջապահական ձեռնարկումների ընդհանուր խմբից:

ԱՍՍՀ-ի սահմաններում հակամալյարիական պայքարի պլանավորողը և ընդհանուր ղեկավարություն կենտրոնացնող որդանը հանդիսանում է Ժողկոմխորհին կից՝ Ժողկոմխորհի նախագահի նախագահությունը գործող Հակամալյարիական կոմիտեն:

ԱՍՍՀ Ժողկոմխորհին կից մալյարիայի կոմիտեն ընդհանրացնում է համաձայնեցնում է բոլոր տնտեսական, հասարակական կազմակերպությունների գործունեությունը՝ հակամալյարիական բնագավառում: Նրանց բյուջեներում սահմանում է մալյարիայի դեմ մղվող պայքարի ծախսերի չափը, հրատարակում է պարտադիր վորոշումներ, մշակում է մալյարիական որենսդրություն, կենսագործում է շրջագործկոմիտեներին, սովխոզներին և կոլխոզներին կից կոմիտեների ղեկավարությունն ու հսկողությունը, գրառվում է մալյարիայի դեմ պայքարող կադրերի պատրաստմամբ և զիտահետադոտական աշխատանքներով:

Հանրապետական մասշտաբով, մալյարիայի ոպերատիվ ղեկավարությունը դրված է Առօրեկոմատի և նրա Տրոպիկական Ինստիտուտի վրա: Վերջինս ուսյուններում՝ մալյարիայի դեմ պայքարի անմիջական ղեկավարության համար ունի իր տեղական ներկայացուցիչները: Մալյարիայի դեմ պայքարող լիազորն իր ղեկավարության ներքո ընդգրկում է մի շարք հարեան ուսյուններ, վորոնք անհամեմատ ավելի չեն վարակված մալյարիայով: ԱՍՍՀ-ի մասսիվի վրա մալյարիայով վարակված ուսյունները, վորոնք ունենալու են իրենց առանձին լիազորները, հանդիսանում են հետևյալները՝ 1) Մալյան—Մուղան, 2) Ղարաբաղ—Միլ, 3) Շիրվան, 4) Ղազախ—Գյանջա, 5) Սալմաս—Դիվլիջի, 6) Նախիջևան, 7) Լենքորան:

Վորպես ուսյունական լիազորներ՝ առաջ են քաշվում այն բժիշկները, վորոնք գիտական և գործնական աշխատանքների ընթացքում ԱՍՍՀ ուսյուններում մալյարիայի դեմ պայքարելու գործում, լիովին հայտնաբերել են իրենց:

Մալյարիայի դեմ պայքարող տեղական կոմիտեների պարտականությունն է Առօրյակոմատի և Տրոպիկական Ինստիտուտի պլանների և հրահանգների համաձայն, մալյարիայի դեմ պայքարելու կոնկրետ միջոցառումների անցկացումը, տեղական մարմիններին ոգնել, ինչպես նաև նրանց ու ամբողջ հակամալյարիական ցանցի գործնական ղեկավարումն և ուղղության ցույց տալը:

Մալյարիայի վարակիչ յուրաքանչյուր դեպքի գործկոմիտեի կից՝ ռազմագործկոմի նախագահի նախագահութեամբ՝ ստեղծվում են տեղական մալյարիական կոմիտեներ:

Տեղական մալյարիական կոմիտեների խնդիրն է՝ ռազմիկ մաշստարով, բոլոր կազմակերպությունների հակամալյարիական գործնականության վրա հսկողություն ունենալը. հսկել, վոր մալյարիայի որևէագործկոմը և ղեկավար մարմինների հրահանգները կենսագործվեն, հետևել տեղական մալյարիական սրգանների աշխատանքներին և կադրերի, միջոցների և սարքավորման ճիշտ ոգտագործմանը:

Մալյարիայի դեմ պայքարի ամբողջ օպերատիվ աշխատանքը տանում են տրոպիկայանները կամ դիսպանսերները:

Մալյարիական վայրերի խոշոր սովխոզներում, սովխոզի դիրեկտորի նախագահութեամբ՝ ստեղծվում են մալյարիական կոմիտեներ. կոմիտեների նպատակն է՝ մշակել և կյանքում կիրառել սովխոզի առողջացման համար անհրաժեշտ բոլոր հակամալյարիական ձեռնարկումները:

Առանձին արդյունաբերական հիմնարկներում և կոլխոզներում, բանվորական ուժի, քանակի և կարողությունից յեղնելով՝ կազմակերպվում և կոմիտե կամ հատուկ հանձնաժողով, վորը հաստատվում և մալյարիայի դեմ պայքարող կոմիտեի կողմից:

Ֆերկաթուղիների գծով, մալյարիայի դեմ պայքարող մարմինը հանդիսանում է Արդյերկաթգծի Վարչության Շանապարհային Սանիտարական Բաժինը, վորը աշխատում է, հենվելով ճանապարհի շրջանային սանիտարական բաժինների վրա:

ՍԱՆ-ԼՈՒՍԱՎՈՐՁԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԱՄԽՀ ժողովրդական տնտեսության առաջատար ճյուղերում, յերկրորդ հնգամյակում, մալյարիայի լիկվիդացիայի հսկայական ծրագիրը հնարավոր է արագ և իր ժամանակին կենսագործել՝ միմիայն մասսաների ակտիվության, նրանց ստեղծարար ինքնագործնականության մղելիզացիայի գեպքում:

Ամբողջ պրոլետարական հասարակականությանը մալյարիայի դեմ մղվող պայքարի գործում՝ ընդգրկելու խնդիրը պետք է լուծվի մասսայական կազմակերպչական աշխատանքի բոլոր ձևերի կիրառման միջոցով:

Անհրաժեշտ է լայնորեն կենսագործել աշխատավորության սանիտարական զբաղիտության բարձրացումը: Պետք է աշխատավորական լայն մասսաների համար հանրամատչելի դարձնել մալյարիայի, նրա բուժման, պրոֆիլակտիկայի, նրա բնույթի,

մալյարիան ճանաչելու մեթոդների և այդ հիմնադրության սոցիալական նշանակության ու նրա դեմ պայքարելու խնդիրները:

Աշխատավորության սանիտարական—կուլտուրականությանը բարձրացնելու համար, մալյարիայի դեմ մղվող պայքարի ծրագրում, պետք է ոգտագործվեն սան-լուսավորչական աշխատանքների բոլոր ուժեղ լծակները՝ դպրոցը, տպագրական և կենդանի խոսքը, ռադիոն, կինոն, թանգարանները, ցանցահանդեսները և այլն:

Մալյարիայի հիմունքների և նրա դեմ պայքարի միջոցների մասին պետք է դասավանդվեն բոլոր բժշկական բարձրագույն և միջնակարգ դպրոցներում, ինչպես նաև մանկավարժական, գյուղատնտեսական, հիդրոտեխնիկական ԲՈՒՀ-երում և տեխնիկումներում, կոլխոզիերիտդպրոցներում և մասսայական դպրոցի բոլոր ողակներում: Մալյարիական շրջանների համար կադրեր պատրաստող ուսումնական հիմնարկները պետք է տան հատուկ պատրաստականություն մալյարիայի մասին:

Պետք է մասսայականորեն տարածել մալյարիայի մասին, ինչպես գիտական-թեորետիկական, նույնպես և հանրամատչելի հրատարակություններ—բժշկական և մանկավարժական աշխատողների ձեռնարկներ, ակտիվ տեղեկատու գրքույկներ, գրականություն պիոներների և դպրոցականների համար, բանվորական և կոլխոզնիկ լայն մասսաների համար լողունգներ և պլակատներ: Բոլոր ժուռնալները, կենտրոնական և դիտական թերթերը, բազմաթիւրաժները, պատի թերթերը պետք է դառնան հակամալյարիական պրոպագանդայի ամենաուժեղ շեփոքները: Հատուկ զեկուցումները, դասախոսությունները, կենդանի պատկերների, ցուցադրական դասերի կազմակերպումը պետք է լրացնեն մամուլի աշխատանքը:

Մալյարիայի լիկվիդացիայի գործին հսկայական ոգուտ պետք է բերի ռադիոն. նա պարբերաբար պետք է հաղորդի զեկուցումներ, դասախոսություններ, լուրեր տա առանձին ձեռնարկումների և նրանց նշանակության մասին: Խոշոր պարտականություն է դրվում կինոյի վրա, մալյարիայի դեմ մղվող պայքարի նյութերը հատուկ ֆիլմերում, կադրաներում, կինոխրոնիկայով տալու, ինչպես և հրահանգչական ֆիլմերի ցուցադրության ասպարիզում՝ վորոնք պետք է բացատրեն հակամալյարիական առանձին միջոցառումները կիրառման մեթոդը:

Բոլոր մալյարիական կառուցվածքներին կից թանգարաններ և ցուցահանդեսներ ունենալը, թանգարաններում և սանպրոֆ-խորհրդի տներում ցուցահանդեսների և մուզեյների գոյությունը, աշխատանքի առողջացումը, բժշկա-պրոֆիլակտիկ ամբողջ ցանցում դրադարաններ և անկյուններ կազմակերպելը՝ զգալի դեր կխաղան աշխատավորության սանիտարական լուսավորչական գործում:

ՄԱԼՅԱՐԻԱՆ ՏԵՂ ՉՊԵՏՔ Ե ՈՒՆԵՆԱ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Յերկրորդ հնգամյակում հակամալարիական վճռական միջոցառումներ տանելու պլանն ուժերի հակայական լարում և ուժ և պահանջում:

Այդ պլանի կենսագործման համար խոշոր աշխատանք են տանելու տնտեսական (Ագրյուրտնտեսությունը, Ագրսովխոգտրեստը, Հողօրդկոմատը, տրանսպորտը, արդյունարերական, կենտրոնական ու տեղական և մյուսները), կուսակցական և պրոֆեսիոնալ կազմակերպությունները:

Մինչև այսօր գոյություն ունեցող մալարիայի դեմ պայքարելու նշանակություն թերագնահատությունը, ուղորտունիստական դանդաղկոտությունը, ձևական-բյուրոկրատական վերաբերմունքը, ինքնահոսը՝ վերոջ տնտեսական և խորհրդային կազմակերպություններում, նմանապես՝ մալարիայի դեմ պայքարելու նշանակության թերագնահատությունը՝ մի շարք տեղական կուսակազմակերպությունների կողմից անմիջապես վերացվեն և վճռական բեկում ստեղծվի, վերոյ ապահովի մալարիայի դեմ պայքարելու պլանի կատարման հաջողությունը, ինչպես մոտակա 1933 թ., նույնպես և ամբողջ հնգամյակի ընթացքում:

Ագր. Կ. Կ. (բ) Կ. Կ Բյուրոյի և ԱՍԽՀ ԺԿԽ վորոշման հիման վրա տնտեսական, կուսակցական, խորհրդային և պրոֆեսիոնալ կազմակերպությունների աշխատանքները վերակառուցելով «յերեսով դեպի մալարիան», վերակառուցելով հակամալարիական կազմակերպությունների բովանդակությունը, ձևերն ու մեթոդները, կենսագործելով ընկ. Ստալինի վեց պայմանները, վորոնք ապահովում են բոլշևիկյան տեմպերն ու վորակը հակամալարական աշխատանքներում, կազմակերպելով աշխատավոր մասսաներին՝ նրանց յեռանդը, ակտիվությունը և ստեղծագործական նախաձեռնությունը՝ լենինյան լոզունգի՝ սոցիալիստական մրցման հիման վրա՝ հաջողեցնենք լիովին հաղթանակը մալարիայի վրա:

Ծավալելով բոլշևիկյան ինքնաքննադատությունը, անխնա պայքարելով աջ ուղորտունիզմի և «ձախլիկ» պրոֆեկտորություն, աշխատանքի մեջ ինքնահոսի և դանդաղկոտության դեմ, կենսագործելով լենինյան սոցմրցման սկզբունքները, վորոնք խիստ դենք են հանդիսանում մասսաների սանիտարական դաստիարակ-

կության համար, աշխատանքները նոր ձևով վերակառուցելու՝ աշխատանքի փորձը փոխանակման և կազմակերպել «առաջավորների կողմից հետ մնացողներին ընկերական ոգնություն նրա համար, վորպեսզի ընդհանուր վերելք ձեռք բերվի» (Ստալին), լիովին իրագործենք ԱՍԽՀ մալարիայի դեմ նախադրված պլանը և սոցիալիզմի կառուցման տեմպերը:

Ձևաված միջադրային կոմունիստական պրոլետարական շարժման առաջնորդներ Մարքսի, Ենգելսի և Լենինի հեղափոխական գիտական գաղափարով, ԽՍՀՄ բանվոր դասակարգը ջախջախեց և վոչնչացրեց աշխատավոր մարդկության չարիք—կապիտալիզմը: Մարքսիզմի ու լենինիզմի ծածանվող դրոշակներով, հեռանկով մեր մեծագույն առաջնորդների պատգամներին, ամրապնդելով ՎԵԿԱՊԵ-ի (բ) և միջադրային պրոլետարիատի առաջնորդ ընկ. Ստալինի ուսմունքով ու ցուցմունքներով, մենք կվոչնչացնենք ու կվերացնենք աշխատավոր մասսաների զարհուրելի չարիք—մալարիան և բոլոր արգելակները, վորոնք գոյություն ունեն սոցիալիզմի հաղթական յերթի ձանապարհին:

Ազատ, ամեն ինչ հաղթանակող աշխատանքի սոցիալիստական տնդասակարգ հասարակությունը պետք է մեծագույն չափով աշխատունակ և առողջ լինի կոմունիստական կարգերի կառուցման ստեղծագործական և արդյունավետ ու գիտակից աշխատանքի համար և աշխատավորության պատուհաս—մալարիան—նրանում տեղ չի ունենալու:

ՅԵՎԼԱԽԻ ՇՐՋԱՆՈՒՄ ՄԱԼՅԱՐԻԱՆ ԼԻԿՎԻԴԱՑԻԱ ՅԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՊԼԱՆԸ

Անդրկովկասյան յերկաթուղու Յեվլախ կայարանը և ամբողջ Յեվլախի շրջանը ԱՍԽՀ-ի համար ունի շատ խոշոր քաղաքական և տնտեսական նշանակություն:

Այստեղ և ստեղծվում Բաղու-Թիֆլիս ուղղությամբ յերկաթուղու գծով մարդատար և ապրանքատար շարժման հանգույցը, ինչպես նաև Զաքաթալայի, Նուխու, Բարդի, Աղդամի, Ստեփանակերտի, Շուշիի և մի ամբողջ շարք շրջանների շարժման հանգույցը:

Բացի սրանից Յեվլախի վրայով կենսագործվում և հսկայական տնտեսական նշանակություն ունեցող տասնյակ գյուղատնտեսական շրջանների քարշը՝ զեպի արագ տեմպերով աճող Գյանջայի արդյունաբերությունը:

Այս շրջանի նշանակությունն ուժեղանում և և նրանով, վոր այստեղից և դուրս դալիս ամբողջ Ղարաբաղի մասսիվի արտադրանքը, վորը հանդիսանում է ԱՍԽՀ-ի բամբակային բազան:

Յերկրորդ հնգամյակում—տեխնիկական կուլտուրաների դաշտերի լայնացման, Թառթառգեսի, Մինդեչաուրի պորթլեմի կենսագործման, յերկաթուղային հանգույցի կառուցումը մինչև Շուշի, խճուղային ճանապարհների շինարարություն, Իստի-Սու-ի (Կարլսբադի անալոգիան) համամիութենական խոշոր նշանակություն ունեցող կուրորտի կառուցման, շրջանների արդյունաբերական աճի և այլնի կապակցությամբ՝ Յեվլախի շրջանը ստանում է արտակարգ նշանակություն: Մայրաքաղաքի գոյությունը Յեվլախի շրջանում մի քանի անգամ առաջադրել է, վորպես մի շատ լուրջ պրոբլեմ՝ այդ ռայոնի առողջացման հարցը:

Այս հարցի լրջությունը կայանում և նրանում, վոր Յեվլախի շրջանը վողոցում է Բուռ գետը, վորն ինչպես հեղեղների, նույնպես և իր տղմոտ ջրերով ստեղծում է նշանավոր չափով ամբողջ ռայոնում ճահճուտներ: Սրանք հանդիսանում են մալյարիայի բազմացման և մալյարիայի հիվանդությունը տարածելու լավ դուրս աղբյուրներ: Մարդկանց հսկայական տեղափոխություն այս շրջանի վրայով, մարդատար գնացքների տեղական (30-40 բուսի) կանգնելը Յեվլախ կայարանում, վորը հանդիսանում է հանգույցային կենտրոն, առաջ է բերում մալյարիայի ռայոնի ծավալումն՝ վոչ միայն Աղբեջանի լեռնային տողջ ռայոնների

ազգարնակչության նկատմամբ, այլ և Վրաստանի, Հայաստանի և ԽՍՀՄ-ի մյուս հանրապետությունների յերթեկեկոյների միջև:

Միակ այս պայմանը, առանց հաշվի առնելու շրջանի տնտեսական և արդյունաբերական նշանակությունն Աղբեջանի մալյարիայի դեմ մղվող պայքարում առաջ է քաշվում Յեվլախի շրջանը, վորպես առաջնակարգ և հարվածային լուծում պահանջող խնդիրներից մեկը:

Յեվլախի սրանից Աղբ. ԿԿ (բ) ԿԿ-ի և Ժողովուրդների ցուցմունքների համաձայն՝ Աղբեջանի Մալյարիական կոմիտեն արդեն իսկ 1932 թ. հարց դրեց, Յեվլախի շրջանի առողջացման համար վճարական հակամալյարիական ձեռնարկումների համար:

Չնայած նրան, վոր այս աշխատանքն սկսվեց միմիայն 32 թ. յերկրորդ կեսից և այս խնդիրն իրագործելու համար չգործադրվեցին և չուղղվեցին բոլոր հնարավորությունները, բայց 33 թվին կտա խոշոր չափով այս շրջանում մալյարիայով հիվանդացումների կրճատում:

Այդ աշխատանքները հանդիսանում են հետևյալները

1) Ինչի չալ գետը, վորը պատճառ է դառնում Յեվլախի կայարանի ճահճուտների ստեղծմանը՝ միացվում է Բուռ գետին, վորի վրա ծախսվելու է Աղբջանտեսություն և յերկաթուղու կողմից 360,000 աուրի:

2) Տասնյակ հազարավոր հեկտար ճահճուտները փարկոյան կանաչով բազմաթիվ անգամ այրոսրսկումը:

3) Յեվլախի մոտ գտնվող բոլոր ճահճուտների նավթով լցնելը:

4) Յեվլախի մոտ գտնվող ճահճուտներից մեկում Գամբուղիա կոչվող ձկան աճեցումը:

Միմիայն այս ձեռնարկումները, վորոնք այդպիսի խոշոր հարցում ռադիկալ ձեռնարկումներ չեն, ինչպես մալյարիայի լիակատար լիկվիդացիան, կբերեն այն ամբողջ շրջանում մալյարիայի մոծակների (անոֆելեսի) և ընդհանրապես մոծակների լիակատար լիկվիդացիան:

Այս բանը հաստատվում է, ինչպես տեղերից մալյարիական կոմիտեների հաղորդությամբ, նույնպես Տրոպիքական ինստիտուտի կողմից Յեվլախի շրջանն ուղարկված հատուկ բերիզադայի յեղրակացությամբ:

Յերկրորդ հնգամյակում Աղբեջանում մալյարիան լիկվիդացիայի յենթարկելու գործում վճող դերը խաղացող Յեվլախում, ինչպես նաև նրան կից բոլոր բամբակագործական շրջաններում նախատեսված և անցկացնել խոշոր հիդրոտեխնիքական ձեռնարկումներ՝ բոլոր ճահճուտների չորացման և նրանց առողջացնելու ասպարիզում:

Այս խնդիրը կենսագործելու համար կազմված է յերկու պլան.

1. ՊԼԱՆ.—Յեվլախի Մինդեչաուրի պորթլեմայի գործնական կենսագործումից, վորն արտակարգ կերպով հեշտացնում է ամբողջ խնդիրը և պահանջում է վոչ մեծ ծախսեր, վորո հետև մի քանի կիլոմետր յերկարությամբ ամբարտակի կառուցումը՝

լիկվիդացիայի ե յենթարկելու Քուռ գետի հեղեղումները և փլուզումները, ինչպես և խոշոր ճահիճների ստեղծումը մակերեսային ջրերից:

Այս դերքում Մինգեչաուրի շինարարութեան ընթացքի հետ միասին, 1936 թվին լիկվիդացիայի ե յենթարկվելու մալարիան վոչ միայն Յեվլախի և Նրա հարևան ուայոններում, այլ և այնպիսի հեռավոր ուայոններում, ինչպիսին ե Սաբիր-Աբաթի, Ալի-Բայրամլուի, Սալյանի ուայոնները:

Այս նախագիծը, ֆինանսական տեսակետից բամբակագործ շրջանների առողջացման համար աշխատանքի և եներգիայի ծախսման տեսակետից շատ ձեռնտու ե, սրա բացասական կողմը մալարիայի լիկվիդացիայի յենթարկելու յերկարատե ժամկետից ժամկետի կրճատումն ե (1936 թ.) այնքան, վորքան շրջանի արդյունաբերությունն ու շինարարությունը պահանջում ե այս ժամկետի կրճատման անհրաժեշտությանը:

II ՊԼԱՆ. — Յեխում ե Մինգեչաուրի պրորեկտից, անկախ հակամալարիական ձեռնարկումների անցկացման հնարավորություններից, այն դեպքում, յեթե միութենական կառավարութեան կողմից Մինգեչաուրի պլանը չհաստատվի: Այս դեպքում Յեվլախի շրջանի ռադիկալ առողջացման յերկու միջոցառումներ պետք ե նախատեսել. —

1. Հեղեղալրերի և ավելորդ շինարարական ջրերի շրջապատումն Յեվլախի կոտլովինայում և Նրանց լցվելու հնարավորութեան վոչնչացումը:

2. Ճահճուտների չորացումը:

Ձեռնարկումների I-ին խմբին պետք ե վերագրել. —

ա) Քուռ գետի փլուզումները:

բ) Ինչա չայ գետի ջրերը հավաքը-թափելը:

գ) Ջրող, ավելորդ ջրերի ընդգրկումն ու հավաքը, և թափելը:

Ձեռնարկումների II խմբին պետք ե վերագրել. —

ա) տիղմային ջրերի—վորտեղ դա հնարավոր ե և անհրաժեշտ ե—ցածրացումը:

բ) Ճահճուտների չորացումը:

32 թվի աշխատանքներով նախատեսվում ե Ինչա-չայ գետի և մասնակի կերպով ջրային ցանցի ավելորդ ջրերի ընդգրկում և հավաքը:

Հետևյալ տարիների համար դեռևս մնում են անկատար ներքոհիշյալ աշխատանքները. —

ա) Քուռի փլուզումները:

բ) Ավելորդ ջրող ջրերի ընդգրկումը և հավաքը:

գ) տիղմային ջրերի ցածրացումը, գլխավորապես ախմազներում — (գետերի հին հունը):

դ) Ճահճների չորացումը:

Առանց առաջի խմբի աշխատանքների կատարմանը (դադարեցնել մակերեսային ջրերի հասցնելը Յեվլախի կոտլովային) յերկրորդ խմբի վորե ե աշխատանքը վոչ մի միտք չունի, վորովհետեև այդ աշխատանքներն իրենց հետևանքում չեն տա հարցին

ռադիկալ լուծումն: Սրա համար ել առաջնահերթ աշխատանքների արտադրական պլանում մտցրված ե հատկապես մակերեսային ջրերի մուտքի դադարեցման աշխատանքները:

Ադրջրտնտեսութեան 1932 թ. սխեմատիկ ծրագրերում անհրաժեշտ հափով մշակված են

1) Քուռ գետի փլուզումների և

2) Ճահճուտների չորացման ծրագրերը:

Յեվլախի շրջանի որենտիր արաֆինալում հիմնավորված գումարներ հանդիսանում են այս յերկու տիպի աշխատանքների համար—չորացման ու փլուզման, իսկ ջրող ցանցի ավելորդ ջրերի հավաքման թափելու և տիղմային ջրերի ցածրացման աշխատանքների համար գումարներ ներկայացված են որենտիր կրպով, բայց և այնպես այդ աշխատանքների անցկացման համար միանգամայն բավարար են. Յեվլախի շրջանի առողջացման վարիանտի համաձայն կոնկրետ արդֆինալանը (ինժեներ Տրեգուբովի հաշվարկումներով) ներկայացնում ե հետևյալ պատկերը. —

I. Քուռ գետի փլուզումներ

Հողային աշխատանքների ծավալը.

Աջ ափին—20,4 կիլոմ. 188,763,66 խորանարդ մետրով:

Ձախ ափին—27,6 կիլոմ. 285,447,72 խորանարդ մետրով:

Ընդամենը 48 կիլոմ. 474,211,38 խորանարդ մետրով

Հողային աշխատանքների խորանարդ մետրի համար 3 բուբլի 60 կոպեկ արժողութեամբ: Ափերի փլուզումների արժեքն այդպիսով կկազմի — $188,763,66 \times 3$ բուբլի 60 կոպեկով կամ 679 549 ռուբլի 18 կոպ. և ձախ ափում $285,447,72 \times 3$ ռուբլի 60 կոպ. կամ 1,027,611 ռուբլի 79 կոպեկ. Քուռ գետի փլուզումների համար 1,707,160 ռուբլի 97 կոպ.:

II. Զրհան կայարանի յեվ նրանց լիակատար սարքավորման արժեք.

Աջ ափի № 2, № 4, (№№ 1, 2-ը 32 թվի հետադուրթյուններով) ախմազը Յեվլախի կայարանի մոտ—220046 ռուբլի, № 16-ը Ջարդիխան գյուղի մոտ Յեվլախից $2\frac{1}{3}$ կիլոմետր հյուսիս-արևմուտք 104,162 ռուբլի, «Շուշվա լիճ»-ախմազը Յեվլախից յերեք կիլոմետր հարավ-արևմուտք—(այստեղ հավաքվում նաև ջրող ջրերը) 86,954 ռուբլի. Վար-Վարի գյուղի մոտ Յեվլախից 5 կիլոմետր հեռավորութեան վրա գտնվող ախմազը—203, 926 ռ., ընդամենը 615,088 ռուբլի:

Ձախ ափին—Վերին Կարխուն գյուղի մոտ ախմազ № 9 և 13 195,964 ռ., Վերին Կարխուն և Կարա-ողլան գյուղերի միջև գտնվող № 14 ախմազը—152,503 ռուբլի. Կարա-ողլան գյուղի № 15 ախմազը—85,252 ռ., ընդամենը—433,719 ռուբլի:

Ընդամենը Քուռի աջ և ձախ ափում գտնվող ջրհան ախմազների վրա ծախսվելու ե 1,048,807 ռուբլի:

կամուրջները վերաշինման, ջրատար առուների, շյուղների, իրիգացիոն առուների այլ աշխատանքների վրա 400.000 ռուբլի: Յեվլախի շրջանի առողջացման վրա ընդամենը 3,056,977 ռուբլի, իսկ 3% հետազոտական աշխատանքների համար հատկացում — 94,710 ռուբլի, ընդամենը 3,251,587 ռուբլի:

Արսաղրական պլանը յեվ Ֆինանսավորումն ըստ տարիների

Նախատեսված ժամկետում (1935 թվին) աշխատանքների լիակատար ավարտման համար անհրաժեշտ և կատարել—

1933 թ. գետի լիակատար փլուզումը և աջ ափի №№ 11, 4, 16, 8, և ձախ ափի, 9, 13, 14 ախմազների չորացման նախապատրաստական աշխատանքները, ջրահան կայարանների շինարարությունը, խողովակային ջրմուղի հիմնադրումը, ինչպես նաև բոլոր հետազոտությունների ամբողջական ավարտումը:

1934 թվին սկսել վերոհիշյալ ախմազների ջրահան կայանների շահագործումը, աջ ափի № 17 և ձախ ափի № 15 ախմազների ջրահան կայանների կառուցման նախապատրաստական աշխատանքները, ջրատար առուների, կամուրջների, շյուղների սարքավորումն և այլն:

1935 թվին № 15 և 17 ախմազների ջրահան կայանների կառուցման և սարքավորման աշխատանքները վերջանում են:

Միջոցառումների ֆինանսավորումն ըստ տարիների

1933 թ.—Քուռ գետի փլուզումը	1,708,170 ռ.
Ջրահան կայանների կառուցման նախապատրաստումը, նրանց արժեքը 25%-ը	189,910 ռ.
759,630 ռ. գումարից	
Ջրատար առուներ, կամուրջներ, հետազոտություն և այլն	94,710 ռ.
Ընդամենը	1,992,790 ռ.:
1924 թ.—կայանների կառուցումը	569,720 ռ.
կայանների կառուցման նախապատրաստումն—	72,294 ռ.
Ջրատար առուներ, կամուրջներ, շյուղներ և այլն	300,000 ռ.
Ընդամենը	942,014 ռ.
1935 թ.—Ջրահան կայանների կառուցումը	216,906 ռ.
Ընդամենը 3 տարվա ընթացքում	3,151,710 ռ.:

Վերոհիշյալ միջոցառումների կիրառումը և ֆինանսավորումը իրենց հետևանքում՝ 1932 թվին կտան շրջանի առողջացումը 3 կիլոմետր, իսկ 1936 թվին՝ 5 կիլոմետր շառավիղով:

Բանվորական ուժի պահանջը

1933 թվին Քուռ գետի փլուզումների աշխատանքների վրա կպահանջվի մաքսիմում բանվորական ուժ:

Յենելով յուրաքանչյուր բանվորին որական 3 խորանարդ մետր գցելու հաշվից—կպահանջվի 474,208 որ՝ բաժանած 3-ի —այսինքն 158,069 մարդկային որ:

1933 թվին հաշվելով մոտավորապես 160 բանվորական որ՝ 7 ամսվա ընթացքում որական կունենանք 1000 բանվորի պահանջ:

Ծախսերի բաժանումը սննդավարական հիմնարկությունների միջև

Յեվլախի շրջանի առողջացմամբ շահագործված են մի շարք տնտեսական հիմնարկություններ, ինչպես Անդրյերկաթագիծը, Ազնեվթը—(վորը ունի խոշոր ջրահան-կայարան), Բարդայի շրջագործկումը, և ուրիշները:

Մրա համար էլ շրջանի առողջացման ծախսերը, վորոնք արտահայտվում են 3,251,710 ռուբլով, կարելի է բաժանել բոլոր տնտեսական հիմնարկների միջև:

Յեզրակացություն—կոմբինատի կառուցման մասին

Յեվլախի շրջանում 5 կիլոմետր շառավիղով ճանհուտների չորացումը ստեղծում է 7 կիլոմետր շառավիղով զոնա և այսպիսով լիակատար հնարավորություն է տալիս այդ ռալյոնում նախագծված մասշտաբով կոմբինատի կառուցմանը:

Կոմբինատի կառուցումը նպատակահարմար է անցկացնել Խնչա-չայ գետի ուղղությամբ՝ դեպի յերկաթագծի ճանապարհը: Ստեղծվող 100 քառակուսի կիլոմետր առողջ տարածությունը լիովին ապահովում է նորմալ շինարարությունը և կոմբինատի աճումը:

Կոմբինատի կառուցման մեջ անպայման անհրաժեշտ է նախատեսել բուժական և պրոֆիլակտիկ կառուցվածքները, ինչպիսին են.—

1) Տրոպկայանի կառուցումը՝ 50 ստացիոնար մահճակալով 360,000 ռուբլու արժողությամբ:

2) 5 մալյարիական դիսպանսերի կառուցումը, առանց ստացիոնարների, յուրաքանչյուրը 70,000 ռուբլու արժողությամբ, ընդամենը 360000 ռուբլու:

3) 6 մալյարիական կետերի կառուցումը, յուրաքանչյուրը 35,000 ռուբլու արժողությամբ—ընդամենը 210000 ռուբլու:

Ամբողջ գումարը 920.000 ռուբլի:

Անհրաժեշտ է նաև նախատեսել խինինի մատակարարումը, բանվորների և նրանց ընտանիքների պրոֆիլակտիկ խինիզացիայի համար՝ 6,500 կիլո քառակուլությամբ—3,250 ռուբլու արժողությամբ:

Հակամալյարիական ցանցի շինարարությունը, առաջին հերթին պետք է ապահովվի պլանում նախատեսված կոմբինատի շինարարությամբ:

Կոմբինատի և մյուս արդյունաբերական ձեռնարկների պլաններում, ինքն ըստ ինքյան հասկանալի ե, վոր պե ոք ե նախատեսվի բանվորներին համապատասխան բնակարաններով, սնունդով, ջրմուղով, ճաշարանով, բաղնիքով, արտաքնոցներով, անցարաններով, պրոպուսկներով և դեղիֆիկացիոն կամերայով ապահովելու հարցը:

Ինչ վերաբերում ե շրջանի բանվոր աղգաբնակչությանը մեխանիկական պրոֆիլակտիկայի յենթարկելու խնդրին—ցանցավորմանը, կծեւու դեմ, ծածկոցներով ապահովելուն և այլն, հասկանալի ե, վոր այս միջոցառումներն ինչպես պարտադիր միջոցառումներ հակամալարիական որենսդրության համաձայն, առղջացման ընդհանուր պլանում չեն մտցրվում. ավելի ես այն ժամանակ, յերբ այդ միջոցառումների կենսագործման հետ կապված ծախսերը, այնքան ել մեծ չեն և յուրաքանչյուր տնտեսական միավոր, հերթական աշխատանքի կարգով, կարող ե անցկացնել այդ միջոցառումները:

Հ Ա Վ Ե Լ Վ Ա Ծ

ԱԴՐԲԵՋԱՆԻ Կ. Կ. (Բ) Կ. Կ.-Ի ԲՅՈՒՐՈՅԻ

1932 թ. 19 ապրիլի

ՎՈՐՈՇՈՒՄԸ

ԲԱՄԲԱԿԱՅԻՆ ՇՐՋԱՆՆԵՐՈՒՄ ՄԱՆՅԱՐԻԱՅԻ ԴԵՄ ՊԱՅԲԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. ԱՍԽՀ-ի պայմաններում մալյարիայի դեմ պայքարելու գործին տալով արտակարգ կուլտուր քաղաքական և տնտեսական նշանակություն՝ Ադր. ԿԿ (Բ) ԿԿ-ի Բյուրոն գտնում է, վոր Ա. Ս. Ն. Հ.-ում այս աշխատանքը տանող բոլոր կազմակերպությունների հիմնական խնդիրն է հանդիսանում՝ տնայնագործական, ան-սխտեմ միջոցառումներից՝ ԺԿԽ-ին կից Մալյարիայի կոմիտեյի կողմից մշակված պլանի հիման վրա՝ անցնել լայնածավալ պայ-քարի աշխատավոր մասսաներից և գյուղի ու քաղաքի խորհրդա-յին հասարակականությանը համախմբել արդ պլանի կենսագործ-ման շուրջը:

2. Այս նպատակով, Կենտկոմի Բյուրոն անհրաժեշտ է համա-րում, հունիս ամսում հրավիրել մալյարիայի դեմ պայքարի հան-րապետական խորհրդակցություն, հակամալյարական պայքարի ընթացիկ խնդիրը և խոշոր ձեռնարկումների հեռանկարային պը-լանը մշակելու համար այս ձեռնարկումները պետք է ապահով-վեն հանրապետական, միութենական, անդրկովկասյան կազմա-կերպությունների և տրեստների կողմից, ինչպես նաև տեղական բյուջեյով, 1932 թ. 33 տարում նախատեսված հատկացումներով և յերկրորդ հնգամյակում:

3. Նշելով ինչպես կենտրոնական, նույնպես և շրջանային, ազմինիստրատիվ և հասարակական կազմակերպությունների, հատկապես Ադրջրտնտեսության, Ադրբամբակիացության, Հոդ-ժողկոմատի, Կոլխոզկենտրոնի և շ. ջգործկոմների միասնակցությամբ մալյարիայի դեմ պայքարելու միջոցա-ռումների գործում՝ Ադր. Կ.Կ.(Բ) Կ.Կ.-ի Բյուրոն մալյարիայի դեմ պայքարում վճռական բեկումն ապահովելու նպատակով առաջար-կում է. —

ա) Հոդժողկոմատին, Ադրջրտնտեսության, Ադրբամբակիա-ցության, Կոլխոզկենտրոնին, Կասպար-ին, Ագրիբորեստին, Յերկաթգծին և մյուս տնտեսական հիմնարկներին, պրոֆմիու-թյունների մասնակցությամբ, կազմել հակամալյարական պայ-քարի իրենց ոլլանները, համաձայնեցնելով այն Առժողկոմատի և

Տրոպիքական ինստիտուտի հետ, վոչ ուշ քան մինչև մայիսի 1-ը հանձնել այն Մալյարիայի կոմիտեյին հաստատելու համար:

բ) ԺԿԽ ին—տամորյա ժամկետում հատուկ վորոշում հանել հակամալյարական ձեռնարկումները ֆինանսավորելու համար, ներգրավելով հակամալյարական պայքարի ֆինանսավորման գործում բոլոր շահագրգռված տնտեսական հիմնարկները:

գ) Ադրբեջանի վնասատուների Դեմ Պայքարող Ընկերության մշակել ալիումեթոդով Կարա-Ջալա, Մտալինի և Աղիգբեկովի ան-վան սովխոզներում և Յելվախի շրջանի գտնվող ճահճուտները՝ այս միջոցառումների ծախսերը դնել Անդրբամբակիացության՝ Ադրջրտնտեսության, Ադրպետապի և յերկաթուղու վրա:

դ) Առժողկոմատին—տարածել լայն սան-լուսավորչական աշ-խատանք, մալյարիայով վարակված շրջաններում՝ սան-ցուցա-հանդեսների, սանիտարական շարժական գրականության և ցու-ցահանդեսների, սան լուսավորչական տների և սխտեմատիկ դա-սախոսությունների կազմակերպման միջոցով, կենսագործելով հիշյալ միջոցառումներն առաջին հերթին ազգաբնակչության կազմակերպված խմբերի միջև սովխոզներում և կոլխոզներում:

4. Ադր. Կ. Կ. (Բ) շրջկոմներին բամբակային մալյարիայի շրջաններում նախագահության նիստերում լսել շրջգործկոմների ղեկավարները շրջանի հակամալյարական պայքարի պլանի և կոնկրետ միջոցառումների մասին՝ նշանակելով հատուկ լիազոր հակամալյարական պայքարը ղեկավարելու համար:

5. Արձանագրելով ԱՍԽՀ Մալյարիայի կոմիտեյի լիակատար անաշխատունակությունն անցյալ շրջանում, համաձայնվել ԱՍԽՀ Ժողկոմխորհի վորոշման հետ տվյալ կազմը ցրելու մասին:

Ոպերատիվ ղեկավարության ապահովելու նպատակով՝ ան-հրաժեշտ համարել Մալյարիայի կոմիտեյի համար ունենալ ա-զատված պատասխանատու քարտուղար:

Կենտկոմի բյուրոի հաջորդ նիստում հաստատել Մալյարիայի կոմիտեյի նոր կազմը:

Հակամալյարական պայքարի միջոցառումների ընդհանուր պլանային ղեկավարությունը ԱՍԽՀ-ում կենտրոնացնել ԱՍԽՀ ԺԿԽ-ին կից Մալյարիայի կոմիտեյում:

Մալյարիայի դեմ պայքարի ոպերատիվ ղեկավարությունը դնել Առժողկոմատի և Տրոպիքական ինստիտուտի վրա:

6. Կենտկոմի կադրերի բաժնին—տամորյա ժամկետում ներ-կայացնել քարտուղարությունն ի հաստատության մալյարիայի դեմ պայքարելու ընթացիկ միջոցառումներն անհրաժեշտ կադ-րերով ապահովելու կոնկրետ առաջադրություններ, մի ամսվա ժամկետով քարտուղարություն մտցնել ի հաստատության Ա. Ս. Ն. Հ.-ում մալյարիայի դեմ պայքարող կադրերի պատրաստման և վերապատրաստման համար լայն առաջադրություններ:

ԱՍԽՀ ԺԿԽ-ի 1932 թ. 17 ապրիլի

**ԱՍԽՀ-ՈՒՄ 1932 թ. ՀԱԿԱՄԱՆՅԱՐԻԱԿԱՆ ՄԻՋՈՑԱ-
ՌՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

1. ԱՍԽՀ Ժողովրդական տնտեսության պլանը կատարելու նպատակով հակայական տեմպերով աճող յերկրի ինդուստրիալիզացիան ապահովող կենդանի արտադրական ուժերը պահպանելու և ավելացնելու նպատակով, առողջացման միջոցների ընդհանուր խմբից առանձնացնել հակամալարիական միջոցառումները, վորպես արտակարգ կարևոր նշանակություն ունեցող պրոբլեմ, մալարիայի դեմ պայքարելու գործում ստեղծելով վճռական շրջանադարձ:

Միաժամանակ ընդգծել հակամալարիական միջոցառումների գործում, ինչպես կենտրոնական, նույնպես և շրջանային տնտեսական, վարչական և հասարակական կազմակերպությունների (հատկապես Ագրըրտնտեսության, Անդրբամբակմիացության, Հողօգտագործության, Կոլխոզկենտրոնի և շրջագործկոմիների) միանգամայն անբավարար աշխատանքը:

Հակամալարիական պայքարն ապահովող միջոցառումների գործում վճռական շրջագործ ստեղծելու նպատակով առաջարկել Հողօգտագործության, Ագրըրտնտեսության, Անդրբամբակմիացության, Կոլխոզկենտրոնին, Սովտոբգֆլոտին, Ագրրիբորեստին և Անդրյերկաթուղուն մշակել իրենց աշխատանքների կոնկրետ ծրագիր, համաձայնեցնելով այն Առօրյակոմստի և Տրոպ-ինստիտուտի հետ: Այդ ծրագիրը ներկայացնել Մալարիական կոմիտեյին հաստատելու համար:

Մալարիայի կոմիտեյին պլանների ներկայացման ժամկետը սահմանել մայիսի 1-ը:

3. Շրջաններում չթուլացնելով մալարիայի դեմ պայքարի հատուկ պրոֆիլակտիկ բուժական մեթոդների զարացման տեմպը—վորը հիմնականում կայանում է պրոֆիլակտիկ խինիզացիայի և հակամալարիական կառուցվածքների արագ լայնացման մեջ՝ վճռական կուրս վերցնել լայն առողջապահական սահնիտարա մեխիորատիվ և հիգրո-տեխնիքական միջոցառումների կենսագործման ուղղությամբ: Ընդունել, վոր ԱՍԽՀ-ին հատկացված խինինի քանակը չի ապահովում Ագրբեջանի բամբակային շրջանների կարիքը:

Խնդրել Անգրթողկոմիտեյին, վերանայել խինինի բաշխման գոյություն ունեցող կարգն այն հաշվով, վոր Ագրբեջանին տրվելիքը հավասար լինի ԱՍԽՀ ին հատկացված ամբողջ քանակի 50%-ին, այնպես նաև խնդրել ԱՍԽՀ ԺԿԽ ին, միջնորդել Համ. ՍԽՀ Ժողկոմիտեյի առաջ ԱՍԽՀ ի համար լրացուցիչ խինին բաց թողնելու:

5. Հանձնարարել Առօրյակոմստին տեղերում հակամալարիական կետերի միջոցով կազմակերպել—

ա) բամբակային շրջաններում մալարիայի մոծակների ձմեռանոցների ծուխ տալը. այս աշխատանքն անցկացնել առաջին հերթին կոլխոզներում և սովխոզներում:

բ) մալարիայի դեմ պայքարող կետերից 5 կիլոմետր շառավիղով տարածություն վրա, մալարիայի մոծակի թռիռների վոչնչացումը, ճահճուտների մազուկացման, նավթասրսկման, փաբրիկային փոշեսրսկման միջոցով: Շրջագործկոմիները, քաղխորհրդները, սովխոզները պետք է մալարիայի դեմ պայքարող կետերի տրամադրության տակ դնեն պահանջված քանակությամբ բանվորական ձեռքեր, նավթ, խնչպես նաև փոխադրական միջոցներ:

6. Շրջագործկոմիներին, քաղխորհրդներին, սովխոզներին ՄՏԿներին—իրենց ուժերով անցկացնել մի ամիս ժամանակամիջոցում մանր ճահճուտների չորացումը և իրենց տերրիտորիայի վրա գտնվող ջրանցքների կարգավորումը:

7. Ագրըրային տնտեսության—անմիջապես սկսել բամբակային շրջաններում ճահճուտ տեղերը հայտնաբերելու հետազոտական աշխատանքները և կազմել ճահճուտների լիակատար քարտեզը:

8. Ագրըրտնտեսության և Անդրբամբակչինին—մի ամսվա ժամկետում կառուցել Ագիդբեկովի և Որջոնիկիձեյի անվան ջրանցքներում ավելորդ ջրատար առուների ցանց:

9. Անդրսովխոզբամբակին—ընկ. Զադրայի պատասխանատվությամբ՝ անմիջապես սկսել Կարա-Չալայի և Միլի սովխոզների ճահճուտների չորացման և առողջացման պլանի կազմումը: Աշխատանքը պիտի կատարվի մի ամսվա ընթացքում:

10. Ագրբեջանի Վնասատուների Դեմ Պայքարող Ընկերությանը ավիոքիմիական մեթոդով մշակման յենթարկել Կարա-Չալայի և Յեվլախի շրջանի ընկ. Ստալինի և ընկ. Ագիդբեկովի անվան սովխոզների ճահճուտները, հիշյալ աշխատանքների կատարման ծախսերը համապատասխան կարգով դնել Անդրբամբակմիացության, Ագրըրտնտեսության և Ագրպետսպի վրա:

11. Առաջարկել ԱՍԽՀ Հողօգտագործության, Առօրյակոմստի հետ միասին տաս օրվա ընթացքում, մշակել մաուլայի պահանջի պլանը սովխոզների, կոլխոզների և անհատական գործածության լանը սովխոզներին, համարման համար, միջնորդություն հարուցել ՍԽՀ կարիքի բավարարման համար, միջնորդություն հարուցել ՍԽՀ Մատօղկոմստի առաջ այդ պահանջը բավարարելու համար:

12. Մալարիայով վարակված շրջանների բոլոր հիմնարկների—սովխոզների, ՄՏԿներին,—անհատական թանձիֆներով և ծածկոցներով ապահովել բոլոր բանվորների, ինչպես նաև պարտադիր կարգով անցկացնել բարակների, հանրակացարանների, հասարակական հավաքույթների վայրերի, խրճիթ-ընթերցարանների և ճաշարանների ցանցավորումը և այլն:

13. Մալարիայի շրջաններն արհեստական պաշտպանության միջոցներով ապահովելու համար՝ առաջարկել Ազսնաբաբիտին,

տաան որվա ընթացքում մշակել և ներկայացնել մալյարիայի կոմիտեյին մալյարիայի շրջաններին մետաղյա ցանցերի (պատուհանների համար) պահանջի մատակարարման պլանը՝ վերա նայելու համար:

14. Նշելով բժշկական կադրերի խոշոր պակասը, միջնորդութուն հարուցել Անդրժողովուրդի առաջ, Վրաստանից և Հայաստանից Ադրբեջանի բամբակային շրջանները—50 բժիշկ ուղարկելու մասին:

15. Առաջարկել Առժողովումատին, հունիսին Ադրբեջական ինստիտուտն ավարտող բժիշկների 30%-ը տրամադրել հատկապես ԱՍՍՀ մալյարիայի դեմ պայքարող կետերին:

16. Ազգաբնակչության բանտարական կուլտուրականությունը բարձրացնելու նպատակով.—

ա) Առժողովումատին—ծավալել լայն սան-լուսավորչական աշխատանք, մալյարիայով վարակված շրջաններում սան-ցուցահանդեսների, սանլուսավորության տների և սիստեմատիկ դասախոսությունների կազմակերպման միջոցով, այս ձևերով մեծ զլխավորապես կիրառել կազմակերպված ազգաբնակչության մեջ կոլխոզներում և սովխոզներում:

բ) Լուսժողովումատին—1-ին և 2-րդ աստիճանի դպրոցների, բոլոր մանկավարժական տեխնիկումների, սովխոզ ուսերի, կոլխոզ-յերիտ-դպրոցների, մանկավարժական ինստիտուտի, Ադրբեջանի բամբակային ինստիտուտի, Ադրբամբակագործ, ինստիտուտին բացնել հիմնական հասկացողություն դասավանդման ծրագրերում տրոպիքական հիվանդությունների և նրանց դեմ պայքարելու մասին:

17. 1932 թվին հակամալյարիական ձեռնարկումների վրա ծախսումների ծավալը—բացառությամբ այն ծախսերի, վորոնք կապված են խոշոր առողջացման և հիդրոտեխնիքական միջոցառումների հետ—սահմանել 3,883,800 ուրբու չափով, սրանից 700 հազար պետական բյուջեյով, 800,000 տեղական բյուջեյով և և 2,333,800 ուրբի՝ տնտեսական և հասարակական կազմակերպությունների հաշվին:

18. ԱՍՍՀ Պետպլանին և Ֆինժողովումատին—համապատասխան մարմինների ֆինպլաններում ցույց տալ 32 թ. հակամալյարիական ձեռնարկումների համար վերը նախատեսված ծախսերը:

19. Ֆինժողովումատին—Առժողովումատի պլանների համաձայն՝ ապահովել 1932 թ. հակամալյարիական միջոցառումների առանձին հերթին ֆինանսավորումը:

20. ԱՍՍՀ-ում հակամալյարիական միջոցառումների պլանային և ոպերատիվ ղեկավարությունը կենտրոնացնել ժողովուրդին կից մալյարիայի դեմ պայքարող կոմիտեյում: Կոմիտեյի անմիջական ղեկավարությունը թողնել ԱՍՍՀ Առժողովումատին և Տրոպիքակ ն ինստիտուտին:

21. Առաջարկել Առժողովումատին և Տրոպիքական Ինստիտուտին 2 դեկադ ժամանակամիջոցում ներկայացնել ժողովուրդին

Տրոպիքական ինստիտուտին անհրաժեշտ սարքավորման նախահաշիվը:

22. Բամբակային շրջանները, հատկապես այն վայրերը, վորտեղ պետք է քոչվորները նստակյաց կյանք վարեն՝ խմելու ջրով ապահովելու համար առաջարկել Հոդժողովումատին, 1932 թ. սկսել հետազոտական աշխատանքներ՝ տանել դյուղական վայրերում ջրմուղներ կառուցելու համար:

23. Առաջարկել Ազերիտտիֆիկին, Առժողովումատի համաձայնությամբ Հայաստանում դնել անհրաժեշտ քանակությամբ ջրադաշններ (ֆիլտր) և հասցնել այն մալյարիայով վարակված շրջանները, ապահովելով առաջին հերթին կոլխոզներին, սովխոզներին և քոչվորների նստակյաց շրջաններին:

24. Առժողովումատին—Կոլխոզկենտրոնի հետ միասին մշակել հակամալյարիական միջոցառումների գործում կոլխոզային սիստեմի մասնակցությունը պլանը:

25. Նշելով մալյարիոլոգ բժիշկների բնակարանային և կենցաղային պայմանների դժվարությունը շջաններում, վորն առաջացնում է բժշկական կազմի մեջ հոսունություն և անդադառնում է աշխատանքների վորակի վրա, անհրաժեշտ համարել մալյարիական կետերում աշխատող բժիշկներին մատակարարման տեսակետից հավասարեցնել ինդուստրիալ բանվորներին (Տրոպիքաինստիտուտ, տրոպիքայաններ, մալյարիայի դիսպանսերներ և կետերի):

26. Առաջարկել Պետպլանին, բոլոր ձեռնարկներին և տնտմարմիններին ԱՍՍՀ ԺԿՀ-ի հաստատած 1932 թ. ստուգիչ թվերով, ֆինպլաններում, արդֆինպլաններում, հաշվիտու մատերիալներում մալյարիայի դեմ պայքարելու ցանցային ծախսերը և մյուս ցուցանիշներն առանձնացնել առանձին տիտուլով:

27. Առաջարկել շրջործկոմներին դադարեցնել հակամալյարիական կետերի բժիշկների ոգտադործումը շրջաններում այն աշխատանքներում, վորոնք կապված չեն մալյարիայի դեմ մղվող պայքարի հետ:

28. Տեղական և կենտրոնական թերթերի խմբագրություններին—սիստեմատիկ կերպով լուսաբանել այն հարցերը, վորոնք կապված են բուժապատարկման և հատկապես հակամալյարիական միջոցառումների հետ:

29. Բանդյուղտեսչության ժողովումատին, Առժողովում հետ միասին վերցնել հատուկ հսկողության տակ բոլոր կազմակերպությունների վրա մալյարիայի դեմ պայքարի միջոցառումների տապարիզում դրված խնդիրների կատարումը, պարբերաբար ժողկոմխորհին տեղյակ պահելով 32 թ. հակամալյարիական միջոցառումների վիճակի մասին:

БИБЛИОТЕКА
ИИ ОТИТУТА
ВОЗНУШЕДЕЖИИ
Академии Наук
СССР 61

30. Հանձնարարել կատարման հանձնաժողովին սխտեմատիկորեն ստուգել ներկա վորոշման կիրառումը: Ներկա վորոշման կիրառման և թացքի մասին՝ 1932 թվի հունիս ամսում լսել Մալարիայի կոմիտեյի ղեկուցումը՝ Բանգյուղտեսչության ժողկոմատի հարակից ղեկուցման հետ միասին:

ԱՍԽՀ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի
նախագահ՝ Գ. ԲՈՒՆՅԱՆ-ՉԱԿԵ

ԱՍԽՀ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի գործերի
կառավարիչ՝ Ս. Ա. ՍԱԿԻՆՈՎ

Հրատարակված է «Բակ. Գր.»
23 օգոս. № 198 (3779).

ԱՍԽՀ ԺՈՂԿՈՄՍԽՈՐՀԻՆ ԿԻՑ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԱ- ԺՈՂՈՎԻ 1932 Թ. ՈԳՈՍՏՈՍԻ 14-Ի

ՎՈՐՈՇՈՒՄԸ

Ադր. Կ Կ. (բ) Կ. Կ. ի 19 ապրիլի յեվ ԱՍԽՀ ԺԿԽ-ի 1932 թ. ապրիլի 17-ի № 588-ի—1932 թ. «ԱՍԽՀ ում հակամալյարիական միջոցառումների մասին յեղած վորոշումների կատարման ընթացքի մասին»)

1. Լսելով ԱՍԽՀ ԺԿԽ-ի Մալյարիայի կոմիտեի ղեկուցումը (ընկ. Մամեղլի), ԱԿԿ. (բ) Կ. Կ. Բյուրոյի «19/IV—1932 թ. և ԱՍԽՀ ԺԿԽ-ի 17/VI ս. թ. 1932 թ. ԱՍԽՀ ում հակամալյարիական միջոցառումների մասին» յեղած վորոշումների ընթացքի մասին՝ կատարման հանձնաժողովին արձանագործում եւ.—

1. Վոր չնայած Ա. Կ. Կ. (բ) Կ. Կ.-ի և ԱՍԽՀ Ժ. Կ. Խ-ի կատեգորիկ ցուցմունքներին՝ հակամալյարիական միջոցառումների կարեւորության մասին—մի շարք կենտրոնական և տեղական մարմիններ չափազանց անբավարար չափով են կատարել վերոհիշյալ վորոշումները. սա վկայում եւ, վոր անտեսական մարմիններն ու հիմնարկներն թերագնահատում են մալյարիայի դեմ պայքարի կուլտուր-քաղաքական նշանակությունը:

2. Հատկապես անուշադիր վերաբերմունք են ցույց տվել կենտկոմի և ժողկոմխորհի վորոշումների հանդեպ Ադրջրտեսչության, Անդրսովխոգրամբակտեստը, Կոլխոզկենտրոնը և Ազերիտտիֆակը. նույնպիսի անուշադիր վերաբերմունք են ցույց տվել նաև Բարդայի և Ալի Բայրամլուի, Գյոլգալի, Աղբամի, Աղջաբեզու, Մալյանի շրջագործկոմները, ինչպես նաև Հոգժողկոմատը չի հետևել և հսկել, վորպեսզի իր յինթակա մարմինները կենսագործեն վերոհիշյալ վորոշումները:

3. Կատարման հանձնաժողովը հատկապես նշում եւ, վոր Մատակարարման ժողկոմատը չի կատարել ԱՍԽՀ և ԺԿԽ-ի մալյարիայի կետերում աշխատող բժիշկներին, մատակարարման տեսակետից—ինդուստրիալ բանվորներին հավասարեցնելու մասին յեղած վորոշումը:

4. Բացի դրանից, չի իրագործված ԺԿԽ ի վորոշումը, 1932 թ. հակամալյարիական միջոցառումների ծախքերի ծավալման մասին: 3,883,600 ուրբու փոխարեն առայժմ առանձնացված ե 2,592,800 ու. սա բացատրվում ե նրանով, վոր մի քանի կազմակերպություններ իրենց կողմից տրվելիք գումարները պարտավորությունները չեն կատարել (Տրակտորկենտրոնը՝ 170.000, Բագվի Սպառ. Միություն՝ 50,000 ու., «Ուլցետո»՝ 30,000 ու., «Կարմիր Կիսալուսին»՝ 30.000 ուրբլի, «Սկոդովոդ»՝ 73.000 ուրբ., «Զակիներալուդ»՝ 43.000 ուրբլի):

Յեկնելով սրանից, ԱՍԽՀ ԺԿԽ-ին կից կատարման հանձնաժողովը վորոշում եւ.—

1. Սռաջարկել Ադրջրտեսչության, ընթացիկ տարում առանց առարկումների, կատարել Ինչա-Ջայ գետի ջրերի հավաքման և վոչնչացման, բամբակագործական շրջաններում ճանճային տեղերի հետադոտման և հայտնաբերման խնդիրները, կազմել ճանճուտների քարտեզը և կառուցել Աղիգբեկովի և Ուրջոնիկիձեյի անվան ջրանցքների ջրատար ցանցը:

Վերոհիշյալ վորոշումներն իր ժամանակին չկատարելու և ԱՍԽՀ. ԺԿԽ-ի վորոշումների նկատմամբ անուշադիր վերաբերմունք ցույց տալու համար՝ Ադրջրտեսչության կառավարիչ ընկ. Գալիլովին և նրա տեղակալ Սադիկովին՝ ի ցույց դնել:

Ժողկոմխորհի վորոշումները և Մալարիայի կոմիտեյի առաջարկությունները չկատարելու համար՝ ընկ. Զանջրային նկատողություն անել:

3. Անդրբամբակչիների վերակառուցման պատճառով, առաջարկել Ադրջրտեսչության, ընկ. Հուսեյնբեկովի անձնական պատասխանատվությամբ՝ մինչև հոկտեմբերի 1-ը կատարել Ադր. ԿԿ (բ) ԿԿ-ի և ԱՍԽՀ ԺԿԽ ի ցուցմունքները:

4. Պարտավորացնել Ազերիտտիֆակին՝ ապահովել մալյարիայով վարակված շրջանները 3000 ֆիլտրներով, առաջին հերթին այդպիսիներով ապահովել սովխոզները և քոչվորների նստակայաց շրջանները:

5. Հանձնարարել Մատթողկոմ ընկ. Ռադիոնովին, Փոնդժողկոմի լիազոր ընկ. Զառաֆյանին և ընկ. Միրզաբեկյանին (Ազերիթթիֆակ) ձեռք առնել անհրաժեշտ միջոցներ բժիշկներին (նրանք, վորոնք աշխատում են մալյարիայի կետերում) մատակարարման տեսակետից ինդուստրիալ բանվորներին մատակարարման հավասարեցնելու համար դառնել անհրաժեշտ ֆոնդեր, տեղերին անհրաժեշտ հրահանգներ տալ մալյարիայի կետերում աշխատող բժիշկներին և կատեգորիայով մատակարարելու մասին:

Հանձնարարել Մալյարիայի կոմիտեին մի ղեկադրի ընթացքում ներկայացնել Մատթողկոմատին հիմնավորված պահանջ:

6. Առաջարկել Թինոգլիմատին՝ ստուգել այն հիմնարկների բյուջեները, վորոնք հակամալյարիական ձեռնարկների միջոցները չեն առանձնացրել և իր յեզրակացութունը մի դեկադի ժամկետում մացել ԺԿՍ քննության համար:

7. Առաջարկել Հոգոգլիմատին, ուժեղացնել իր դեկավարութունը յենթակա միավորների և կազմակերպությունների վրա՝ հակամալյարիական ձեռնարկումների կիրառման գործում:

Հանձնարարել ֆոնդկոմի լրագոր ընկ. Զարաֆյանին ապահովել, իսկ շահագրգռված հիմնարկներին մի դեկադի ընթացքում դիմում ներկայացնել տրանսպորտի և թանձիրֆի անհրաժեշտ քանակի մասին:

8. Առաջարկել շրջգործկոմներին, քաղխորհուրդներին, նախագահների պատասխանատվությամբ, շրջկոլխոգմություններին և սովխոզներին՝ մալյարիայի դեմ պայքարող կետերի տրամադրության տակ դնել անհրաժեշտ քանակությամբ բանվոր, կան ձեռքեր, նավթ, ինչպես նաև փոխադրական միջոցներ:

Շրջգործկոմներին, քաղխորհուրդներին ՄՏԿ-ներին իրենց դեկավարներին պատասխանատվությամբ, մի ամսվա ընթացքում սեփական ուժերով վերջացնել փոքր ճահիճների չորացումը և իրենց տերրիտորիայի վրա դանվող ջրանցքների կարգավորումը:

9. Յույց տալ Բարդայի, Ալի-Բայրամլուի, Գեոգչայի, Ռդդամի, Աղջարեղու և Սալյանի շրջգործկոմների նախագահների անուշադիր վերաբերմունքը հակամալյարիական պայքարի ձեռնարկումների նկատմամբ. ինչպես որինակ—փոքր ճահճուտների չորացնելը, բանվորական ձեռքերի և տրանսպորտ չտալը: Առաջարկել այս հարցում ստեղծել վճռական բեկումն:

10. Նշել Կոմուն. Տնտ. Ժողկոմատին, վոր ԺԿՍ-ի գլուղական վայրերում ջրմուղների կառուցումն ապահովելու համար 32 թվից հետագոտական աշխատանքներ սկսելու մասին յեղած վորոշումը չկատարելը:

Առաջարկել Կոմուն. Տնտ. Ժողկոմին ընկ. Բագիրբեկովի պատասխանատվությամբ, անմիջապես անցնել ԺԿՍ-ի վորոշման ոյալիդացիայի գործին, առաջին հերթին Ախսուի, Բարդայի, Բյուրգամիրի և Աղջարեղի շրջաններում: Հետագոտական աշխատանքներն անցկացնել 3 ամսյա ժամկետում:

Հանձնարարել Կատարման հանձնաժողովին պարբերաբար ստուգել ներկա վորոշման կատարումը:

Հանձնարարել Բանգլուղտեսչությանը վերոհիշյալ հարցը մացնել 1932 թ. IV յեռամսյակի աշխատանքների պլանում:

Կատարման Հանձնաժողովի նախագահ—Խ. ԳՐԱՆՍԵՐԳ

Ի ս. Կատարման Հանձնաժողովի ֆուրսուղարի

Ա. Ա. ՍԱԳԻՆՈՎ

ՄՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ժողկոմխորհի նախկին նախագահ ընկ. Դ. Բունյաթ-Զադեի նաոխ

(Արտասանված Մալյարիայի դեմ պայքարող կոմիտեի պլենումում—
28/III—32 p.)

ԱՍՍՀ-ում մալյարիայի դեմ պայքարելու գործում վերջին տարիներում կարելի յեր հասնել ավելի խոշոր նվաճումների՝ քան այդպիսին մենք ունենք այսօր: Յեթե այսօր մալյարիայի ֆրոնտում անհամեմատ քիչ աշխատանք է կատարված, ապա այս բացատրվում է նրանով, վոր մալյարիայի դեմ պայքարը հանձնարարված էր միմիայն Առօրեկոմատին, իսկ մյուս ժողկոմատները և տնտեսական հիմնարկները մալյարիայի համար իրենց պատասխանատու չեյին դրում:

Այդպիսի վերաբերմունք գոյություն ուներ նաև տեղերում, շրջգործկոմների, տնտեսական կազմակերպությունների, հողային մարմինների և հասարակակայնության կողմից:

Դժբաղդաբար այսօրվա նիստին բացակայում են Հոգոգլիմ ընկ. Կասումովը, Կոլխոզկենտրոնի նախագահ ընկ. Փիչախչին և Աղբջրտնտեսության պետ Գալիլովը, կարելի կլիներ նրանց յեբես առ յերես ասել, վոր իրենց յենթակա կողմակերպությունները շատ քիչ ուշադրություն են դարձրել մալյարիայի դեմ պայքարելու հարցին: Բոլորի համար պետք է պարզ լինի, վոր մալյարիայի դեմ պայքարը հանդիսանում համապետական գործ, պրոլետարական հասարակայնության և աշխատավորության գործ, վորը գլխավորվում է պետության կողմից, վորպեսզի ամբողջ աշխատանքը տարվի ծրագրված և կազմակերպված, առանց ինքնահոսի:

Մալյարիայի լիկվիդացիայի գործն այնքան էլ հասարակ գործ չի, ինչպես կարծում են մի քանի ընկերներ:

Այսօր Պ. տալանն իր թեղիսներում ինձ զեկուցեց հնգամյակի արտադրական պլանի հիմունքների մասին, վորը կազմված է յերկրի արտադրական ուժերի հարցով հրավիրվող խորհրդակցությանը զեկուցելու համար:

Պետալանի այդ թեղիսներն ընդգրկում է բոլոր հարցերը, բայց վոչ մի խոսք չի ասվում չալթուկի մասին, թողնելով այդ հարցը այն վիճակի մեջ ինչ վիճակում նա մնացել է հեղափոխությունից հետո՝ առաջին տարիներում:

Յեթե չալթուկ մշակող շրջաններում ջրոգտագործման նույն սխտեմը գոյություն է ունենալու հետագայում, ապա պարզ է վոր յերկրորդ հնգամյակում մալյարիան լիկվիդացիայի չի յենթարկվի:

Չալթուկի ցանքսի համար մյուս յերկրներում կիրառվում է մեխանիքական ջրումն—այս հարցը Աղբբջանում պետք է անպայման լուծել:

Յեթե մենք բոլոր միջոցառումներն իրադրոճենք, իսկ դեռ համար մենք բավականաչափ փորձ ունենք, ինքն շատախառնությունից մենք անցնենք կոնկրետ աշխատանքի, այն ժամանակ մալարիայի վոչնչացման բազան ապահովված կլինի:

Նորից կրկնում եմ, վոր մենք մալարիայի լիկվիդացիայի պլանը պետք է մտցնենք յերկրորդ հնգամյակում՝ լավ գիտակցելով, վոր դա այնքան էլ հասարակ և հեշտ գործ չի:

Մոտ որեքս, յես կարդացի Հարավային Ասերիկային վերաբեվող գրականություն և չանից դուրս է գալիս՝ 30 միլիոն ազգաբնակչություն ունեցող և սուրճով հարուստ մի ամբողջ յերկիր—Բրազիլիայի ազգաբնակչությունը կորչում է սիֆիլիսից և մալարիայից:

Ինչպե՞ս, Բրազիլիայում կառավարության գլուխ կանգնած կապիտալիստները չեն հետաքրքրվում ազգաբնակչությանը բուժել այդ սարսափելի հիվանդություններից:

Մենք սիստեմատիկ պայքար ենք մղում մորեխի դեմ: Ոտար յերկրացի գիտնականները, ինչպես որինակ Գարվուդը, ուղղակի գրում են, վոր մինչև իսկ Ամերիկայում, յերբ միլիոններով—միլիարդներով թռչում է մորեխը, նա ներկայացնում է այնպիսի հսկայական ուժ, վորը մինչև անգամ ընդհատում է յերկաթուղային հաղորդակցությունը:

Յերբ թռչում է մորեխը, այդ թռիչքն իրենից ներկայացնում է կատաղած և հուզված ծովի մի պատկեր:

Բայց չե՞ վոր մենք մորեխի դեմ պայքարում ունենում ենք հաջողություն: Մորեխի դեմ պայքարը մեզանից խլում է հսկայական ծախսեր, վալյուտայի խոշոր ներդրումներ, այնուամենայնիվ մենք այդ պայքարը տանում ենք, վորպեսզի մորեխը չվոչնչացնի մեր գյուղատնտեսության արտադրանքը, բամբակը և այլն:

Յեթե մենք հարվածայնորեն պայքարում ենք մորեխի դեմ հատուկ շրջանում յերկու ամսվա տևողությամբ, մալարիայի դեմ պայքանջվում է սիստեմատիկ աշխատանք, միջոցներ, պայքարի հաջողությունն ապահովելու համար, բոլոր կազմակերպությունների և պրոլետարական հասարակականության ուղղությունը:

Այդ աղաոնանք այն հարցին, թե ինչ է անհրաժեշտ անել գործնականում:

Առժողկոմը մալարիայի դեմ պայքարելու խոշոր փորձ ունի: Յես Նորաշենում տեսա Առժողկոմատի կողմից բացված տրոպիկական կայանը: Այդ կայանը ցուցակագրել է ամբողջ գյուղը: Յ թե յես փնտռեի, այդ ցուցակներով կգտնեի յուրաքանչյուր տանտիրոջ ազգանունը:

Այնտեղ հայտնի է, ինչքան հիվանդներ են յեղել, ներկայումս վորքան է նրանց թիվը և ինչքանով են պակասել հիվանդության դեպքերը: Այդ պակասելն իսկույն և յեթ յերևում է այնքան, վորքան, վոր Նորաշենի շրջանը մալարիայով ուժեղ կերպով վաթակված էր:

Ինչպես լավ հայտնի է մինչև ԱՍՄՀ խորհրդայնացումը մալարիայի դեմ յերբեք պայքար չի կազմակերպված. ինչ վերաբերում է խինինին, նա վաճառվում էր ամենուրեք, ինչպե՞ս պատահում էր և կարող էր վաճառել յուրաքանչյուր ցանկացողը (ընկ. Գադրլի—վոչ մի հակամալարիական հիմնարկություն չ' յեղել):

Հակամալարիական պայքարի պլանում Յեվլախի շրջանը պետք է առանձնացնել՝ ինչպես մեր աշխատանքի ծրագրի մեջ ամենահարվածայինը: Զրային տնտեսությունը նախատեսում է այս շրջանում առողջացնող մի շարք միջոցառումներ:

Յեվլախը հանդիսանում է մալարիական վարակի բուժը վոչ միայն ագրեբնացին ըր համար, այլ և յեկող գնացող մարդկանց համար, վորոնք ըստ եյության չպիտի հիվանդանային, բայց վորովհետև նրանց վիճակված է գեթ կես ժամ կանգնել Յեվլախ կայարանում—հիվանդանում են մալարիայով:

Յես ճանաչում եմ մի ընկերով, վորը միանգամայն առողջ լինելով՝ Թիֆլիս գնալով և վերադառնալով հիվանդացավ մալարիայով, վորովհետև Յեվլախում գնացքի կանգնելու ժամանակ նրա կծել էր անտֆելես մոծակը:

Այդ կարգի յերեույթներ լինում են նայե Լյաբիյում, Ուջաբում և Գյուրդամիրում, բայց ամենից ավելի նրանք տարածված էն Յեվլախում:

Այս շրջանի առողջացման վրա անհրաժեշտ է դարձնել ամենից ավելի լուրջ ուղղություն: Այս հարցում խոշոր չափով շահագրգռված է յերկաթուղին, վորը պետք է Յեվլախի շրջանի առողջացման գործում ցույց տա ակտիվ մասնակցություն:

Կադրերի մասին: Յեղած կադրերը պետք է ամրացնել: Յեթե տեղերում, բամբակագործական շրջաններում, բժիշկների համար գոյություն ունի զգվար պայմաններ և վատ մատակարարում, յեթե այդ բժիշկները, վորոնց վրա դրվում է մալարիայի դեմ պայքարելու պատասխանատվությունը, որվա կեսը պետք է կորցնեն իրենց համար հաց, շաքար թեյ և այլ մթերքներ ճարելու վրա՝ ապա հասկանալի է, վոր այդ մարդկանցից մենք շատ բան սպասել չենք կարող:

Անհրաժեշտ է ուղղակի կերպով հարց գնել բժիշկների համար պայմաններ ստեղծելու մասին, մալարիայի շրջաններում աշխատողները և նրա դեմ պայքարողները հաճախ իրենք են հիվանդանում մալարիայով: Հսկավոր է նրանց նյութական կենցաղային պայմանները բարելավել և անել այն ամենը, ինչ հնարավոր է այդ ուղղությամբ:

Բժշկական ինստիտուտի ավարտողների վորոշ տոկոսը պետք է առանձնացնել մալարիայի գծով աշխատելու համար և մտածել հետազոտում նրանց մասնագիտացման խնդրի վրա:

Անհրաժեշտ է վերակառուցել դպրոցների ուսման պլանները և ծրագրերը մալարիայի մասին գիտելիքների կապակցությամբ այն հաշվով, վորպեսզի բոլոր դպրոցականները սովորեն մալարիայի դեմ պայքարելու ելամենտար ձևերը:

Այդ ճանապարհով բարձրացնել գյուղական աշխատավորութեան սանիտարական դրագիտութիւնը, սովորեցնել նրանց ինչպէս կարելի չէ պայքարել մալարիայի դեմ:

Այս միջոցառումներն անհրաժեշտ է անցկացնել տեխնիկումներում, կոլխոզներում, պարտուկներում, սովխոզներում, յոթնամյակների հինգերորդ և վեցերորդ խմբերում և այլն:

Սրա հետ միասին, բոլոր մանկավարժական տեխնիկումներում, ինչպէս Բաքվում, Նուխպետ և շրջաններում անհրաժեշտ է մտցնել մալարիայի դեմ պայքարելու պարապմունքներ, վորովհետեւ յետեւ յետեւ աշտոր տվյալ ուսուցիչն աշխատում է մալարիայի տեսակետից առողջ շրջանում, վաղը նա կարող է տեղափոխվել մալարիայով վարակված շրջան, և պետք է խմանա մալարիայի դեմ պայքարելու ելեմենտար ձևերը:

Այստեղ մի քանի ընկերներ խոսեցին բժշկական ինստիտուտի ստորին կուրսերի ուսանողների մասին: Անպայման նրանց պետք է ոգտագործել մալարիայի շրջաններում արտադրական պրակտիկայի ուղղակիւ:

Նրանք կարող են լինել կոլխոզներում լավագույն կազմակերպիչներ և աշխատավորութեանը կարող են պատրաստել մալարիայի դեմ պայքարելու գործում:

Ինչ վերաբերվում է գյուղական վայրերը խմելու ջրով ապահովելու հարցին, մեր հիմնական խնդիրը կայանում է նրանում, վորպէսզի 1932 թ հիմնական շրջաններում վե ջացնել գյուղական ջրմուղների անցկացման հետադուտական աշխատանքները, այն հաշվով, վոր 33 թ. գյուղական վայրերում անցկացվեն ջրմուղներ: Հետադուտական աշխատանքների համար, բացի յեղած հատկացումներից, իմ կողմից առաջարկված է Առօրեկոմատին, լրացուցել կերպով բաց թողնել և 100,000 ուրբի, ինչպէս նաև ապահովել այս գործը հատկացնելով մի միլիոն ուրբի:

Մի քանի խոսք հակամալարիական պայքարին տնտեսական կազմակերպութիւնների մասնակցութեան մասին:

Պետք է նախապատրաստել և քննել յուրաքանչյուր տընտորգանի մասնակցութիւնն այս հարցում: Աղբրիբորեստի կազմակերպութիւնը, վորն ուժեղ կերպով շահագրգռված է մալարիայի դեմ մղվող պայքարով, նրա պետն իր յելույթում ուղղակի հայտարարեց, վոր Աղբրիբորեստը պատրաստ է մասնակցելու մալարիայի դեմ պայքարին: Իհարկէ Աղբրիբորեստը հասկանում է վոր միլիոն ցենտներ ձկան ծրագիր ունենալով՝ նա չի կարողանա կատարել այդ ծրագիրը և ապահովել ազգաբնակչութիւնը ձկնով, յետեւ բանվորների 50%-ը վարակված են մալարիայով և աշխատանքի գլուս չեն գալիս:

Յեթե յուրաքանչյուր տնտեսավար հասկանա, թե ինչպիսի խոշոր կորուստներ է պատճառում մալարիան արտադրութեանը, և հակամալարիական ձեռնարկումների գործում ցույց տա իր ակտիվ մասնակցութիւնը, այն ժամանակ ամբողջ աշխատանքը կընթանա ավելի հեշտ և հաշիւ և մենք շուտով կվոչնացնենք մալարիան:

Բացի տնտեսական կազմակերպութիւններից, մալարիայի դեմ պայքարելու գործում պետք է ներգրավել և կոլտնտեսութիւններին: Հարկավոր է կոլխոզկենտրոնի հետ միասին մշակել այն միջոցառումները, վորոնք անհրաժեշտ է անցկացնել ֆինանսապետ անհամեմատ ավելի ուժեղ կոլխոզներում այն հաշվով, վորպէսզի նրանց հաշվին կազմակերպվի մի շարք ձեռնարկումներ, ինչպէս որինակ մալարիայի դեմ պայքարելու կետերի բացումը և այլն: Կոլխոզկենտրոնը պետք է մշակի այս հարցը և կազմակերպի այդ ձեռնարկութիւնները:

Վերջին հարցը, վորի վրա յես կցանկանայի կանգ առնել, այդ հակամալարիական պայքարի գործի ղեկավարութիւնն է:

Անհրաժեշտ է Մալարիայի կոմիտէի պլենումի կողմից ընտրել մի որդան, քարտուղարութիւն, վորը պարբերաբար պետք է տանի կոմիտէի ոպերատիվ և պլանային աշխատանքը:

Յերկրորդ.—պետք է հաշվի առնել, ինչի մասին խոսվեց այստեղ, այսինքն հրատարակել հակամալարիական որենադրութիւն և մալարիայի դեմ պայքարելու մասին հատուկ վորոշում: Բանագյուղտեսչութեան ժողկոմատը պարտավոր է սիստեմատիկորեն հետեւել մալարիայի մասին բոլոր վորոշումների կատարմանը: Մենք կատարման հանձնաժողովում պետք է ստուգենք ղեկավար կազմակերպութիւնների կողմից ընդունված վորոշումների կատարումն և խիստ պատասխանատվութեան յենթարկենք նրանց, վորոնք այդ վորոշումները լավ չեն կիրառի կյանքում:

Ինչ վերաբերվում է հակամալարիական ձեռնարկումների անմիջական, ամենորոյա ղեկավարութեանը, այդ անկասկած Առօրեկոմատի, իսկ գիտականի կողմից, Տրոպիքական ինստիտուտի գործն է:

Այսոր, յերբ իր ամբողջ լրջութեամբ ղրված են մալարիայի դեմ պայքարելու խոշորագույն խնդիրը, տնտեսական կազմակերպութիւնների, խորհրդային հասարակականութեան լայն մասնակցութեան խնդիրը, ղրված է խոշոր հատկացումների խնդիրը մալարիայի դեմ պայքարի համար, հասկանալի է, վոր յեթե ղեկավարութիւնը հետ մնա, ապա ամբողջ գործը մենք տանուկ կտանք:

ԱՍԽՀ Ժողկոմստրի—17/IX—32

ՎՈՐՈՇՈՒՄ № 1527

ՄԱԼԱՐԻԱՅԻ ԿՈՄԻՏԵՅԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ԱՍԽՀ-ի տերիտորիայի վրա մալարիան և տրոպիքական հիվանդութիւնները լայն ծավալ են ստացել, այս հիվանդութիւնները հակայական փաս են պատճառում արդյունաբերութեան, տրանսպորտին և գյուղատնտեսութեանը, հատկապէս տեխնիքական կուլտուրաների շրջաններին, ապա աչրի առաջ ունենալով, վոր առողջացման համար խոշոր միջոցառումներ են ձեռնարկված ու այդ հիվանդութիւնների դեմ պայքարելու գործում ամբողջ

պրոլետարիական հասարակականության ընդդիման անհրաժեշտությունն և դրված, ԱՍԽՀ-ի ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը վորոշում ե.—

Հաստատել Մալյարիայի և մյուս տրոպիքական հիվանդությունների դեմ պայքարող կոմիտեյի մասին հետևյալ կանոնադրությունը:

1. ԱՍԽՀ ժողովրդական Կոմիսարների Խորհուրդին կից մշտական գոյություն և ունենալու Մալյարիայի և մյուս տրոպիքական հիվանդությունների դեմ պայքարող կոմիտե:

2. Կոմիտեյի վրա դրվում են հետևյալ խնդիրները.—

ա). ԱՍԽՀ տերիտորիայի վրա մալյարիայի և մյուս տրոպիքական հիվանդությունների դեմ պայքարի ընդհանուր ղեկավարությունը:

բ) Բոլոր պետական, տնտեսական և հասարակական կազմակերպությունների գծով մալյարիայի և մյուս տրոպիքական հիվանդությունների դեմ միջոցառումների անցկացման ասպարեզում գործունեություն համախմբումը և համաձայնեցումը:

գ) Բոլոր պետական, տնտեսական և հասարակական կազմակերպությունների գծով մալյարիայի և մյուս տրոպիքական հիվանդությունների դեմ պայքարելու պլանների վերանայումն ու հաստատումը, նրանց ղեկուցումների վերանայումն և հսկելու՝ աղբյուրները կյանքում կիրառելու համար:

դ) Բոլոր պետական, տնտեսական և հասարակական հիմնարկների բյուջեներում մալյարիայի և մյուս տրոպիքական հիվանդությունների դեմ պայքարելու համար ֆինանսական հատկացումների սահմանելը, ինչպես նաև այդ հատկացումների ճիշտ ծախսելու վրա հսկողություն սահմանումը:

յե) Շրջգործիկներին և սովխոզներին կից մալյարիական կոմիտեների վրա ընդհանուր ղեկավարություն ունենալը, ինչպես նաև նրանց գործնեություն վրա հսկողություն ունենալը:

զ) Մալյարիայի և մյուս տրոպիքական հիվանդությունների դեմ պայքարելու մասին պարտադիր վորոշումների, հրահանգների հրատարակումն:

ե) Մալյարիայի և մյուս տրոպիքական հիվանդությունների մասին գիտական և հանրամատչելի գրականության հրատարակումն:

ը) Կոմիտեյի իրավասության տակ գտնվող հարցերի շրջանակում՝ ԱՍԽՀ տերիտորիայում հատուկ եքսպեդիցիաների և ԽՍՀՄ-ի սահմաններում գիտական գործողությունների կազմակերպումը:

թ) Մալյարիայի և մյուս տրոպիքական հիվանդությունների դեմ պայքարող կադրերի պատրաստման և վերապատրաստման գործի ընդհանուր ղեկավարություն ու հսկողությունը:

ժ) Մալյարիական և մյուս տրոպիքական հիվանդությունների ձեռնարկները ղեկորայքով, պրեպարատներով, ապարատուրայով, փաթեղյան կանաչով ապահովումը և այլն:

ի) Սահմանված կարգով համագործարհների, կոնֆերանսների, խորհրդակցությունների հրավիրումն, շրջիկ սեսիաների կազմակերպումն:

լ) Որինպեդներ, ղեկուցումներ և առաջարկություններ մտցնելը՝ ԱՍԽՀ ժողովրդական և Բարձրագույն Տնտեսական Խորհուրդ:

3. Կոմիտեյի ոլոր վորոշումները, իրենց իրավասության հարցերի շրջանակում՝ պարտադիր են բոլոր պետական, տնտեսական և հասարակական կազմակերպությունների համար:

Կոմիտեյի վորոշման հետ համաձայն չլինելու դեպքում՝ հիմնարկությունները կամ ձեռնարկությունները 5 որյա ժամկետում, իրենց պատճառաբանությունները և հակաձառույնները հայտնում են ԱՍԽՀ ժողովրդական, վորն այդ առթիվ կտա իր վերջնական վորոշումը:

4. Կոմիտեյի կազմի մեջ մտնում են՝ նախագահը, նրա տեղակալը, պատասխանատու քարտուղարը, սրանք պերսոնալ կերպով նշանակվում են ԱՍԽՀ ժողովրդական կողմից, իսկ կոմիտեյի անդամներ առաջ են քչվում շահագրգռված հիմնարկություններից և կազմակերպություններից՝ ժողովրդական վորոշված թվի և կազմի համաձայն:

5. Կոմիտեն իր կազմից ընտրում է կոմիտեյի քարտուղարություն՝ կոմիտեյի քարտուղարի գլխավորությամբ: Քարտուղարություն պարտականությունների մեջ է մտնում մալյարիայի և մյուս տրոպիքական հիվանդությունների դեմ ձեռնարկումների պլանային և ոպերատիվ ղեկավարությունը, կոմիտեյի վորոշումների և առաջադրումների կիրառումը և նրանց կենսագործման վրա հսկողություն ունենալը, ինչպես նաև բոլոր այն հարցերի նախապատրաստումը, վորոնք դրվելու յեն կոմիտեյում քննություն:

6. Կոմիտեյի պլենումի նիստը հրավիրվում է վոչ ուշ քան 2 ամիսը մեկ անգամ:

7. Կոմիտեյի միջոցները կազմում են բյուջետային և նպատակային հատկացումները:

8. Տեխնիքական սպասարկման համար կոմիտեն ունի իր անհրաժեշտ ապարատը, շտաբը, վորը վորոշվում է սահմանված կարգով:

9. Կոմիտեն ունի ԱՍԽՀ-ի պետիշ և իր անունով կնիք:

ԱՍԽՀ ժողովրդական Կոմիսարների Խորհրդի նախագահ
Գ. ԲՈՒՆՅԱՆՔՆԻՆ

ԱՍԽՀ ժողովրդական Կոմիսարների Խորհրդի գործերի
կառավարիչ Ա. Ա. ՍԱԴԻՍՈՎ

ՎՈՐՈՇՈՒՄ № 1528

17 սեպտեմբերի 1932 թ.

ՌԱՅԳՈՐԾԿՈՄՆԵՐԻ ՅԵՎ ՍՈՎԽՈՋՆԵՐԻ ԿԻՅ ՄԱԼՅԱՐԻ-ԱՅԻ ԿՈՄԻՏԵՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԱՍՍՀ Ժողովրդական Կոմիտեների Խորհուրդը վորոշում է—

1. Հակամալարիական պայքարի միջոցառումներին շահագրգռված մարմիններին պարտադիր կարգով մասնակից դարձնելու նպատակով, մալարիայով վարակված ուսուցիչներին, Նախ. ՍՍՀ Կենտրոնական, Լեռնային և Գեղարքունիքի շրջագործկոմիտեներին և խոշոր սովխոզներին կից կազմակերպվում են մալարիայի դեմ պայքարող կոմիտեներ:

2. Տեղական մալարիական կոմիտեների վրա յե դրվում.

ա) մալարիայի դեմ պայքարի վերաբերյալ կուսակցության, կառավարության և ԱՍՍՀ Մալարիայի կոմիտեի հրահանգների տեղական, տնտեսական կազմակերպությունների և հիմնարկներին կողմից կատարման ընթացքի հսկողությունը:

բ) մալարիական որենտրությունը և կատարման հսկողությունը, մալարիական որենտրությունը խախտող հիմնարկներին, մարմիններին և անհատներին պատասխանատվության կանչելը:

գ) տեղական կազմակերպությունների մալարիայի դեմ մղվող պայքարի բնագավառում հսկիչ թվերի նշանակումը, հաշվետվությունների, պլանների, արդյունքների վերաբերյալ յեղրակացությունների տալը:

դ) տեղական մալարիական կառուցվածքներին աշխատանքներին հետևելը և հսկողությունը, կադրերի ճիշտ ուղտագո ծուծը, մեդիկամենտների, ապարատուրաների և այլն նպատակահարմար բաշխումը:

յե) սեփական նախաձեռնությունը կամ բարձր որդանների առաջադրությամբ մալարիայի դեմ պայքարի հետ կապված խնդիրներին կարգավորումն ուղիղնալիզացիայի միջոցներին մշակումը:

3. Տեղական մալարիայի կոմիտեի վորոշումները պարտավոր են կատարել բոլոր տեղական պետական, տնտեսական և հասարակական կազմակերպությունները, այդ վորոշումների առանձին մասերով կամ ամբողջությամբ կարող են փոխվել ուղղործակողներին, Նախ. ՍՍՀ Կենտրոնական, Լեռնային և Գեղարքունիքի շրջագործկոմիտեի և ԱՍՍՀ Ժողովրդական կից Մալարիայի կոմիտեի կողմից:

4. Հանրապետական Նախ. ՍՍՀ-ի և Լեռնային և Գեղարքունիքի շրջագործկոմիտեի կից ուղտական մալարիական կոմիտեների կազմի մեջ մտնում են.—

1) Մալարիայի կոմիտեի նախագահը (Նախ. ՍՍՀ Կենտրոնական, Լեռնային և Գեղարքունիքի շրջագործկոմիտեի նախագահը լինելու և շրջագործկոմի նախագահը):

2) Առողջապահության շրջանային տեսուչը (Նախ. ՍՍՀ Առողջկոմիտե, Լեռնային և Գեղարքունիքի շրջագործկոմիտեի առաջին վարիչը) լինելու և կոմիտեի նախագահի տեղակալ:

3) Ա.Կ. (բ) ուղտակոմի ք բաղադրը:

4) Ա.Կ.Յ.Ս. ուղտակոմի ք բաղադրը:

5) Ռայոնային վարիչը:

6) Զրադարձություն պետը:

7) Միջմիութենական պրոֆմիությունների նախագահը:

8) Ռայոնային նախագահը:

9) Լուս-տեսուչը:

10) Աշխատանքի տեսուչը:

11) Ռայոնային վարիչը:

12) ՄՏԿ ի դիրեկտորը:

13) Տրոյկայանների կամ դիսպանսերների վարիչները այն տեղերում, վորտեղ այդպիսի գոյություն ունին:

14) Բժշկա-սանիտարական պրոֆմիությունի ուղտական բաժնի նախագահը:

15) Խորհրդ սովխոզներից մեկի նախագահը:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Նախ. ՍՍՀ-ում և Լեռ. և Գեղ. շրջանային շրջանում, կոմիտեի կազմում, վորպես անդամներ մտնում են բոլոր հանրապետական և շրջանային համապատասխան պաշտոն վարող անձինք:

5. Սովխոզներին կից մալարիայի կոմիտեի կազմում մտնում են—

1) Սովխոզի դիրեկտորը—վորպես նախագահ:

2) Սովխոզի ավագ բժիշկը—վորպես նախագահի տեղակալ:

3) Կուսկոմի ք բաղադրը:

4) Ա.Կ.Յ.Ս. կոմիտեի ք բաղադրը:

5) Սովխոզի պրոֆեսիոնալ կոմիտեի նախագահը:

6. Մալարիայի տեղական կոմիտեներն իրենց ապարատները չունեն. նրանց տեխնիքային սպասարկում են ուղղործակողների, Նախ. ՍՍՀ Կենտրոնական, Լ. և Գեղարքունիքի շրջագործկոմիտեի և սովխոզի տեխնիքական ապաշտանները:

7. Տեղական մալարիայի կոմիտեների նիստերը հրավիրվում են վոչ ուղ, քան ամիսը մեկ անգամ:

8. Տեղական մալարիայի կոմիտեներն ուղարկում են ԱՍՍՀ Ժողովրդական կից Մալարիայի կոմիտեին իրենց նիստերի արձանագրությունները և տարեկան 2 անգամ իրենց գործունեության մասին հաշվետվությունը:

ԱՍՍՀ Ժողովրդական Կոմիտեների Խորհրդի Նախագահ Դ. ԲՈՒՆԵՍՈՒ-ՉԱԿԵ

ԱՍՍՀ Ժողովրդական Կոմիտեների Խորհրդի գործերի կառավարիչ Ա. Ա. ՍԱԿԻՆՈՎ

ԱՍԽՅ ԺԿԽ-Ի ԿԻՑ ՄԱԼՅԱՐԻԱՅԻ ԿՈՄԻՏԵՅԻ ՂԱՆՈՒՄԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

1932 թվի հուլիսի 4-ին

ԱՍԽՅ-ՈՒՄ ՄԱԼՅԱՐԻԱՅԻ ԴԵՄ ՂԱՅԲԱՐՈՂ ԿԱԴՐԵՐԻ ՂԱՏՐԱՍՏՄԱՆ ՅԵՎ ՎԵՐԱՂԱՏՐԱՍՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Բժշկական կադրերի պատրաստման տեմպերի խոշոր չափով հետ մնալը՝ աճող պահանջից, վտանգի տակ է դնում յերկրորդ հնգամյակում առողջապահության ֆրոնտի առաջ գերված կարևոր խնդիրների կենսագործումը. հատկապես վտանգվում է արտակարգ կուլտուր-քաղաքական և տնտեսական նշանակություն ունեցող խնդիրը՝ ԱՍՍՀ-ում մալյարիայի լիովին լիկվիդացիան և նրա դեմ վճռական պայքարը:

Հակամալյարիական ձեռնարկումները բավարար քանակությամբ թերերտիկ և գործնականորեն պատրաստված բժշկական կադրերով ապահովելու նպատակով՝ Մալյարիայի կոմիտեյի պլանումը վերոշում է.

1. Առաջարկել Առօրյա կոմիտեին, 1933 թ. հունվար ամսից՝ Ադրբեջանի բժշկական ինստիտուտին կից կազմակերպել տրոպիկական հիվանդությունների հատուկ ֆակուլտետ:

Պարտավորեցնել Ֆինոպոլիտմատին այս ֆակուլտետի կազմակերպման հետ կապված ծախսերը մտցնել 1933 թ. բյուջեյում:

Հանձնարարել Առօրյա կոմիտեին, սահմանել այս ֆակուլտետի ընդունելության կոնտինգենտը:

Անհրաժեշտ համարել տրոպիկական հիվանդությունների ֆակուլտետի կազմակերպման հետ կապված բոլոր խնդիրները մշտեցնել Ժողովուրդի հաստատելու համար:

2. Տեղափոխել այս ֆակուլտետը վոչ ալակաս քան 40 հոգի Ադրբեջանական ինստիտուտի բժշ. պրոֆիլակտիկ ֆակուլտետի վերջին յերկու սեմեստրներից, վոչ ալակաս քան 60 հոգի—ստորին սեմեստրներից:

3. Սեպտեմբերի 1-ից բուժ-պրոֆիլակտիկ, սանիտարա-պրոֆիլակտիկ, մալյարի, փոքրահասակների ու մանկան պաշտպանության ֆակուլտետներում՝ մտցնել անհրաժեշտ ծավալով մալյարիայի և տրոպիկական հիվանդությունների դասավանդումը: Անհրաժեշտ է նաև բոլոր մյուս ֆակուլտետներում մտցնել ուսանողություն անընդհատ արտադրական պրակտիկա—անմիջականորեն մալյարիայով վարակված շրջաններում,—բամբակահավաքի և գարնանացանի շրջանում:

4. Հանձնարարել Առօրյա կոմիտեին լուրջ ուշադրություն դարձնել տրոպիկական հիվանդությունների ֆակուլտետի ծրագիրը և ուսման պլաններն իր ժամանակին և մանրամասնորեն մշակելու վրա: Ապահովել ֆակուլտետի ուսանողների վորակավոր, մարքս-լենինյան մեթոդով դասավանդելու, լաբորատորական տեխնիկայի, անհրաժեշտ ինժեներա-տեխնիքական, սանիտարա հիգիենայի հրաժեշտ ինժեներա-տեխնիքական ուսակուլությունների յուրացման վրա: առարկաների և գործնական ուսակուլությունների յուրացման վրա:

Առօրյա կոմիտեին—իր ժամանակին տանել նախապատրաստական աշխատանք նոր կաֆեդրաները շենքերով, սարքավորումով՝ գիտական կադրերով և միջոցներով ապահովելու համար՝ իր գործնական առաջարկություններն այդ առթիվ մտցնելով Ժողովուրդին:

5. Ադրբ. բժշկական ինստիտուտի յերկրային հիվանդությունների կաֆեդրան հիմնականում դարձնել մալյարիայի և տրոպիկական հիվանդությունների կաֆեդրա—այս նպատակով վերա-կազմել այն՝ դարձնելով ինքնուրույն կաֆեդրաներ—

- 1) Պարազիտոլոգիայի և ենտոմոլոգիայի
- 2) Տրոպիկական բժշկականություն:

6. Առաջարկել Հոգսող կոմիտեին, Ադրջրտեստեսություն, ԳիՄԻ-ից և Հիգիենայի ինստիտուտին՝ ինժեներներին մեխորատիվ ինստիտուտի և տեխնիկների կադրերով ապահովել հակամալյարիական տեխնիքական ձեռնարկումների անցկացման համար, ապա իրենց ավարտածներից, անհրաժեշտ թվով լավագույն մասնագետների գործուղել տրոպիկական ինստիտուտի և տրոպիկայաների տրամադրության տակ:

7. Բազմի հիգիեն-մեխորատիվ ինստիտուտում և հիգիեն-տեխնիկումում, նոր ուսումնական տարվանից սկսած՝ մտցնել մալյարիայի հիմունքների և նրա դեմ պայքարի հիգիեն-տեխնիքական բնույթի հիմունքների դասավանդումը. հանձնարարել հիգիեն մեխորատիվ ինստիտուտի և հիգիեն-տեխնիկումի գիրեկտորներին մշակել դասավանդման ծրագիրը և համաձայնեցնել այն կոմիտեյի քարտուղարության հետ:

8. Մալյարիայի և բոլոր մյուս տրոպիկական հիվանդությունների գիտելիքների մակարդակը բարձրացման նպատակով՝ բոլոր բժշկական տեխնիկումներում նոր ուսումնական տարվանից սկսած մտցնել մալյարիայի և մյուս տրոպիկական հիվանդությունների դասավանդումը, ինչպես նաև անհրաժեշտ և ուսանողներին պրակտիկայի ուղարկելը բուժա-սանիտարական հիմնարկներում և մալյարիայի ուսանողներում:

9. Առաջարկել Հոգսող կոմիտեին և Հոգսող կոմիտեին նոր ուսումնական տարվանից ապահովել բարձրագույն մանկավարժական ինստիտուտի, մանկավարժական տեխնիկումների, գյուղական տնտեսական ԲՈՒԷ-ի երի և տեխնիկումների, ինչպես նաև մասսատնտեսական բոլոր ողակներում ուսման ծրագրի մեջ մշակական դպրոցներից և հիմունքների և նրա դեմ պայքարի մեթոդները:

10. Հանձնարարել Մալյարիայի կոմիտեյի քարտուղարու-թյանն Առօրյակում և տրոպիքական ինստիտուտի հետ միա-սին մշակել բոնիֆիկատորների և խնդիրատորների պատրաստ-ման, նրանց տեղերում ամրապնդելու, նրանց կենցաղային նյու-թական և իրավական վիճակի բարելավման համար անհրաժեշտ գործնական առաջադրություններ:

11. Մալյարիայի շրջաններում աշխատող բժշկական կադրերը վերապատրաստելու նպատակով՝ առաջարկել Առօրյակում և տրոպիքական ինստիտուտի մշակել կանոններ, ծրագրեր և ուսման պլաններ և բաց անել մալյարիայի շրջաններում աշխատող բժշկիկների կա-տարելագործման կուրսեր, վերանայելով նրանց կարճատև վերա-պատրաստումն այն հաշվով, լիարժեք կուրսերն ավելի յերկարա-տև լինեն՝ հաշվելով բամբակի հավաքի կամ պանիայի վերջնա-լուց հետո մինչև գարնանացանի սկիզբը:

12. Հանձնարարել Առօրյակում ամրապնդել Տրոպիքա-տիտուտն անհրաժեշտ բժշկիկների կադրերով, լիարժեք պահանջ-ված ժամկետով աշխատել են մալյարիայի շրջաններում:

ՎՈՐՈՇՈՒՄ № 1227

ԱՍԽՀ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի
7 ոգոսոսի 1932 թ.

ԱՊՐԲԵՋԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻՆ ԿԻՑ՝ ՏՐՈՊԻ-ԲԱԿԱՆ ՓԱԿՈՒՆՏԵՏԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՍԻՆ

(Առաջարկը մտցրել է Մալյարիայի կոմիտեն. զեկուցող
ընկ. Մամեդլի)

Վ Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն

1. Հաստատել 1933 թ. հունվարի 1-ից Ադրբեջանի բժշկական ինստիտուտին կից տրոպիքական ֆակուլտետի կազմակերպումը և մտցնել այն 1933 թ. կազմակերպվելիք նոր հիմնարկություն-ների տիտուլային ցուցակը:

2. Հանձնարարել Առօրյակում 1933 թ. նախահաշվում նա-խատեսել տրոպիքական ֆակուլտետի կազմակերպման ծախսերը, իսկ Ֆինանսական կոմիտեին՝ ապահովել այդ ծախսերը դրամական հատկացումներով:

ԱՍԽՀ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի Նախագահի
սեղակալ՝ Խ. ԳՐԱՆՍԻՐԻԳ

ԱՍԽՀ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի գործերի
կառավարիչ Ա. Ա. ՍԱԴԻԽՈՎ

ՀՐԱՀԱՆԳ

1932 թ. ԸՆԹԱՅԳՈՒՄ ՄԱԼՅԱՐԻԱԿԱՆ ԿԵՏԵՐԻ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՄԱՐ

I Հակամալյարիական աշխատանքի ուղղությամբ

1. Հակամալյարիական պայքարը բաղկացած է յերկու հիմունք-ներից, մեկը բուժումն է և պրոֆիլակտիկան, իսկ մյուսը փոքր և խոշոր բոնիֆիկացիան, այսինքն՝ առողջացման աշխատանք:

2. Մեր հակամալյարիական աշխատանքն այս սեղոնում պետք է միևնույն ժամանակ լինի բուժումն ու պրոֆիլակտիկան, ինչ-պես նաև փոքր և խոշոր առողջացնող աշխատանքներ 5 կիլոմետ-րային շառավիղի վրա, այսինքն փոշերսկում, նավթարսկում, ջուր ծծող փոսերի, ծանծաղուտների լցնելը, վորոնց մեջ են գտ-նվում մալյարիայի մոծակ անոֆելեսի թռթռուները և այլն:

3. Մալյարիայի դեմ պայքարող կետերը բուժման և պրոֆի-լակտիկայի հետ միասին՝ պետք է տանեն նաև մանր առողջաց-ման աշխատանքներ: Խոշոր առողջացնող աշխատանքները տար-վում են տնտեսական որդանների, գործկոմների կողմից մալյա-րիայի դեմ պայքարող կետերի ցուցմունքներով և զեկավարու-թյամբ:

II Հիվանդների քննությունը

1. Յուրաքանչյուր մալյարիայով հիվանդը, վորը դիմում է մալյարիայի դեմ պայքարող կետերին՝ յենթարկվում է փայծա-խի, լյարդի և աղյան հետազոտության:

2. Փայծախի քննությունը կատարվում է մեջքի վրա պառ-կած, վորտեղի վորին քաշած վիճակում: Յենթ փայծախը չի շո-շափվում, ապա այդ մասին նշանակվում է թղթի վրա, յենթ 1-2 մատ մեծացել է, նշանակվում՝ I նշանով յենթ մեծացել է 3-5 մատնաչափ, նշանակվում է II, իսկ յենթ 5 մատից բարձր է մե-ծացել III նշանով, ինչ վերաբերում է լյարդին, յենթ նա մեծա-ցել է՝ այդ մասին անում են համապատասխան նշան:

3. Աղյան հետազոտումը կատարվում է պարագիտների հայտ-նարբման համար: Նրա համար հարկավոր է հիվանդների մա-տից կամ ականջի բլթակից վերցնել աղյուն. սովորաբար վերց-նում են մի առատ կաթիլ և մազեց (мазед): Մասսայական քնն-ությունն ի ժամանակ, բավական է վերցնել միայն աղյան մի առատ կաթիլ:

4. Այդ պրեպարատները Գիմդի*) մեթոդով 1/2 մինչև 3/4 ժամ-վա ընթացքում չորացումից հետո ներկվում են, վորի ժամանակ աղյան առատ կաթիլը ֆիկսացիայի չի յենթարկվում, իսկ ինչ վերաբերում է աղյան փոքր կաթիլին, նա անպայման հետք է ֆիկսացիայի յենթարկվի մետրոդի սպիրտում 3-5 րոպեյի ըն-

*) Հայտնի քիմիկոս:

թացքում կամ բացարձակ սպիրտի և եֆիրի համաչափ մասերով վերցրված խառնուրդի մեջ. ֆիկսիցիայի տեղում լեյզին դեպքում պետք է լինի 20-30 րոպե: Յեթե ձեռքի տակ մանրադիտակ (միկրոսկոպ) չկա, ապա պրեպարատները չորացնելուց հետո, փաթաթվում են թղթի մեջ, իսկ հետագայում ներկվում և հետազոտվում են: Չներկված պրեպարատները պետք է պահպանել ձանձերից:

5. Պրեպարատները ներկելու Գիմզի ներկը վերցրվում է հետևյալ հաշվով՝ 1 կաթիլ ներկի համար 1 խորանարդ սանտիմետր ջուր:

III. ՄԱԼՅԱՐԻԱՅՈՎ ՀԻՎԱՆԴՆԵՐԻ ԹԻՎԸ

1. Այն հիվանդը, վորի արյունը լեցուն է տենդով և պարազիտներով յենթարկվում է առանձնակի բժշկության, խինինի միջոցով, համբուրգյան դպրոցի մեթոդի համաձայն:

2. Այս ձևի բժշկությունը տևում է 6 շաբաթ. այսպես—առաջին շաբաթը հիվանդն որակաւ յերկու անգամ ստանում է խինին, այսինքն 0,5 առաջին անգամ և նույնքան եւ յերեկոյան: Մնացած 5 շաբաթներում, հիվանդը խինինն ընդունում է ընդհատումներով, այսպես—յուրաքանչյուր շաբաթ 4 որ ընդհատում, իսկ 3 որ իրար հետեից որակաւ 1,0 խինին կոտորակային մասով $2 \times 0,5$ կամ $4 \times 0,5$:

Բոլոր հիվանդները, հնարավորութեան սահմաններում, յենթարկվում են այս ձևի բժշկության:

3. Մալյարիայով հիվանդ յերեխաների նկատմամբ նույնպես կիրառվում է 6 շաբաթյա բժշկության կուրս: Յերեխաներն ընդունում են խինին, կամ խինինի խառնուրդ հետևյալ ֆորմուլայով.—

Rp. chinin mur 1,0
Ac mur olill 0,5
Sirop simpli 10,0
Aq desfill. ad. 50,0

Այս խառնուրդից յերեխաներն ընդունում են հետևյալ ձևով.—մինչև 1 տարեկան յերեխան որեկան 1 անգամ, մի թեյի գդալ: մինչև 2 տարեկանը՝ որեկան 2 անգամ, ամեն անգամ մի թեյի գդալի չափով և մինչև 3 տարեկան հասակ ունեցող յերեխան, որեկան 3 անգամ, ամեն անգամ մի թեյի գդալ:

Ավելի մեծահասակ յերեխաներին կարելի է տալ հետևյալ դոզայով խինին—այսպես

4—6 տարեկան	2 անգ.	որեկան	0,1
7—10 »	2 »	»	0,25
11—16 »	3 »	»	0,25
16 բարձր	2 »	»	0,5

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Տրոպիքական մալյարիայի ժամանակ խինինի որակաւ դոզան հասցնել մինչև 1,5 գրամմ, այսինքն 3 անգամ 0,5:

4. Խինին տրվում է միմիայն per—os: Ներմկանային ինեկցիա մնում է միայն այս դոզան 1) կամատողային դեպքերի, 2) ուժեղ փսխումների 3) ստամոքսա-աղիքային խանգարումների և վերջապես այն յերեխաների համար, վորոնք per—os դոզա խինինն ընդունել չեն կարող:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Ծանր կոմասոզային (թմրած դրություն) դեպքերի ժամանակ պետք է տալ խինին և ներսրկում, բայց այստեղ անհրաժեշտ է պահպանել հետևյալ կարգը.—խինինը պետք է ներսրկել ֆիզիոլոգիական խառնուրդ 0,3—0,4 20—50 խորանարդ. կատարել շատ դանդաղ:

5. Բուժման կուրսն անցած և առողջացած հիվանդները նույնպես, ամբողջ մալյարիայի սեզոնի ընթացքում՝ մայիսի 15-ից մինչև նոյեմբերի սկիզբը յենթարկվում են պրոֆիլակտիկ խինիզացիայի:

IV ՊՐՈՓԻԼԱԿՏԻԿԱ

1. Պրոֆիլակտիկ խինիզացիան կատարվում է միմիայն կազմակերպված ազգաբնակչության մեջ, վորպիսիք են՝ սովխոզնիկների, մեքենա-տրակտորային կայանների բանվորները, ֆարրիկա-գործարանային բանվորությունը, ինչպես նաև կոլխոզնիկները:

2. Խինիզացիայի մեթոդը ընտրվում է ըստ Ցիմանի—այսինքն շաբաթական 2 որ տրվում է խինին՝ մեկական գրամմով—կոտորակային դոզայով: Որինակ՝ յուրաքանչյուր չորեքշաբթի $2 > 0,5$ և յուրաքանչյուր շաբաթ—նույնքան դոզայով խինին. խինիզացիայի տեղում լեյզին՝ մայիսի կեսից մինչև նոյեմբերի սկիզբը:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 1.—Այն դեպքում, յերբ մալյարիան կսկսի ուժեղ կերպով տարածվել, պրոֆիլակտիկան մենք կարող ենք ուժեղացնել այնպես, վոր շաբաթական 3 որ իրար հետեից տալ խինին կոտորակային դոզայով, իսկ մնացած չորս որը կատարել ընդհատում:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 2.—Բոլոր այն հիվանդները, վորոնք անցել են բուժման կուրսը, նույնպես յենթարկվում են պրոֆիլակտիկ խինիզացիայի:

3. Ձմեռային ամիսներին (հունվար, փետրվար, մարտ) փնտաւ մոծակների ձմեռանոցները և մոծակների մասսայական հաժաքը ձմեռային վայրերում. կազմակերպել ծուխ տալը:

Ծուխ տալու համար գործածում են ծխախոտի փոշի, այն հաշվով, վոր 40,0 փոշով ծխել 1 խորանարդ մետր ձմեռանոցի շենքը, կամ նույն հաշվով մատանները: Նախքան ծուխ տալը շենքի բոլոր անցքերը և ճեղքվածքները պետք է ծածկել: Շենքի ողափոխութեան համար, դռները և անցքերը կարելի է բաց անել ծուխ տալուց 16 ժամ հետո միայն:

V ՄԵԽԱՆԻԲԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1. Պրոֆիլակտիկ խնդիրացիայի հետ միասին անհրաժեշտ է լուրջ ուշադրություն դարձնել արհեստական պաշտպանության վրա:

2. Բոլոր պատուհանները, դռները պետք է ցանցավորել մետաղյա ցանցով կամ ծայրահեղ դեպքում թանրիֆով:

3. Կծոցից պաշտպանվելու համար պարտադիր կերպով ոգտագործել ծածկոցները:

VI ՀԻԳԻԵՆԱԳՐԱՖԻԱ ՅԵՎ ՄԱՆՐ ԲՈՆԻՖԻԿԱՅԻԱ

1. Բուժական պրոֆիլակտիկ աշխատանքի հետ միաժամանակ հարկավոր է ուսումնասիրել շրջանի ջրային ֆակտորները և անցկացնել մանր առողջացման աշխատանքներ (նավթասրսկում, փոսերի լցում, փոշեսրսկում):

2. Մալյարիայի դեմ պայքարող կետերը պարտավոր են փոշեսրսկել, նավթասրսկել կամ լցնել մանր փոսերը մալյարիայի կեղծից 5 կիլոմետր շառավիղով տարածության վրա:

3. Մի քառ. մետրի վրա, պետք է ծախսել 40 գրամ նավթ (ջրային մակարդակի քառ. մետր):

Փարիզյան կանաչի մեկ գրամը խառնվում է 100 գրամ փողոցի փոշու հետ, վորը պետք է մաղել ամենից ավելի բարակ մաղով, դրանից հետո խառնել փարիզյան կանաչի հետ, ապա այս խառնուրդից 10 գրամը ծախսել 1 քառակուսի մետր տաքածության համար (ջրային քառակուսի մետր): Ինչպես նավթասրսկում, նույնպես և փոշեսրսկումը կատարվում է ամսական 3 անգամ, այսինքն 10 որը մեկ սխտեմատիկարա՝ կամ նավթասրսկում կամ փոշեսրսկում:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Փարիզյան կանաչն ուժեղ թույն է, դրա համար ել հարկավոր է զգույշ վարվել նրա հետ, փոշեսրսկումը պետք է կատարվի մեղմ յեղանակի ժամանակ, փոշին պետք է ցրել քամու ուղղությամբ և փոշեսրսկումից հետո ձեռները լվանալ:

VII ՄԱՆ-ԼՈՒՍԱՎՈՐՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆԻԲ

1. Անհրաժեշտ է մոբիլիզացիայի յենթարկել ամբողջ հասարակականությունը և հետաքրքրել մալյարիայի հարցերով: Տեղերը պետք է ընգրկեն բոլոր կուսակցական, պրոֆեսիոնալ, կոմյերիտական կազմակերպությունները, բոլոր դպրոցականները, կոլխոզնիներին և սովխոզնիներին՝ մալյարիայի դեմ պայքարի գործում:

2. Վորքան հնարավոր է պետք է հաճախակի կազմակերպել գեկուցումներ և ցուցադրումներ, վորպեսզի մալյարիայի վերաբերմամբ յեղած հետաքրքրությունը չնվազի:

3. Աշխատավոր մասսաների մասնակցությունը և լայն աջակցությունը պետք է կատարել մանր չորացնելու աշխատանքներ:

4. Տեղերում մալյարիայի դեմ պայքարող ակտիվից կազմակերպել և նրանց ոգնությունը անցկացնել դաշտային աշխատանքի ժամանակ բանվոր սովխոզնիկների, կոլխոզնիկների և բամբակային դաշտերի տրակտորիստների լայն խնդրացիա և բուժապաքարկումը:

VIII ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1. Բոլոր դիմող հիվանդները ցուցակագրվում են հատուկ վիճակագրական թերթերում, իսկ պրոֆիլակտիկ խնդիրացիայի յենթարկվածները համար կազմվում է ամսական տեղակագրեր:

2. Կատարված աշխատանքի մասին ամսական հաշվետվությունն ուղարկվում է Սոցիալիստական գիդիյենայի ինստիտուտի վիճակագրական բաժնին և Տրոպիկական ինստիտուտին, նյութական բնույթ ունեցող բոլոր հարցերով, պետք է դիմել Առողջկուստին, իսկ գիտական հարցերով, վերաբերվում վորոնք են հակամալյարիական աշխատանքներին — դիմել Տրոպիկական ինստիտուտին:

IV ԳԻՏԱ-ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆԻԲ

1. Կատարել ողբերկություն թարանական և հիդրոլոգիական դիտումներ, սխտեմատիկորեն կազմել ողբերկություն թարանական տեղեկագրեր, (ջերմություն, բարեխառնություն, ձյունի և անձրևի, տեղումը, բարոմետրային ճնշում, քամի): Այս աշխատանքը կապակցվում է տեղական ողբերկություն թարանական կայանների հետ, յենթ վերջիններն, ուր նրանք գտնվում են, համապատասխանում են մալյարիական կետի դիտումների սխտեմային (այն ժամանակ, յերբ մալյարիական կետը սեփական ողբերկություն թարանական կառուցվածքներ չունի):

2. Մեծացած մոծակների դիտումներ.

ա) սահմանել մոծակների ձմեռանոցների վրա սխտեմատիկ դիտումներ (ակտիվությունն և այլն), սրա համար ընտրել 3 վորոշակի վայրեր (բնակելի շենքի ներքնահարկ, արտաքնոց և այլն) և սահմանված ժամկետում դիտումներ կատարել ու արձանագրել այն:

բ) Ձմեռանոցներից հավաքել մոծակների դիտումները անոֆելիսի, կուլեկսի տարբեր տեսակները հայտնաբերելու համար, վորովհետև հաճախ և պատահում, վոր մոծակների վերջին տեսակները, թևավորման ժամանակամիջոցում ձմեռում են տվյալ վայրում:

գ) մոծակներին հարկավոր է վորսալ ձմեռանոցները թռչելու ժամանակ, դրա համար աշնանը ներքնահարկի, ախոռի կամ ուրիշ շենքերի պատուհաններում պետք է դնել մոծակավորող ու հատուկ իրեր, վորտեղ մոծակները կթռչեն ձմեռելու համար և այսպիսով հեշտությունը կարելի է վոջնացնել նրանց:

դ) կազմել մալյարիայի մոծակի շարժման տեղեկագիր (որագիր) այն շրջաններում, ուր մալյարիայի կետեր կան, գարնանը մոծակների ձմեռանոցից թռչելու մոմենտին՝ կազմակերպել վեր-

շինները վորս, որը 2 անգամ (առավոտյան ժամը 10-ին և յերեկոյան ժամը 6-ին), յերեք վորոշակի շենքերից (մառան, բնակելի շենքեր, արտաքնոց)։

Վարակած մոծակների տեսակը տարբերելու արդյունքներն արձանագրել որացույցի ձևով, տեսակները տարբերելու համար դժվարանալու դեպքում մոծակներն ուղարկել Տրոպիկական ինստիտուտ։ Այս աշխատանքը կատարել մինչև մոծակների թռիչքը դեպի ձմեռանոցները։

Մոծակների վրա բոլոր տեսակի դիտումները պարտադիր կերպով կատարել ողբերկոյթաբանական դիտումներին զուգընթաց, վորպեսզի ձմեռանոցների վրա կատարված տվյալները (միգրացիայի շարժման մոմենտները, չվելը, ձվերի դրումն, դեպի ձմեռանոցները թռչելը և այլն) հնարավոր լինի համեմատել ողբերկոյթաբանական կայանի տվյալների հետ։

3. Մոծակների վորսման հետ միաժամանակ, գարնան սկզբից մինչև ուշ աշուն ամեն օր (առավոտյան ժ. 10-ին և յերեկոյան ժամը 6-ին) նույն շենքերում վորսալ նաև ֆլեբոտոմուսներին, տեղավորելով հատուկ ապակե խողովակներում, յուրաքանչյուր տեսակի իրարից առանձնացնելով բամբակի տամպոնով։ Սեղոնը վերջանալուց հետո, բոլոր ֆլեբոտոմուսներն ուղարկել Տրոպիկական ինստիտուտին հետագա մշակման համար։

4. Մոծակի թռիչքի դիտումն։

Այս դիտումը, հնարավորության սահմաններում կատարել հենց առաջին իսկ պտղատվութունից, մինչև ձմեռվա գալը, մալյարիայի կետի հիդրոգրաֆիկայի քարտեզի համաձայն, շրջանի բոլոր ծանծաղուտային, ջուր ձծող վայրերում, միաժամանակ փորձական աշխատանքի հետ պետք կապված լինի թռիչքների դեմ ձեռնարկվելիք միջոցառումները (նավթասրսկում, փոշեսրսկում և այլն) և հայտնաբերվի լավրիցիդների՝ մալյարիայի մոծակի (անոֆելեսի) թռիչքի և վոշ մալյարիական մոծակի (կուկլեկսի) վրա արած ներգործությունը։

5. Ձմեռը, (նոյեմբեր—դեկտեմբեր—հունվար, փետրվար—մարտ) ազգաբնակչություն յենթարկել հետազոտության, վորոշելու մարդկանց որդանիզմում պարագիտների գոյությունը և վորոշելու փայծախի, ինչպես նաև լյարդերի վիճակը՝ հաջորդաբար տալով հ տազոտման ինդեքսի ցուցանիշները։ Բոլոր պարագիտ կրողներին (փայծախային, պարագիտային, Ռոուսի) դեռևս ձմռանը յենթարկել խինինի բժշկության։

ՎՈՐՈՇՈՒՄ № 1529

ԱՍԽՀ ԺՈՂԿՈՄԽՈՐՀԻ—17/IV

Բոնիֆիկատորների յեվ խինիզատորների պատասխան յեվ վերապատասխան ու նրանց նյութական կենցաղային վիճակի բարելավման մասին։

Ինկատի ունենալով բոնիֆիկատորների և խինիզատորների ինստիտուտի հատուկ կարևոր նշանակությունը ԱՍԽՀ-ում հակամալյարիական ձեռնարկումների լայն կիրառման գործում, նրանց պատրաստման, տեղերին ամրացնելու, կենցաղային և նյութական պայմանների բարելավման նպատակով՝ ԱՍԽՀ ԺՈՂՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՈՐԴԸ վորոշում է.—

1. Տրոպիկական կայանների և դիսպանսերների վրա դնել տեղերում բոնիֆիկատորների և խինիզատորների պատրաստման և վերապատրաստման գործը։

Առժողկոմատին—յենելով այդ կադրերի պահանջից, մալյարիայի կետերին տալ համապատասխան տեղերի բաշխում՝ ապահովելու նրանց բոնիֆիկատորների և խինիզատորների պատրաստելու համար անհրաժեշտ միջոցներով։

2. Պարտավորեցնել ռալգործկոմներին, կոլխոզմիութուններին բավարարել մալյարիայի կետերի պահանջն անհրաժեշտ թվով բոնիֆիկատորների և խինիզատորների առաջ քաշելով խորհրդային և կոլխոզային լավագույն ակտիվից։

3. Հանձնարարել Ադրբեյջանի «Կարմիր կինալուսին» ընկերության կի-ին, նախատեսել իր գծով խինիզատորների կադրերի պատրաստումը, այլ և վորպես խինիզատորների ողտագործել բուժ-քույրերի կուրսերն ավարտածներին։

4. Բոլոր խինիզատորների և բոնիֆիկատորներին հաշվել բժշկական աշխատողների կատեգորիայում, տալով նրանց այն բոլոր իրավունքները, առավելությունները և արտոնությունները, վոր ընդունված են գյուղակոն վայրերում աշխատող միջին բուժ-պերսոնալի համար։

5. Հանձնարարել Աշխոլկոմատին տարիֆիկացիոն պաշտոնների սխեմայում մտցնել բոնիֆիկատորների և խինիզատորների պաշտոնները և հաշվի առնելով աշխատանքի պայմանները, վորոշել նրանց տարիֆիկացիան։

6. Բոնիֆիկատորներին և խինիզատորներին մատակարարման տեսակետից 1932 թ. 4-րդ կվարտալից սկսած հավաստեցնել ինստիտուտի բանվորներին։

Մատոլկոմատին—այս նպատակով առանձնացնել հատուկ ֆոնդ և այդ մասին տեղերին տալ համապատասխան ցուցմունք։

4. Բռնիճիկատորների և խնդիրադրողների յերեխաներին դպրոցներում ընդունելու և թողակ տալու տեսակետից հավասարեցնել բանվորների յերեխաների հետ:

ԱՍԽՀ Ժողովարկական Կոմիտեների Խորհրդի նախագահ —
Դ ԲՈՒՆՅԱԹ-ՉԱՂԵ

ԱՍԽՀ Ժողովարկական Կոմիտեների Խորհրդի գործերի կառավար՝ Ն—
Ա. Ա. ՍԱԳԻՆՈՎ

ԿՈՐՈՇՈՒՄ

ԱՍԽՀ ԺԿԽ-ԻՆ ԿԻՅ ՄԱԼՅԱՐԻԱՅԻ ԿՈՄԻՏԵՍԻ

28 սոսոսիս—1922 թ.

Անդրյերկաթգծի 3-րդ ռայոնի սանբաժնի մայրախայի դեմ պայքարի մասին արված գեկուցման առթիվ.

Հսելով Անդրյերկաթուղու 3-րդ ռայոնի շրջ-սան-բաժնի ներկայացուցիչ՝ բժիշկ Ա. Ա. Մելիք-Փաշաեի ղեկուցումը Անդրյերկաթգծի Աղբակի շրջանի մայրախայի դեմ պայքարելու մասին, ԱՍԽՀ ԺԿԽ-ին կից Մայրախայի կոմիտեն վորոշում է.

1. Արձանագրել, վոր Անդրյերկաթուղին 3-րդ ռայոնի մայրախայի դեմ պայքարելու ասպարեզում բավականաչափ աշխատանք է տարել, վորի հետևանքով հրապարակի վրա կան մի շարք հաջողություններ, ծրագրված հակամայրախայական աշխատանքի, մայրախայի պայքարի գործում կուսակցական, տնտեսական և պրոֆեսիոնալ կազմակերպությունների ընդգրկումը, հակամայրախայական ձեռնարկումների ցանցը կազմակերպող մարմինների, պրոֆիլակտիկ միջոցառումների ուժեղացումը (ցանցավորված է 2500 լուսամուտ, ընդանուր առմամբ 10 կիլոմետր յերկաված և 2500 լուսամուտ, ընդանուր առմամբ) ծանծաղումների նավթուղի ջրատար առուների կառուցումը) ծանծաղումների նավթուղի ջրատար առուների ղեկավար խմբերի պրոֆիլակտիկայով ընդգրկումը:

2. Սրա հետ միասին շրջանային բաժնի հակամայրախայական աշխատանքների ասպարեզում, Մայրախայի կոմիտեն արձանագրում է յեղած հետևյալ բացերը.—

ա) Անդրյերկաթուղու ճան-սան-բաժնի թերապահատել է մայրախայի դեմ պայքարը յերկաթագծում ու անբավարար ուղղություններում և դարձրել այդ գործին (անբավարար ղեկավարություն, հակամայրախայական պայքարի համար աննշան գումարների հատկացում, թույլ մատակարարում և այլն).

բ) Անդրյերկաթուղու դիրեկցիան և 3-րդ ռայոնի վարչությունը հակամայրախայական միջոցառումները միանգամայն թերապահատել են.

գ) ճանապարհային տրանսպորտում կուսակցական, պրոֆեսիոնալ և հասարակական կազմակերպությունները հարկավոր ուղղություններում և մասնակցություն ցույց չեն տվել հակամայրախայական աշխատանքների գործին.

դ) հակամայրախայական աշխատանքի արդյունքի անբավարար եֆֆեկտիվությունը.

յե) մայրախայի դեմ պայքարի ասպարեզում թույլ սան-լուսավորչական աշխատանքը.

զ) մայրախայի դեմ պայքարելու և յերկաթուղու տերիտորիայից նրան ամբողջովին վանելու համար խոշոր հիդրոտեխնիկական միջոցառումների բացակայությունը.

3. հիշված թերությունների վերացնելու և յերկաթուղային տրանսպորտում հակամայրախայական պայքարում վճռական ընկումն առաջացնելու համար՝ Մայրախայի կոմիտեն առաջարկում է.

1. Ռայոնի շրջբաժնին — մի ամսում նախագծել լայն հակամայրախայական միջոցառումների 1933. թ. կոնկրետ ծրագիրը, ներգրավելով այդ ծրագրի վերամշակման և գործին տրանսպորտի բոլոր կուսակցական, տնտեսական, հասարակական կազմակերպություններին ու ապա այդ ծրագիրը տալ Մայրախայի կոմիտեյին վերանայելու:

2. Միաժամանակ ճան-սան-բաժնի ուղղությունը հրավիրել յերկրորդ հնգամյակում, յերկաթուղագծի սահմաններում, մայրախայի դեմ պայքարելու պլանի կազմելու անհրաժեշտություն վրա և ԱՍԽՀ ԺԿԽ-ին կից Մայրախայի կոմիտեյին այդ պլանի նախնական քննություն անհրաժեշտություն վրա:

3. Ագր. Մայրախայի կոմիտեյի ուղղությունը հրավիրել, Անդրյերկաթուղու դիրեկցիայի և նրա ճան-սան-բաժնի, հակամայրախայական պայքարի թերապահատման և թույլ ուղղություն դարձնելու փաստերի վրա:

4. Առաջարկել Անդրյերկաթուղու դիրեկցիային, 1932 թ. վերջացնել Գյանջա, Դալիմամեդլի, Ուշարի, Դիվիչի, Պաշմասի կայարանների շրջանում պլանով նախագծված հիդրոտեխնիկական աշխատանքները:

5. Առաջարկել Ագրյոտնտեսության, շրջլոտնտեսություններին, սովխոզներին — Ցեվլիս, Գյորան, Ուշար, Բյուրդամիր, Հաջիկաբուլ, Պաշմաս կայարանների շրջաններում կարգավորել վոտոգոդ ավելորդ ցանոդ և ջրատար ցանցը սովխոզներում, վորպեսզի վերացնել և ապահովել այդ շերտերի շրջապատը ճանճացումից:

6. Առաջարկել խճուղային ճանապարհների վարչության, լցնել ճանապարհների շինարարության ժամանակ ստեղծված բոլոր փոսերը — յերկաթուղու գծամասից յերկու կիլոմետր տարածություն վրա:

7. Հանձնարարել Բագխորհրդին, առաջարկել Բալաշարի գյուղխորհուրդին, լցնել չորացնել բոլոր ծանծաղումները, կարգավորել գյուղի շրջանում բոլոր առուները:

8. Առաջարկել Ազնեվթին 3-րդ ռայոնի վարչությանը բաց թողնել 30 տոնն վոչ-պարագինիտ մագուլթ:

9. Առաջարկել Անդրյերկաթգծի 3-րդ ռայոնի վարչությանը.—
ա) կարգավորել Բալաջարի յերկաթուղային ավանի շրջապատը՝ վոչնչացնելով բոլոր տեսակի ծանծուղումները:

բ) վերանորոգել բոլոր հակամալյարիական մոծակային վիշկաները՝ գծի ուղղությամբ:

գ) կարգավորել գծի վրա գտնված բոլոր ջրատու և ջուր լցնող կրաններն, այդ վայրերում—հողի ճահճացումից խուսափելու համար՝ կառուցել ջրատար առուներ:

դ) առաջարկել Անդրյերկաթուղու շինարարության բաժնին հուսման աղյուսի պատրաստման վայրերը կայարանամաս թվաններին տեղափոխել յերկու կիլոմետր, ավանների սահմաններում փոսեր առաջանալուց խուսափելու համար:

յե) առաջարկել ռայ-սան-բաժնին, 1932 թ. ընթացքում կիրառել պոլոգիզացիան և կայարանների բոլոր բնակարանների ցանցավորումը:

զ) կարգի բերել և մաքրել Աղստաֆա կայարանի ջրախան դակը:

ե) կազմակերպել տեխնիկական դիտումն բոլոր կայարանների տերիտորիաների՝ սահմանագծված շրջաններում՝ բոնիկիֆիկատորական մանր աշխատանքներ կատարելու նպատակով՝ ջուր հավաքող փոսերը վերացնելով:

ը) տեխնիկական դիտում կատարել գծի վրա լեղած յերկաթուղագծային տների ներքնահարկերում՝ ջրով լի ներքնատները յերևան հանելու և նրանց չորացնելու համար:

10. Առաջարկել Ազրջրատնտեսության արագացնել Ինչա-չայ գետի հունի տեղափոխելու աշխատանքները, այնպես, վորպեսզի այն ավարտվի 1932 թ-վի գեկտեմբեր ամսի վերջը, նմանապես իր աշխատանքների պլանի մեջ մտցնի Մուղանում յերկաթուղային գծի և նրա սահմանամերձ շրջաններն Արաքս գետի հեղեղումից պաշտպանելը:

11. Ռայսանբաժնին — ապահովել ճան-սան-բաժնի միջոցով Ինչա-չայ գետի հունը տեղափոխելու համար հատկացված 180,000 ռուբլու ստանալը:

ԱՍԽՀ ԺԿԿ-ին կից
Մալյարիայի Կոմիտեի նախագահ՝
Դ. ԲՈՒՆՅԱՆ-ԶԱՂԵ

ԱՍԽՀ ԺԿԿ-ին կից
Մալյարիայի Կոմիտեի քարտուղար
Ն. ՄԱՍՆԻՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ցերես

1. Առաջարան հեղինակի	3
2. Պայքարը մալյարիայի դեմ — սոցիալիստական առողջապահության հիմնական պրոբլեմն և	5
3. Մալյարիան, վորպես սոցիալական չարիք	7
4. Մալյարիան ԽՍՀՄ-ում	10
5. Մալյարիան Ադրբեջանում	12
6. Մալյարիայի դեմ պայքարելու մեթոդները	16
7. Դիմիական և բիոլոգիական միջոցներով մոծակի վոչնչացումը	21
8. Մալյարիայի դեմ յերկրորդ հնգամյակում մղվող պայքարի գլխավոր պլանը	25
9. Մալյարիայի բուժակայանների ցանցը	30
10. Խիսինի մատակարարումը	36
11. Մալյարիայի դեմ պայքարող կադրերը	38
12. Մալյարիայի դեմ պայքարող մարմինները	43
13. Մալյարիան տեղ չպիտք և ունենա սոցիալիստական հասարակության մեջ	46
14. Յեվլախի ռայոնում մալյարիան լիկվիդացիայի յենթարկելու պլանը	48

II ՆԱԼԵԼՎԱԾ

1. Ադրբեջանի Կ. Կ. (Բ) Կենտկոմի Բյուրոյի 19/IV 32 թ. վորոշումը մալյարիայի դեմ բամբակային ռայոններում պայքարելու մասին	56
2. Ադրբեջանի Ս. Խ. Հ. Ժողկոմիտեի 17/IV 32 թ-վի թվի № 588 վորոշումը՝ մալյարիայի դեմ ձեռնարկվելիք միջոցառումների մասին 32 թ-վի ընթացքում	58
3. Կատարման հանձնաժողովի 14/VIII 32 թ. վորոշումը Կենտկոմը Բյուրոյի 19/IV և Ժողկոմիտեի 17/IV 32 թ. վորոշումների կատարման մասին	62
4. Ժողկոմիտեի նախագահ ընկ. Բուհիաթ Զադեյի ճառի սղագրությունը — արտասանված Մալյարիայի դեմ պայքարող կոմիտեի պլենումում 28/III 1932 թ.	65

7486

300
800
1
2

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОЧЕВЕДЕНИЯ
Академии Наук
СССР



Nadir Məmədli

**İkinci beşillikdə Azərbaycanla malar-
lıja və onynla mybarəzə**

AZƏRNƏŞR • 1933